

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊՈ. ԴՈՒՐԵԱՆ

ԸՆԹԱՑՔ

Ի ԳՐՈՅ ԲԱՐԲԱՌ

Ա. Ա. Զ Ի Ն Տ Ա Ր Ի

Հ. Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ



ԵՐՈԽՎՈՂԻՄ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ

1932

Rev. Fr. Shako' Altemian

ԶԵԿՈՅՑ



Դասագրիս Աերկայ Բ. Տպագրութեան Ս. Արոռոյս
Տպարանին ի լոյս ընծայումը կը կատարենի հանուքեամբ
Մարի, կարա ժամանակի մէջ եօթներորդին ապառումը ի-
րաւամբ նկատելով ապացոյց՝ Հայ վարժարաններու մէջ
գրաբարի կարեւորութեան ըմբռնումին եւ նոյն ատեն «Ըն-
թացք»ին դիւրուսոյց եւ գործնական մերուին զնահատու-
թեան:

Օգսակար կը համարինի այս տեղ կրկնել հրահանգա-
կան մասը այն Զեկոյցին զոր հոգելոյս մեծանուն Հեղի-
նակը դրած էր իր սրբագրութիւններով եւ փոփոխութիւն-
ներով կատարած իր այդ վեցշին հրատարակութեան սկիզբը:

Դասագիրիս Ս. մասին Ս. գրական հատուածները
եւ փոփրիկ ֆերրուածները Համաձայնութեան կանոններով
բացատրուած են, ֆերականական այդ գիտելիքները բաւա-
կան համարելով Ս. Տարիին համար: Իսկ Բ. մասին հատ-
ուածները, արակ կամ ուսանաւոր, նոր բարգմանութիւն-
ներ կամ գրուածներ են, ինչպէս յայտնի է. եւ ընտրուած
են նիւթի պէսպիտութեամբ առելի համելի ընելու համար
գրաբարին ուսումը:

Աւելորդ է ըսել՝ թէ ուսուցիչը այդ ընթերցուածնե-
րը բարգմանել տալու ատեն՝ իր հարցումները պիտի կրնայ
շարունակել, աշակերտին նախապէս տեսած ֆերականական
կանոններուն համաձայն:



Խ ԵԽԾԱՑԱԿ
ՅԱԿՈՒՅՑ ԱՇԸԳԵԱՆ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ
(1819-1887)

Հ Ա Թ Ա Ց Ք

Ի ԳՐՈՅ ԲԱՐԲԱՌ



Ա

ԹԶԵՆԻՆ ԱՆՊՏՈՒԽՆ

Խնդրել, քնոռել
Առնել, ընել
Յամէ ևս, տարիէ ճը

Հնդէ՞ր, ի՞նչ՞-
Հատանել, կորել
Արկանել աղբ, աղբ ներել

Թզենի մի էր ուրումն սնկեալ¹⁾ (տնկեալ
էր ուրումն) յայգւոջ իւրում, և եկն խնդրել
պտուղ ի նմանէ և ոչ եզիտ։ Ասէ ցայգեզործն։
ահա երեք ամք են՝ յորմէ հետէ դամ խնդրել
պտուղ ի թզենւոջդ՝ և ոչ գտանեմ, արդ կտեա

1) Գրաբարի մէջ տէր բային, այսինքն գործողութեան տէրը,
ուղղական է բոլոր դիմաւոր բայերուն քով, իսկ սեռ. հոլո-
վով կը գրուի անցեալ գերբայներու, նաև յարակատար՝
գերակատար ևայլն ժամանակներու եզ. գ. դէմքին քով. ըստ
այսմ տնկեալ էր ուրումն, խօսքին մէջ սեռական տէրբայի
է ուրումնը (ուղղ. ոմն).

Օրինակ. Խմ եթէ չէր եկեալ (եթէ ես եկած չըլլայի).
Չե իցէ հաւու խօսեալ (դեռ աքաղաղը չխօսած):

զդա, լնդէ՞ր եւ զերկիրդ խափանէ¹⁾: Նա պատասխանի ետ և ասէ . Տէր, թող զդա այս ամ ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից և արկից աղք, թերևս արասցէ պտուղ . ապա թէ ոչ յամէ ևս հատցես զդա :

Դ.Ա.Լ. Փ. 6—7



Բ

ՆԱԽԱՆՉ ՏԱՆ ՏԵԱՌՆ

Վաճառել, ծախել	Հատավաճառ, ըստայակոնի
Արջառ, եղ, իւզ	Վաճառ, առաստանոր
Լումայափոխ, սրահ իւրագ	Տուն վաճառի, շուկայ

Եւ եզիտ Յիսուս ի տաճարին զի վաճառէին զարջառս և զոչխարս և զաղաւնիս, և (եզիտ)

¹⁾ Այն բառերը՝ որ խօսքի մը ամբողջութեանը կը ծառայեն՝ խնդիր կ'ըսուին, և երկու տեսակի կը բաժնուին . սեռի խնդիր և բնութեան խնդիր:

Սեռի խնդիր կ'ըսուի այն հայցական հոլովը՝ որ թէ՛ որոշեալ ըլլայ և թէ՛ անորոշ, այսինքն թէ զով և թէ առանց զի, ներգործական բայի տէրբայիին ըրածը կը ցուցնէ: Օր. կտրեազդա . . . զերկիրդ խափանէ, խօսքին մէջ սեռի խնդիր են զդա և զերկիրդ բառերը, վասն զի այգեգործին կտրելիքը, և ծառին խափանածը գործողութեան առարկաներ են: Իսկ բընութեան խնդիր կ'ըլլայ՝ բացի ուղղականէն՝ ամէն հոլովերով, որոնք գործողութեան մը այլ և այլ պարագաները կը ճշդեն:

(Պէտք է ուշադրութիւն դարձնել սոյն դասին մէկէ աւելի անորոշ հայցական սեռի խնդիրներուն, (թզենի, պտուղ, աղք):

զլումայափոխսն՝ որ նստէին : Եւ արար խարազան չուանեայ, և եհան զամենեսին ի տաճարէն, զոչխարսն և զարջառս . և զպինձաւ հաւալվանացն ցրուեաց¹⁾ և զսեղանսն կործանեաց . և որ (անոնք որ) զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա . Առէք զայդ ասի²⁾, և մի՛ առնէք զտուն Հօր իմոյ տուն վաճառի: Ապա յիշեցին աշակերտքն նորա՝ թէ զրեալ է . Նախանձ տան քո կերիցէ զիս :

Յովի. Բ. 14—18



Գ

Ա.Ռ.Ա.ԶԻՆՆ Ի ՊԱ.ՑՈՒՒԻՐԱՆՄ

Մատչիլ (մատուցեալ), ճ: -	Լսել, ճակի ընել
Դպիր, իարդացող [տէնալ]	Բարւոք, առէկ
Գոլ, ըլլաւ	Ոչ գոյ, չկայ

¹⁾ Յատկացուցիչ կ'ըսուի, այն սեռական հոլովը՝ որ բանի մը որո՛ւն վերաբերիլը կը ցուցնէ: Օր. Զպինձաւ հատվանա ացն ցրուեաց: Որո՞նց պղինձները ցրուեց՝ հատավաճառներուն . ուստի հատվանա ացն յատկացուցիչ է, վասնզի պղինձներուն որո՞ւն ըլլաւը ցուցուց: Բատ այսմ վերլուծել, «զտուն Հօր իմոյ» — «աշակերտքն նորա» — «նախանձ տան քո» խօսքերն ալ: Յատկացուցիչին վերաբերեալ բառը յատկացեալ կը կոչուի:

²⁾ Ասի, այսի, անի բառերը երբոր բայի կը վերաբերին մակրայ կ'ըլլան և կը նշանակեն ասկէ, անկէ, անիէ: Իսկ ածական են երբ եղակի կամ յոգնակի բացառական հոլովի մը հետ գործածուին: Օրինակներ, Յաշխարհէ ասի (այս աշխարհէն): յօրէ անսի (այն օրէն): Ի խաչէ այսի (այդ խաչէն):

Մատուցեալ մի ոմն ի դպրացն¹⁾ լսէր Աա-
դուկեցւոց մինչ վիճէինն . իբրև ետես թէ բար-
ւոք ետ նոցա Յիսուս զպատասխանին , եհարց
ցնա և ասէ . Ո՞ր պատուիրան է առաջին : Եւ Յի-
սուս ասէ ցնա . Առաջին քան զամենայն (ամե-
նէն առաջինը) , Լուր Իսրայէլ , Տէր Աստուած մեր՝
Տէր մի է²⁾ . և սիրեսցես զՏէր Աստուած քո յա-
մենայն սրտէ քումմէ , և յամենայն յտնձնէ քում-
մէ , և յամենայն մտաց քոց , և յամենայն զօրու-
թենէ քումմէ . այս է առաջին պատուիրան : Եւ
Երկրորդն նման սմին³⁾ . Սիրեսցես զընկեր քո
իբրև զանձն քո . մեծ քան զսոսա ա՛յլ (ուրիշ)
պատուիրան ոչ զոյ :

Մարկ . ՓԲ . 28—32

1) Թէ՛ որոշեալ թուական ածականները և թէ անորոշ
ածականները (ըստ ոմանց մասնական կամ միջակ անուններ) բացառական հոլով բնութեան խնդիր կ'առնեն : Օր . իւրաքանչիւր
ո՛վ ի ձէնջ — ոմանք ի նոցանէ — ոչ եմ իբրև զոյլս ի մարդկանէ :

2) Ահա պարզ նախազառւթիւն մը էական բայով , որուն
տէրբայիին ի՞նչ ըլլալը ցուցնող բառը կը կոչուի սուրոգելի—
Տէրը մէկ է : — Ստորոգելին կրնայ թէ ածական և թէ գոյական
ըլլալ : — Ըստ այսմ վերլուծել . «ո՞ր պատուիրան է առաջին» ,
— «ա՛յլ է առաջին պատուիրան» խօսքերը :

3) Խնդիր առնող կամ խնդրառու բառերն են . 1. Բայեր՝ «ը
դանազան հոլովով խնդիր կրնան առնել . 2. Նախադրութիւն-
ները՝ «ը իրենց յատուկ եղած հոլովով խնդիր կ'առնեն . 3.
Գոյալանները՝ «ըոնց առած սեռական խնդիրին յատկացու-
ցիչ կ'ըսենք . 4. Ածականները՝ «ըոնք իրենց նշանակութեան
համեմատ խնդիր կը պահանջեն ինչպէս վերի խօսքին մէջ
նման ածականը :

Ըստ այսմ պէտք է որոշել հետեւեալ խօսքերուն մէջ
խնդրառու բառերուն խնդիրները . — «խորհուրդ արարին ամե-
նայն քահանայապետքն և ծերե ժողովրդեանն վասն Յիսուսի ,
սպանանել զնա» . — «արժանի է մշակն կերակրոյ իւրում :

Դ

ԱՌ ՏԻՄ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Տի , հասակ (յոգն .) տիք , [տիոց Հանգոյն , նաև [տիոց Գքնաղ , գեղեցիկ [դանացոն Գալրնային , (իբր գոյ.) գարուն Ամի , ամի , ապրուե պարէ	Վերակենցաղ , հորեն իւն- չանգոյն , նաև [տիոց Զքնաղ , գեղեցիկ [դանացոն Գալրնային , (իբր գոյ.) գարուն Ամի , ամի , ապրուե պարէ
---	---

Այո՛ , հանգոյն
Առոյգդ հասակ
է գարնայնոյն ,
Ո՛վ պատանեակ¹⁾ :
Այլ նա ծնանի
Վերակենցաղ
Ամի ամի
Նոր և չքնաղ :
Իսկ փախըստեայ
Քոյդ մանկութիւն
Ոչ ևս դառնայ
Ի տիս ի նոյն²⁾ :



1) Կարդա՛ այսպէս . Այո՛ , ո՛վ պատանեակ , առոյգ հա-
սակ քո հանգոյն է գարնայնոյ : Վերի խօսքին մէջ հանգոյն
ածականին գարնայնոյն վերջահոլով տրական խնդիրը հեռու
գրուած է :

2) Ածականը երբեմն գոյականին նախդիրը ինքն ա՛լ կ'առ-
նէ՝ գոյականէն թէ՛ առաջ և թէ՛ ետև դրուելու ատեն : Այս
խօսքին մէջ նախդիրը կրկնուած է թէ՛ գոյականին և թէ՛
ածականին վրայ : Արձակ ոճով պիտի ըսէինք՝ ի նոյն տիս :

Ե

ՊԱՏԱՆԻՆ ՊԱՏՈՒԻՒՐԱՆԱՊԱՀ

ի մանկութենէ իմմէ, ուշայ | Ինչք, ընչլց, սրացուած+
ջի՞, ի՞ւ-, ի՞ւ [հաստիւ] | Զկնի իմ, ի՞մ եպեւէն
ի՞ւ իւիք, ի՞ւ բանով | Բազում, շա-

եթէ կամիս կատարեալ լինել, ե՛րթ վաճառեա
զինչս քո և տուր աղքատաց, և ունիցիս զանձս
յերկինս, և եկ զկնի իմ: Իբրև լուաւ պատանին
զբանն գնաց ՏՐՍՄԵԱԼ¹⁾, զի ունէր սացուածս
բազումս²⁾: Մատր. ԺԹ. 16—23

Եւ ահա մատուցեալ ոմն առ Յիսուս¹⁾ ասէ.
Վարդապետ բարի, զի՞նչ բարի գործեցից՝ զի ըն-
դունիցիմ զկեանսն յաւիտենականս: Եւ նա ասէ
ցնա. Զի՞ հարցանես զիս զբարւոյ²⁾, մի է բարի³⁾.
Եթէ կամիս ի կեանսն յաւիտենականս մտանել,
պահեա զպատուիրանսն: Ասէ ցնա. Զո՞րս (ո՞ր
պատուիրանները): Ասէ ցնա Յիսուս. Զմի սպանաւ-
ներն՝ և մի չնար, և մի գողանար, և մի սուտ վր-
կայեր, պատուեա զհայր քո և զմայր, և սիրեսցես
զընկեր քո իբրև զանձն քո⁴⁾: Ասէ ցնա պատանին.
Զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ,
արդ ի՞ւ իւիմ պակաս⁵⁾ իցեմ: Ասէ ցնա Յիսուս.

¹⁾ Նախդրիւ տրականի կամ ի ով անորոշ հայցականի ի
նախդրին տեղ առ նախդիրը կը գործածուի ընդհանրապէս
երբ խօսքը չնչաւորի համար է. ուստի չըսուիր՝ մտուցեալ
ոմն ի Յիսուս:

²⁾ Զբարւոյ. — զ նախդիրով բացառականը (առանց ի ի) կը
նշանակէ համար, մասին, վրայով:

³⁾ Տես 8 էջ 2 կանոն:

⁴⁾ Այս բանաձեռւած պատուէրները սեռի խնդիրներ են
պահեա կամ պահեցես լուելեայն իմացուած բային:

⁵⁾ Պակաս ածականն իր խնդիրը գործիական հոլով առ-
նելով իցեմ բային լուելեայն իմացուող ես տէր բայիին ըս-

Զ

ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱԿՈՐՆ

Ելանել, Երեւալ (Դեղէ բարձր) Ամբառնալ, Գեշշել Մեկուսի, Ֆէ ի՞ով [Դեղ ճը] Կոծել զկուրծո, Խուշուշել- Յազօթս կալ, առնիւ ընել Բաւել, Օբել (Դեղ ճը) Հել
--

Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս,
մին փարիսեցի և միւսն մաքսաւոր: Փարիսե-
ցին կայր մեկուսի, և զայս առանձինն աղօթս մա-
տուցանէր. Աստուած իմ, զոհանամ զլէն³⁾, զի


¹⁾ Կատարեալ, ՏՐՍՄԵԱԼ, և առանց ոկւ իբրև ածական գոր-
ծածուող բոլոր անցեալ զերբարները սուրպելի կամ մոկրայ
կրնան նկատուիլ քերականական վերլուծութիւն համաձայն:

²⁾ Ամբողջ հոլովել ստացուածք բազուժքուր:

³⁾ Գոհանամ զլէն (Հնորհակալ հմ քեզ): Գոհանամ բայը իր
խնդիրը զով առանց ի ի բացառական կը պահանջէ:

ոչ եմ իբրեւ զայլս¹⁾ ի մարդկանէ, զյափշտակողս և զանիրաւս և զշունս, կամ իբրև զայս մաքսաւոր. այլ պահեմ երկիցս ի շաբաթու, և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց, եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կամէր և ոչ զաշսն ընդ երկինս²⁾ ամբառնալ, այլ կոծէր զկուրծս իւր, և ասէր. Աստուած իմ, քաւեազիս զմեղաւորս. ասեմ ձեզ, Եջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա³⁾:

Դուկ. Ժ. 9—14



Է

ԵՐԿՈՒ ԼՈՒՄԱՅԻ ԿՆՈՉՆ ԱՅՐԻՈՅ

Զիա՞րդ, Է՞նչպէս
Տառապեալ, իւղձ, առուար

Նաքարակիտ, երկու լուսայ
կեանք, ինչւ [արժող սրախ]

1) Իբրեւ՝ նախադրութիւն է երբ հայցական խնդիր առնէ և պէս նշանակէ, իբրեւ զայլս (ուրիշներու պէս). իսկ մակրայ (կամ ըստ ոմանց շաղկապ) է երբ նշանակած ատեն. Օր. իբրեւ տեսին զաստղն . . . և իբրեւ մտին ի տունն, և այլն:

2) Ընդ նախադրութիւնը հոս անորոշ հայցական խնդրով տարածութիւն կը նշանակէ. Ընդ երկինս ամբառնալ (դէպի երկինք բարձրացնել):

3) Քան նախադրութիւնը ընդհանրապէս հայցական հոսվ խնդիր կ'առնէ և իրմէ առաջ կամ ետքը դրուած ածական բառի մը կը վերաբերի: Օր. «Եջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա» խօսքին մէջ քան զնա խնդիրն է ածականաբար գործածուած արդարացեալին (անկէ աւելի արդարացած): (Համեմատէ 11 էջ 1 կանոն):

Արկանել (պղինձ), (սոսէ) Շատ, աւելի Յիւն
Մեծատուն, հարուստ | Ամէն ասեմ, ծշարեւ է՛ւ-
սեմ (իբրև երդումի ձե):
Գոյիւ չափ, բուշը ունեցածը

Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին¹⁾, տեսանէր զիա՞րդ ժողովուրդն արկանէր պղինձ²⁾ ի գանձանակն. և բազում մեծատունք արկին բազում ինչ: Եկն այրի մի և արկ երկուս լումայս³⁾, որ է նաքարակիտ մի: Եւ կոչեալ առ ինքն զաշակերտսն իւր, ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, զի այրին այն տառապեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին ի գանձանակին⁴⁾: Քանզի ամենեքին

1) Ընդդէմ նախադրութիւնը սեռական հոլովով կը պահանջէ իր խնդիրը:

2) Անորոշ հայցականը եզակի ձեին մէջ ուղղականի յար և նման ըլլալով՝ պէտք չէ իրարու հետ շփոթել զանոնք, ուշ դնելով իւրաքանչիւրին վարած պաշտօնին. (Տես 6 էջ 1 կանոն):

3) Ամբողջ հոլովել «երկու լումայք»:

4) Շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին ի գանձանակն. — Որ (=որք) յարաբերական դերանունը հոս իր առջեւն դրուած զամենեսեանը կը յարաբերէ, և իր յարաբերած բառը յարաբերեալ կը կոչուի: Յարաբերեալը եթէ յոդնակի ըլլայ՝ յարաբերական դերանունն ալ յոդնակի կը դրուի: Պէտք է գիտնալ սակայն՝ թէ յարաբերական դերանուան եզակի ուղղականն ու հայցականը՝ յոդնակի ուղղականի և հայցականի տեղ ալ կրնան գործածուիլ: Քան զամենեսեան խնդիր է տասին (Համեմատէ 12 էջ 3 կանոն):

յաւելորդաց իւրեանց արկին, այլ նա ի չքաւու-
րութենէ իւրմէ զամենայն ինչ զոր ունէր արկ,
գոյիւ չափ¹⁾ զկեանս իւր։

Մարկ. ՓԲ. 41—44



Ը

ԳՈՀԱՒԻԹԻԻՆ Ի ՎԵՐՋ ՏԱՐԻՈՒՅ

Է, (յոզն.) ՏՔ, ԷԼԻ, աբարած
Լրումն, ամբողջունիւն
Տրիտուր, էնիարէն որուած

Պսակ,	ՀՅԱՆ (պարէէ)
Մինչ իսպառ, ժնշւ վերջը	
Համայն, բալը	

Դու, ՏՔՌ, դու զայս ամ²⁾
Ի լրումն հասուցեր.
Բզքէն գոհանամ,
Աստուած իմ և ՏՔՌ։
Քեւ էից համայն
Պահպանին տեսակի³⁾,

1) Չափ նախազրութիւնը գործիական հոլով խնդիր կը
պահանջէ և միշտ իր խնդիրէն վերջը կը դրուի։ Օր. Մահու
չափ կուռեցաք (մեռնելու չափ կուռեցանք)։ Այսպէս՝ իրենց
խնդիրէն վերջը կը դրուին կոյս (կողմ) և հետէ (ի վեր) նա-
խադրութիւններն ալ. Յարեւելս կոյս (դէպի արեւելեան
կողմը)։ Ի սկզբանէ հետէ (սկիզբէն ի վեր)։

2) Արձակ ոռով պիտի ըսէինք՝ զամս զայս, որ սեռի խըն-
դիրն է հասուցեր բային։

3) Տեսակք համայն էից կամ համայն տեսակք էից։ (Տես
7 էջ 1 կանոն)։

Տարւոյ բաղցրութեան¹⁾
Քեւ օրհնի պըսակ։
Այլ նոցին²⁾ չետուր
Ճանաչել ըզքեզ.
Իսկ յինէն տրիտուր³⁾
Միայն սէր խնդրես։
Զըքնա՛ղ և վըսեմ
Եւ ձրի տուրեառ։
Ըղքեզ, Տէր, օրհնեմ
Այժմ և մինչ ի սպառ։



Ծ

ԲԵՐԿԵԼ Ի ՇԱԲԱԹՈՒԻ

Անկեալ դնիւ, ուառէէւ
Ողջ լինել, առողջանաւ
Ոչ զոք ունիմ, մէկը շանիմ
Յուզիմ, շրժէւ

Մահիճք, ճաց, անկողին	
Յառնել (կտր. յարեաւ, հրմյ. արի՛) որդ ելւէւ	
Ամբոխ, բաշճունիւն	

1) Երբեմն գոյական բառ մը յատկացուցիչի ձեռվ կը
դրուի ուրիշ գոյական բառի մը քով և ածականի պաշտօն
կը վարէ։ Այդ բառերը ընդհանրապէս ուրիւն վերջաւորող գո-
յականներն են։ Այսպէս Տարւոյ բաղցրութեան կը թարգմանուի
(քաղցը տարիի)։ Օր. Տնտեսն անիրաւութեան (անիրաւ-
տնտեսը), Խորհուրդ չարութեան (չար մտածում), ևայլն։

2) Հոս նոցին (=նոցա) դերանունը էից բառին տեղ դրուած
է՝ զայն նորէն չկրկնելու համար. — Զշփոթել բնաւ նոյն և
նախ հոլովման ձեւերը։

3) Ստորոգելին միայն էական բայով կազմուած նախադա-
սութեան մը տէրբայիին ի՞նչ ըլլալը ցուցնող բառը չէ (հմմտ.
8 էջ 2 կանոն)։ Ստորոգելի է նաև ներգործական բայի մը սեռի
խնդրին վերաբերող և անոր ո՞ր և է հանգամանքը ցուցնող
բառը, որ իբրեւով կը պարզաբանուի։ Այս խօսքին մէջ տրիտուր
բառը ստորոգելին է սէր բառին, «միայն սէր խնդրես յինէն
(իբրէ) տրիտուր»։

Եւ էր անդ այր մի՞ որոյ երեսուն և ութ ամ
էր ի հիւանդութեան իւրում (որ երեսուն և ութ
տարիէ հիւանդ էր). զնա իրրե ետես Յիսուս՝ զի
անկեալ դնէր, և զիտաց թէ բազում ժամանակք
են այնուհետեւ, ասէ ցնա¹⁾). Կամի՞ս ողջ լինել:
Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէր, ոչ զոք ու-
նիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս
յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան
զիս յառաջազոյն²⁾ իշանէ: Ասէ ցնա Յիսուս.
Արի՛ առ զմահիճս քո և զնա: Եւ ողջացաւ այրն,
և յարեաւ, առ զմահիճս իւր և շըլէր. և էր շաբաթ
յաւուրն յայնմիկ: Ասեն հրեայքն ցբժշկեալն. շա-
բաթ է. և ո՛չ արժան էր առնուլ ֆեզ զմահիճս
քո³⁾: Պատասխանի ետ նոցա և ասէ. Որ⁴⁾ բժշ-
կեացն զիս, նա ասաց ցիս՝ ա՛ռ զմահիճս քո և
զնա: Հարցին զնա և ասեն. Ո՞վ է այրն՝ որ ասաց

1) Ասեմ, ասէ. հարցանեմ բայերը շատ անգամ ցնախդիրով
անորոշ հայցական հորով բնութեան խնդիր կ'առնեն:

2) (Տես 12 էջ 3 կանոն):

3) Երբ երկու նախադասութիւն զի կամ թէ շաղկապով
կազուած ըլլան, կրնանք այն շաղկապները զանց ընել, և
երկրորդ նախադասութեան բայը ամենեւոյի փոխելով՝ տէր
բային արական դնել: Օր. Ոչ էր արժան առնուլ ֆեզ զմահիճս
քո, փոխանակ ըսելու: Ոչ էր արժան զի առնուիր դու զմա-
հիճս քո: Օրինակներ. Կ'ըսուի: Ոչ կամիմք բազաւուել դմա,
փոխանակ ըսելու: Ոչ կամիմք զի բազաւուեցէ դա. — Աղա-
չեցաք չելանել նմա յերաւազէմ. փոխանակ ըսելու: Աղաչե-
ցաք զի մի երանցէ նու յերաւազէմ:

4) Երբ որ յարարերական դերանունը խօսքի մը սկիզբ
զբուի լուսեայն իր առնենէն կ'առնենայ իր յարարերակալը,
այսինքն այն. նու, կամ այնոնիկ, նոտա: Ծնդհանրապէս այդ
պարագային ու էն ետես եկող բարին կամ բային վրայ. ինչ-
պէս նոս, ն դիրը կ'առելցաւի. ո, ո դիմորոշ յօդերն ալ նոյն
դերը կը կատարեն բատ յարարութեան:

ցքեզ՝ ա՛ռ զմահիճս քո և շըլէրաց: Եւ բժշկեալն ոչ
զիտէր թէ ո՛վ իցէ, քանզի Յիսուս խոյս ետ վասն
ամբոխին ի տեղուցէ անիշ⁵⁾. Յովի. Ե. 5—14



Ճ

ԿՈՒՍԱՆԻՔ ԻՄԱՍՑՈՒԽԻՔ ԵՒ ՅԻՄԱՐՔ

Բառնալ, առնել (վրան, հե-
Յամել, առշանալ [ուը])
Ի քուն մտանել, գնանալ

Եղեւ բարբառ, յայն իշ-
Նիրհել, բուժել [բուժու-
կազմել, բուժուել]
Գիտել, ճանշալ

Նմանեացի արքայութիւն երկնից տասն կու-
սանաց. որոց առեալ զլապտես իւրեանց ելին²⁾
ընդ առաջ փեսային և հարսին: Հինգին ի նոցանէ
յիմարք էլին³⁾, և հինգն՝ իմաստունք: Յիմարքն ա-

1) (Տես 7 էջ 2 կանոն):

2) Երբ եւ շաղկապով կազուած երկու բայ մի և նոյն ակր-
բային ունենան, կրնայ եւ շաղկապը զ-նց առնուիլ, և ա-
ռաջին բայը անցեաւ գերբայի փոխուիլ. այն առնա ակր-
բային սեռական կը զբուի: Օր. Առաջ առնա զլապտերս իւր-
եանց ելին ընդ առաջ փեսային և հարսին. փոխանակ բա-
լու: Ուժ առին զլապտերս իւրեանց եւ ելին բեդ առաջ փե-
սային և հարսին:

3) (Համեմատէ 8 էջ 1 և 2 կանոնները⁴⁾)

ոին զլապտերսն , և ձէթ ընդ իւրեանս¹⁾ ոչ բարձին . իսկ իմաստունքն առին ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց : Եւ ի յամել փեսային²⁾ նիրհեցին ամենեքեան և ի քուն մտին : Եւ ի մէջ զիշերի եղեւ բարբառ . Ահա փեսայ զայ , արիք ընդ առաջ նորա : Յայնժամ յարեան ամենայն կուսանք և կազմեցին զլապտերս իւրեանց : Ասեն յիմարք ցիմաստունսն . Տուք մեղ յիւղոյդ ձերմէ , զի ահա շիջանին լապտերքս մեր : Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն . Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական³⁾ . այլ երբայի ի վաճառականս⁴⁾ , և գնեսչիք ձեզ : Իբրև նոքա գնացին գնել , ելն փե-

1) Ընդ նախդիրը յոգնակիի մէջ անորոշ հայցականով նետ կը նշանակէ : Օր . ընդ լավտերս , ընդ իմաստուն կուսանսն , և այլն :

2) Ի յամել փեսային (փեսին ուշանալուն ատենը . կամ՝ երբ փեսան ուշացաւ) : Փեսային բառը թէ՛ յատկացուցիչ և թէ՛ տէրբայի կրնայ ըլլալ ի յամել աներեւոյթին : Յատկացուցիչ է երբ աներեւոյթը գոյականաբար գործածուած համարինք , իսկ սեռական տէրբայի է՝ եթէ ի ով աներեւոյթը դիմաւոր նկատենք = իբրև յամեաց փեսայն . — Այս պաշտօնով կը ճանչցուին այն սեռականները որ կը գտնուին ի նախդիրով աներեւոյթներու հետ :

3) Այս խօսքին մէջ լոելեայն կ'իմացուի այն գերանունը իւղ բառին տեղ : — Բաւական ածականը իր խնդիրները մեզ և ձեզ վերջահոլով տրական առած է , և ինք ստորոգելին է լը-ռելեայն իմացուող այն տէրբայիին :

4) Հոս զարտուղութիւն մը կայ ընդհանուր կանոնէն — փոխանակ ըսելու՝ առ վաճառականս (Տես 10 էջ 1 կանոն) :

սայն , և պատրաստքն մտին ընդ նմա¹⁾ ի հարսանիսն , և փակեցաւ գուռնն . Յետոյ զան և այլ կուսանքն և ասեն . Տէր , Տէր , բաց մեզ : Նա պատասխանի ետ և ասէ . Ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ զիտեմ զձեզ :

Մատք . Ին . 1—13

ԺԱ

ՄԻՌ ԲԱՐՁՐՆՅԻՒԹԻ ԼԻՆԵԼ Ի ԿՈՉՈՒԽԱ

Բարձրնտիր լինել , առաջին Բարձր , նորաբան [ուղարկութել]	Ունել , բռնել Ի զեր մատիր , վեր հրամէ Կոչնական , կուշանութէ իննուած
---	---

Ասաց Յիսուս և առ կոչնականս²⁾ առակմի , հայեցեալ եթէ զիա՞րդ բարձրնիր լինէին³⁾ . Ասէ ցնոսա . Յորժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս կամ ի կոչունս , մի՛ բազմիցիս յառաջին բարձին .

1) Ընդ նախագրութիւնը եղակի վերջահոլով տրականով նետ կը նշանակէ : Օրինակներ . ընդ բեզ . ընդ Յիսուսի . ընդ Ասուծոյ . և այլն :

2) Ասեմ բային խնդրառութիւնը տարբեր ձեռվ է հոս . (Համեմատէ 16 էջ 1 կանոն) :

3) Բարձրնիր բառն հոս ստորոգելի է , ու լոելեայն իմացուող կոչնականք տէրբայիին կը վերաբերի : (Համեմատէ 8 էջ 2 կանոն) :

գուցէ¹⁾ պատուականագոյն և բան զինք²⁾ իցէ կոչեցեալ ինմանէ. և եկեալ՝ որ զինքն և զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ, տուր սմա տեղի. և ապա սկըսանիցիս ամօթով զյետին տեղին ունել։ Այլ յորժամ կոչիցիս, երթիջիր բազմիջիր ի յետին տեղւոյ. զի յորժամ զայցէ որ կոչեացն³⁾ զքեզ, ասիցէ ցքեզ. Բարեկամ ի վեր մատիր. յայնժամ եղիցին քեզ փառք (պիտի փառաւորուիս) առաջի բարձակցացն քոց։ Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի։ Դուկ. ԺԴ. 7—11



ԺԲ

ՎԱՍՆ ԸՆՏՐԵԼՈՅ ԶՊԱՅՄԱՆ ԿԵՆԱՅ

Ռահ, համբայ,
Ածել, ունիւ, բերել
Պայման, վիճակ

Լցցին (լնուլ, կր.), կա- Յաւէտ, մշտ [մարտուլ Փրկաւէտ, քրիուլ

1) Գուցէ մակրայ է երբ չըլլայ որ կամ թերեւս նշանակէ իսկ երբ նշանակէ կայ՝ ըլլայ. Գոյ էական բային ստորադասական եղանակի եղակի գ. դէմքն է։ Օր. Ոչ գիտէր թէ զուցէ ոք վրէժինդիր յերկինս (չէր գիտեր թէ երկնքի մէջ վրէժինդիր մէկը կայ)։

2) Որոշել բան զինք խնդիրին խնդրառու բառը։

3) Հոս կոչեաց բային և քիչ մը վերը զինք դերանունին ծայրը դրուած ն յաւելուածական գիրին բացատրութիւնը տալ. (Տես 16 էջ 5 կանոն)։

Փրկիչ իմ Յիսուս,
Զիմասութեան Ին
Ծագեա՛ յիս ըզլոյս¹⁾,
Ընսրել ինձ ըզոահ²⁾
Որ ուղիղ³⁾ ի կեանս
Ածէ զիս յանմահ⁴⁾։
Եւ տուր ի կոչման
Յոր զիսըն կոչես՝
Կալ ինձ անսասան⁵⁾,
Զի լըցցին յաւէտ
Յիս յամենայնի
Կամք քո փըրկաւէտ։



1) Այսպէս կարդա՛. Ծագեա յիս զիոյս իմասութեան Բա՛ Խմասութեան յատկացուցիչը իր զլոյս յատկացեալէն առաջ դրուած ըլլալով՝ անոր զ նախդիրը ինք ալ առած է. վասնզի քերականական կանոնի համաձայն՝ յատկացուցիչը յատկացեալէն առաջ դրուած ատեն՝ յատկացեալին նախդիրը ինք ալ կ'առնէ։

2) Փոխանակ ըսելու՛ Զի ընտեցից ես ըզոահ, եայլն. (Տես 16 էջ 3 կանոն) և հոս քիչ մը վարը։

3) Ուղիղ բառը մակրայօրէն գործածուած է հոս աւղղակի նշանակութեամբ։

4) Անմահ ածականը իր ի կեանս գոյականէն հեռանալով՝ անոր նախդիրն ինք ալ առած է։ Արձակ ոճով պիտի ըսէինք՝ յանմահ կեանս, կամ՝ ի կեանս անմահն։ (Համեմատէ 9 էջ 2 կանոն)։

5) Այսպէս կարդա՛. Եւ տուր ինձ կալ անսասան ի կոչման՝ յոր կոչես զիս։ — Տամ բայը երբեմն աներեայթի քով դրուելով՝ խնդրանքի մը նշանակութիւնը կուտայ. ուստի այսպէս կը թարգմանուի վերոգրեալ խօսքը. (տուր որ անխախտ կենամ ես այն կոչումին մէջ՝ որուն կը կանչես զիս)։ Հոս ալ տական տէրբայի է ինձ դերանունը։

ԺԴ

ՏԱԼ ԶԿԱՑՄԵՐԻ ԿԱՑՄԵՐ

Առաքել, ունել
Որսալ բանիւ, մէկը էր
[իսունվաճ բանել
Հերովդիանոսք, Հերով-
[տէսէ հոսանքները

Աչ ինչ փոյթ է քեզ զու-
մեքէ, մէկու հը կարևո-
[բունիւն չես է պար
Դահեկան, 4-5 շուրջնշէ
[արժեխն սանեցող դրամ

Եւ առաքեն առ Յիսուս զոմանս ի Փարիսեց անտի եւ ի Հերովդիանոսաց ¹⁾, զի զնա որսացեն բանիւ: Եւ նոքա եկեալ հարցանիկին զնա ²⁾ նենգութեամբ և ասէին: Վարդապետ, զիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ, զի ոչ հայիս յերեսս մարդկան, այլ ճշմարտութեամբ զմանապարհն Աստուծոյ ուսուցանես: Արդ ասա՛ մեզ, արժա՞ն է հարկ տալ կայսեր՝ թէ ոչ ³⁾: տա-
ցո՞ւք թէ ոչ տացուք: Եւ Յիսուս զիտաց զկեղծա-

¹⁾ (Տես 8 էջ 1 կանոն): Կարդա՛ նաեւ անտի բառին և նը-
մաններուն գործածութեան մասին տրուած բացատրութիւ-
նը 7 էջ 2 կանոն:

²⁾ Հարցանել բայը ց նախդիրով անորոշ հայցական բնութեան խնդիր առնելէ զատ՝ որոշեալ հայցականով սեռի խնդիր ալ կ'առնէ. (Համեմատէ 16 էջ 1 կանոն):

³⁾ Այսինքն՝ թէ ոչ է արձան հարկ տալ կայսեր — խօսքի այս ձեռք զեղչում կ'ըսուի՝ երբ մէկ կամ աւելի բառեր լոելեայն կ'իմացուին:

Նորութիւն նոցա, ասէ ցնոսա. Զի ⁴⁾ փորձէք զիս,
կեղծաւորք, բերէք ինձ դահեկան մի զի տեսից: Եւ
նոքա բերին. և ասէ ցնոսա. Ո՞յլ է պատկերս այս
կամ զիր: Եւ նոքա ասեն ցնա. կայսեր ⁵⁾: Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Երթա՛յք, տուք
զկայսերն կայսեր, և զԱսուծոյն՝ Աստուծոյ ⁶⁾:
Մարկ. ԺԲ. 13—17



ԺԴ

ԶՈՒՐՆ ԿԵՆԴԱՆԻ

Վաստակեալ, յոդնած	Արդեօք, իրացընէ
Հանելջաւր, ջուր+աշել(հորէն)	Խաշն, ինք, ոչիար, աշէ
Կենդանի(ջուր), բիու(ջուր)	Միւսանդամ, երկրորդ ան- ևառնակիլ, իսունառէլ
	Իսկ, մնչւ չոկ [իսէ]

Գայ Յիսուս ի քաղաք մի Սամարացւոց՝ որում
անուն էր Սիւքար, մերձ ի զիւղն զոր ետ Յակովը
որդւոյ իւրում Յովսեփայ, և անդ էր աղբիւր մի

¹⁾ Զի՞ բառը, վրան պարոյկով (⁸⁾, եթէ ինչո՞ւ նշանակէ՝
մակրայ է, և եթէ ի՞նչ նշանակէ՝ անորոշ ածական է. իսկ
առանց պարոյկի՝ որ կամ որպէսզի, վասն զի կամ որովհետև
նշանակած ատեն՝ շաղկապ է:

²⁾ Այսինքն՝ կայսեր է պատկերս այս կամ զիր (Տես հաս 3 կանոն):

³⁾ Երբ յատկացուցիչի մը վերաբերող յատկացեալ բառը
կարելի է լոելեալն իմանալ, այս վերջինը յայտնի գրելու-
տեղ՝ իր նախդիրը (զ) միայն կը դնենք յատկացուցիչին վրայ.
ըստ այսմ կը թարգմանենք հաս. ինչ որ կայսերն է (=զպատ-
կերն), ինչ որ Աստուծուն է (=զփառս կամ զարժանն):

Յակոբայ։ Եւ Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն՝ նստէր ի վերայ աղբերն։ և էր ժամ իբրեւ վեցերորդ։ Դայ կին մի ի Սամարիայ հանել ջուր ասէ ցնա Յիսուս։ Տուր ինձ ըմպել (ջուր մը տո՛ւր ինձ)։ Զի աշակերտքն նորա երթեալ էին ի քաղաք անդր¹⁾ զի կերակուրս գնեսցեն։ Ասէ ցնա կինն Սամարացի։ Դու որ հրեայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել ինդրես ի կնոջէ Սամարացւոյ։ Զի ոչ երբեք խառնակին Հրեայք ընդ Սամարացիս։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ։ Եթէ զիտէիր դու զպարզեսն Աստուծոյ, և ո՞վ է որ ասէդ²⁾ ցքեզ թէ տուր ինձ ըմպել, դու արդեօք ինդրէիր ի նմանէ. և տայր քեզ ջուր կենդանի։ Ասէ ցնա կինն. Տէր, դու քանզի և դոյլ իսկ ոչ ունիս, և ջրհորս խոր է, իսկ արդ ուստի ունիցիս զջուրն կենդանի։ Միթէ դու մե՞ծ ինչ ոք իցես քան հայրն մեր Յակովը՝ որ զայս ջրհոր ետ մեզ, եւ ինքն ասի արք

1 ինչպէս ասի, այսի, անտի մակրայները բացառականի քով՝ նոյնպէս եւ այս, այդր, անդր մակրայները շարժում ցուցնող ի-ով հայցական բառի քով, այս, այդ, այն ցուցական ածականներու տեղ կը գործածուին:

Համեմատէ 16 է՛ 5 կանոն,

Եւ որդիին նորա եւ խաչինին նորա¹⁾։ Պատասխանի
ետ նմա Յիսուս և ասէ . ամենայն որ ըմպէ ի ջրոյ
յայդմանէ , միւսանգամ ծարաւէ , բայց որ ըմպէ²⁾
ի ջրոյն զոր ես տաց նմա , մի՛ ծարաւեսցի յա-
ւիտեան : Յովհ. Պ. 5—14

dt

ՀՐԱՒՔ ՀԱՐՍԱՆԵԱՅ

Զուարակք, եղներ
Պարարակ, բէրսունի
Յուլանալ, ծոսւնու

Անցք, անցնելու դեղ, հայբեր
Բազմական, նախու, հըս-
Գենուլ, հոբել - [Երես]

առաքեաց զծառայս իւր կոչել զիրաւիրեալս ի հարսանիս¹⁾, և ոչ կամեցան գալ : Դարձեալ առաքեաց ա'յլ ծառայս և ասէ . Ասացէ՛ իրաւիրելոցն²⁾, ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ և պարարակք զենեալ են, և ամենայն ինչ պատրաս է³⁾. Եկայք ի հարսանիսս : Եւ նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր, եւ ոմն ի վաճառ իւր⁴⁾. և այլք կալան զծառայս նորա թշնամանեցին և սպանին : Իսկ թագաւորն իբրև լուաւ բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զըսպանողմն զայնոսիկ, և զքաղաքն նոյշա այրեաց : Յայնժամ ասէ ցծառայս իւր . հարսանիքս պատրաստեն, և հրաւիրեալքն չէին արժանի : Արդ երթայք յանցս ճանապարհաց և զո՞րս (որո՞նք որ) միանդամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիսս : Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհո՞ ժողովեցին զամենեսեան զոր և զտին (ո՞րը որ զտան) զչարս և զբարիս, և լցան հարսանիքն բազմականօք : Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօֆն⁵⁾՝ ետես այր մի որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց, եւ

1) Անցեալ գերբայներն երբեմն իրբեկ ածական գործածուելով՝ իրենց բային պահանջած հոլովովը խնդիր կ'առնեն :

2) Ասեմբայը վերջահոլով տրական խնդիր առած է հոս, փոխանակ ըսելու, զիրաւիրեալսն (Տես 16 էջ 1 կանոն . 19 էջ 1 կան.) :

3) Տես 8 էջ 2 կանոն :

4) Հոս երկու տէրբայիներուն առջեւ բայը որ է զնաց՝ զեղչեալ է . ըստ այսմ, Ոմն զնաց յագարակ իւր և ոմն զնաց ի վաճառ իւր :

5) Զ նախդիրը գործիականով կը նշանակէ ուրբա, վրայ :

ասէ ցնա . Ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց . և նա պապանձեցաւ : Յայնժամ ասէ թագաւորն ցապասաւորսն . Կապեցէ՛ զդորա զոս եւ զձեռս¹⁾, և հանէք ի խաւարն արտաքին . անդ եղիցի լալ եւ կրնել²⁾ ատամանց : Զի բազումք են կոչեցեալք, և սակաւք՝ ընտրեալք :

Մատք. ԻԲ. 2—14

ԺԶ

ԱՂՋԹՔ ՏԵՐՈՒՆՑԿԱՆ

Երանաւետել, Երջանիկ ընել
Ամէն(=եղիցի), այնուեւըւ-
նոյն և, (մկ.) նոյնուեւ ալլայ
ծառայքն ի ճանապարհո՞ ժողովեցին զամենեսեան
զոր և զտին (ո՞րը որ զտան) զչարս և զբարիս, և

Յաւիտեան, ուար, մեծ ժա-
եթեր, երին+ [Յանակադջոց
Ստորինք, երիբ իսմ երիւա-
կաց կացուցանել, հետա-
կայք, իտյան [Յընել
Պարտիք, ուարուեր, մեշեր

Ո' Հայր մեր զըթած

Որ զկայս եթերաց
Երանաւետես

Փառաց քոց ի Տես³⁾,

Անուն քո լիցի

1) Փոխանակ ըսելու . Կապեցէք զոտու եւ զձեռս դորա . (Տես 21 էջ 1 կանոն) :

2) Հոս լալ և կրնել աներեւոյթները գոյականարար գործածուած են, և ատամանցը յատկացուցիչն է կրնելին :

3) Ի տես կամ ի տեսիլ փառաց քոց (Քու փառքիդ տեսքովը) :

Սուրբ և պաշտելի,
Եւ ծանիցեն զայն
Տիեզերք համայն:
Զարքայութիւն քո
Մեզ երեւեցո՛.
Եւ աստուածային
Կամք քո եղիցին՝
Որպէս ի յերկինս
Նոյն և ի ստորինս:
Զհաց մեր առօրեայ
Եւ այսօր չնորհեա.
Թո՛ղ ըզպարտիս մեր,
Որպէս և մեք, Տէր,
Տամք ամենեցուն
Պարտեաց թողութիւն:
Մի՛ զսկարութիւն մեր
Ի փորձանս ածեր¹⁾,
Այլ կացո՛ ի բաց
Յամենայն չարեաց.
Զի արքայութիւն
Քո միշտ է մնայուն.
Քեզ փառք վայելեն
Յաւիտեանս, ամէն:

ԺԷ

ՄԵԾԱՑՈՒՆՆ ՅՈՒՍԱՅԵԱԼ ՅԻՆՉՍ ԻԻՐ

Անդ, ք, (յգ.) = անդաստան, Բարութիւնք, ինչ [արտ, արդեր] Գանձել, ժողվել Տոհմականք, արդիւնք (յորեն) Մեծանալ, հարստանալ

¹⁾ Կարդա՛ այսպէս. Մի ածեր ի փորձանս զսկարութիւն մեր.—
Մի մակրայլ հեռացած է իր բայէն,

Առն ուրումն մեծատան ետուն անդի տոհմականս¹⁾, և խորհէր ի միտս իւր և ասէր. Զի՞²⁾ գործեցից՝ զի ոչ զոյ տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ։ Եւ ասէ, զիտեմ զի՞նչ արարից. քակեցից զշտեմարանս իմ³⁾ եւ եւս մեծամեծս շինեցից³⁾ և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարութիւնս իմ, և ասացից ցանձնիմ. Անձն, ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց⁴⁾. հանգիր, կեր, արք և ուրախ լեր։ Ասէ ցնա Աստուած։ Անմիտ։ յայսմ զիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն. իսկ զոր պատրաստեցերին⁵⁾ ո՞ւմ լինիցի։ Նոյնպէս և որ գանձէ անձին, և ոչ յԱստուած մեծանայցէ։

Դուկ. ԺԲ. 16—21



1) Հասարակ գոյականներու եղակի և յոգնակի սեռականն ու տրականը միւնոյն ձեռվը ըլլալով՝ պէտք չէ շփոթել զանոնք։ Տրականը միշտ որո՞ւ հարցումի կը պատասխանէ և բայի կը վերաբերի. իսկ սեռականը գոյական բառի մը հետ կը կապուի ընդհանրապէս և անոր յատկացուցիչը կ'ըլլայ։ Բայսմ Առն ուրումն մեծատան բառերը ո՛չ թէ ետուն բային՝ այլ անդի գոյականին կը վերաբերին. (հարուստ մարդու մը արտերը արդիւնք տուրին): Պէտք է զիտել նաև որ խօսքին մէջ իբրև անորոշ ածական գործածուած ուրումնը ստոյգ նշան մըն է առն գոյականին սեռական ըլլալուն։

2) Տես 23 էջ 1 կանոն։

3) Հոս մեծամեծս բառը գոյականարար գործածուած ածական մըն է, իր մէջ լռելեայն ունենալով տեմարանս բառը, փոխանակ ըսելու, եւ եւս մեծամեծ շտեմարանս շինեցից (Աւաւելի մեծ շտեմարաններ պիտի շինեմ)։

4) Իմա՛ վասն ամաց բազմաց։

5) Այսինքն՝ Զայն զոր պատրաստեցեր (Տես 16 էջ 5 կանոն)։

ԺԸ

ՏՐՑՈՒՆՁՔ ՄՇԱԿԱՅԻՆ

Բնդառաւոտու, առարկան դէմ
ի վարձու ունել, Հարցուն
Համարել, հարծել [բանել
Արկանել վարձս, Հարցի դրել
գաւառապետ, դարես, բոր-
[խետար]

Մէն մի դահեկան, մշտէ
եւ, աւ [բանել
Հասարակորդ առնել, հա-
[մասը բաժին առ
Տօթ, ասուի դաստին (օդի)
Սակ արկանել, ասկորիւ

Նման է արքայութիւն երկնից առն տանու-
տեառն՝ որ ել ընդ առաւօսу¹⁾ ի վարձու ունել
մշակս յայզի իւր. և արկ վարձս մշակացն աւուրն
դահիեկան²⁾. և առաքեաց զնոսա յայզի իւր: Եւ
ելեալ զերորդ ժամու³⁾ ետես այլս զի կային

1) Ընդ նախդիրը կը գործածուի ժամանակ ցուցնող յոգ-
նակի անորոշ հայցական բառերու հետ, Օր. կ'ըսոււի. Ընդ
աւուրսն ընդ այնոսիկ (այն օրերուն) փոխանակ ըսելու յաւուրսն
յանոսիկ:— Կրնանք սակայն՝ ընդ առաւօս, ընդ երեկս (իրիկ-
ուան դէմ) բառերը իրրե մակրայօրէն առացուածներ ըն-
դունիլ: (Հմմտ. 18 էջ 1 կանոն):

2) Իմա' վասն աւուրն՝ դահեկան մի:

3) Զ նախդիրը կը գործածուի ժամանակ ցուցնող գործի-
ական հոլով բառերու հետ. լսու այսմ Զերորդ ժամու, զվեց
ժամու, զինն ժամու, զմետասաներորդ ժամու, կը թարգմանենք
(ժամը երեքին, վեցին, իննին, տասն և մէկին):

դատարկք ի հրապարակս, ասէ և ցնոսա. Երթայք
և դուք յայզի իմ, և որ ինչ արժան իցէ տաց ձեզ.
զնացին և նոքա: Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու,
և զինն ժամու՝ արար նոյնպէս: Եւ զմետասանե-
րորդ ժամու ելեալ, եզիտ այլս՝ զի կային դա-
տարկք. ասէ ցնոսա. Ընդէ՞ր կայք աստ զօրս ցե-
րեկ¹⁾ դատարկք: Ասեն ցնա. Զի ոչ ոք կալաւ զմեզ
ի վարձու: Ասէ ցնոսա. Երթայք և դուք յայզին,
և որ ինչ արժան է՝ առնուցուք: Եւ իբրև երեկոյ
եզկ՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր. Կոչեա
զմշակսն՝ և տուր նոցա վարձս, սկսեալ ի յետնոցն
մինչեւ ցառաջինսն: Իբրեւ եկին որք զմետասա-
ներորդ ժամուն, առին մէն մի դահեկան: Եկեալ
և առաջինքն՝ համարէին թէ աւելի առնուցուն. և
առին մէն մի դահեկան և նոքա: Իբրեւ առին՝
Տրնջէին զտանուտեառնէն²⁾ և ասէին՝ թէ դոքա

1) Հայցական հոլովեր կան՝ որ չորս պարագայի մէջ բինու-
թեան խնդիր կ'ըւլան. ասոնք են. 1. Ժամանակի տեւողութիւն,
2. Ճամբայ, 3. Չափ, 4. Չեւ, կերպ կամ օրինակ ցուցնող հայցա-
կանները: Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկք խօսքին մէջ կայք
բայց չէզոք ըլլալով՝ արդէն հայցական խնդիր չառներ,
վասն զի չէզոք բային տէրբային ընելիք առարկայ մը չ'ու-
նենար. ուստի զօրս հայցական հոլով բնութեան խնդիր մըն
է ժամանակի տեւողութիւն ցուցնող, և չէզոք բայի հետ է իր
գործը:

2) Տրնջել ինչպէս նաև գոհանալ բայերը զով առանց ի ի
բացառական բնութեան խնդիր կ'առնեն որոշ նշանակու-
թեան մը համաձայն (Տե՛ս 10 էջ 2 կանոն և 11 էջ 3 կա-
նոն):

յետինքդ մի ժամ¹⁾ գործեցին, և հասարակությունը մեզ արարեր զղոսա²⁾, որ զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ: Նա պատասխանի ետ միում ի նոցանէ և ասէ. Ընկեր, չզրկեմ զքեզ. ո՞չ դահինանի միոջ³⁾ սակ արկեր ընդ իս. ա՛ռ զքոյդ և երթ:

Մատք. Ի. 1—14

ԺԹ

ԱԵՐՄԱՆԱՅԱՆՆ

Ունել զցամաք,	Եղբար+ւ	Լսել, հասհնաւ
	[Էռանել]	Զեռնոււ, առանաւ
Վարդապետութիւն, +արուն		Հեղձուցանել, իւշել

Դարձեալ սկսաւ Յիսուս ուսուցանել առ ծովելքերին⁴⁾. և խոնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչեւ ի նաւ մտանել նմա եւ նսել⁵⁾

1) Տես 3 կանոն սոյն դասին մէջ: — Հոս գործեցին ներգ, բայց պարագան չի փոխեր, վասնզի գործելու առարկան ժամը չէ, այլ նողը կամ ածխատմնը:

2) Այս խօսքին մէջ արարեր ներգ, բային սեռի խնդիրը իր ստորոգելին ունի յոդնակի անորոշ հայցական ձեռվ, ընդահնուր կանոնի համաձայն: (Համեմատէ 15 էջ 3 կանոն):

3) Գնելու, վաճառելու, և այլն բայերը սեռական հոլով բընութեան խնդիր կ'առնեն: Հոս դահինական սեռական հոլով բնութեան խնդիր է սակ արկեր բային:

4) Առ նախադրութիւնը գործիական խնդիրով կը նշանակէ բովը, վրայ:

5) Աներեոյթին կամ անորիշ գերբայներու տէրբային սուվորաբար տրական կը դրուի: (Կարդա՛ 16 էջ 3 կանոն). Նոյնը կը պատահի նաև ելեւով մինչեւով սկսուած խօսքերու մէջ, Օր. Եղեւ մեռանել աղքատին. մինչեւ զարմանալ ամենեցուն. և այլն:

ի ծովուն և ամենայն ժողովուրդին զծովեզերքն զցամաքն ունիկին¹⁾. և ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ:

Եւ ասէր նոցա²⁾ ի վարդապետութեան իւրում. Լսէ՛ք, ահաւասիկ ել սերմանող սերմանել. և եղեւ ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն թոչուն և եկեր զնա: Եւ այլն անկաւ յապառաժի³⁾ ուր ոչ զոյր հող բազում, և վաղվաղակի բուսաւ՝ քանզի ոչ զոյր հիւր երկրին³⁾, և յորժամ ծագեաց արեւ՝ ջեռաւ. և զի ոչ զոյին արմատք՝ ցամաքեցաւ: Եւ այլն անկաւ ի մէջ փշոց. ելին փուշքն և հեղձուցին զնա, և պտուղ ոչ ետ: Եւ այլն անկաւ յերկիր բարւոք (=բարի), և ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ միոյ երեսուն, եւ ընդ միոյ վաբսուն եւ ընդ միոյ հարիւր⁴⁾: Եւ ասէր. Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Մարկ. Դ. 1—6



1) Հաւաքական իմաստ ունեցող բառերը իբրև յոգնակի կը գործածուին երբեմն, և ըստ այնմ բայն ալ յոգնակի կը դրուի:

2) Տես 26 էջ 2 կանոն, և այլն:

3) Էական բայը սեռական հոլով բնութեան խնդիր առնելով ունենալ կը նշանակէ: Ուստի Ոչ զոյր հիւր երկրին (երկիրը հիւր չունէր) խօսքին մէջ՝ երկրինը սեռ. խնդիրն է ոչ զոյր բային:

4) Ընդ նախադրութիւնը սեռական խնդրով փոխանակ, տեղ կը նշանակէ. Օր. Եւ բերէր ընդ միոյ երեսուն, վաթսուն և այլն. (մէկին տեղ երեսուն, վաթսուն և այլն կուտար):

Ի

ԱՂՋԹՔ ԵՐԵԿՈՅԻ

ՕՐԸՄՈՐՔ, (ած.) ԱՇԽԵՐԵՎԱՅ	Առաջիկայ, ՆԵՐԻԱՅ,
ԱՊՎԱՀՆՈՐՀ, ԱՊԵՐԵԽԻՐ	ԱՅԳՈՒՆ (մկ.), ԱՌԱՋՎՈՒՆԻ
ՅԱՆՃԱՆ ԱՌՆԵԼ, ՅԱՆՅԱՆԵԼ	ԹՈՂՈՒԼ, ՆԵՐԵԼ

Երկրպագեմ քեզ և օրհնեմ ըզքեզ Տէր,
 Որ զիս ի ժամ երեկոյիս հասուցեր,
 Տալով այսօր զօրլուսօրէն ինձ ըզիաց¹⁾
 Եւ փրկելով զիս յամենայն փորձանաց:
 Քո է պարզեւ եթէ այսօր ինչ բարի
 Գործով՝ բանիւ կամ խորհրդով արարի.
 Իսկ եթէ չար²⁾, յինէն է այն, թո՛ղ ինձ Տէր,
 Որ ապաւնորի մեղօֆ առ Քոյդ գլուայ սէր³⁾:
 Քեզ ըզմարմինս իմ յանձն տոնեմ և զհողիս,
 Պահել ամբողջ յառաջիկայ զիշերիս.
 Զի ննջեցից խաղաղութեամբ քաղցր ի բուն⁴⁾,
 Եւ զարթուցեալ՝ զիշեզ օրհնեցից, Տէր, այգուն

ԻԱ
ՄՇԱԿՔ ԱՅԴԻՈՅՆ

Էր, Էտ	Ի ժամու, Ժամանակն
Տարաշխարհ, հեռու Երիեր	Կալեալ, (անց. գերբ. ունելի)
Ասել ընդ միտս, ինչնիբեն ըսել	Առաքել, դրիել [բանելով]

1) Տես 9 էջ 2 կանոն։ 2) Դնել զեղչեալ բայց։

3) Կարդա՛ այսպէս. Ես որ մեղօֆ ապաւնորի զտայ առ սէր Քո (Ես որ իմ մեղքերովս Քու սիրոյդ դէմ ասղերախտ գտնուեցայ):
 4) Իմա՞ ի բուն քաղցր կամ ի բուն բաղցրութեան։

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այզի,
 և ես զնա զմշակս¹⁾. և զնաց ի տարաշխարհ։
 Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց
 զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա
 (=իւր): Եւ կալեալ մշակացն²⁾ զծառայս նորա,
 զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։
 Դարձեալ առաքեաց ա՛յլ ծառայս բազումս իան
 զառաջինսն³⁾, և արարին նոցա նոյնպէս։ Յետոյ
 առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ, թերևս
 ամաչեսցեն յորդւոյ ասի իմմէ⁴⁾: Իսկ մշակք իբ-
 րեւ տեսին զորդին, ասեն ընդ միտս։ Սա է ժա-
 ռանգն, եկայք սպանցուք զսա, և կալցուք զժա-
 ռանգութիւն սորա։ Եւ առեալ հանին զնա ար-
 տաքոյ քան զայզին և սպանին։ Արդ զի՞նչ արաս-
 ցէ ընդ նոսա⁵⁾ (անոնց ի՞նչ պիտի ընէ) տէր այ-
 գւոյն։ Եկեսցէ և կորուցէ զմշակսն զայնոսիկ, և
 սացէ զայզին այլոց մշակաց⁶⁾, որք տացեն նմա
 զպտուղս ի ժամու իւրեանց։ Մաքր. ԽԱ. 33—41

1) Տես 16 էջ 1 կանոն։

2) Հմմտ. 17 էջ 2 կանոն։

3) Ցիշել ածականներու խնդրառութեան կանոն։

4) Տես 7 էջ 2 կանոն։

5) Առնել բայց ընդ նախզիրով հայցական խնդիր առնելով՝
 ինչպէս կը տեսնուի այս օրինակէն՝ իբր վարուիլ մէկու մը
 յան մը ընել կը նշանակէ։

6) Նկատի առնել տամ բայցին առած բնութեան խնդիրին
 կը կին ձեւերւ։

ԻԲ

ԱՆԱՌԱԿԱ ՈՐԴԻՒՆ

Ոչ բազում, ուշ
Ագուցանել, հադառել
Կեալ, ուրիշ [ընթացուն]
Յարիլ, գանուլ, հետեւիլ
Գալի միտս, իւլը էլունեւ
Հացալից, էրը էւնշը [էս]

Սովամահ կորնչիլ, ան-
Յղել, որիւ (նունեւնէ մեռնի
Եղջիւր, երջեւնին ուրունը
Անկանել զպարանոցաւ
(ուրուք) (մէկու մը) ժիւը
Կեանք, բնչ լոււնիւ

Առն միոջ էիմ երկու որդին¹⁾: Ասէ կրտսերն
ի նոցանէ ցհայրն: Հա՛յը տուր ինձ բաժին՝ որ
անկանի յընչիցդ: և նա բաժանեաց նոցա ըզ-
կեանսն: Յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամե-
նայն կրտսերոյն²⁾, գնաց յաշխարհ հեռի: և անդ
վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ:
Իբրև սպառեաց զամենայն, եղե սով սաստիկ
յաշխարհին յայնմիկ և սկսաւ ինքն չքաւորել:
Գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի բաղամացոց³⁾ աշ-

1) Տես 33 էջ 3 կանոն:

2) Այսինքն՝ ժողովեաց կրտսերն զամենայն եւ գնաց . . .
(Տես 17 էջ 2 կանոն):

3) Թուական ածականները և մասնական անունները իրենց
ետքէն բացառական խնդիր կ'առնեն: (Տես 8 էջ 1 կանոն):

խարհին այնորիկ: և յղեաց զնա յազարակ իւր՝
արածել խոզս: Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր
յեղջերէն՝ զոր խոզքն ուտտէին, և ոչ ոք տայր նմա:
Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ. Քանի՛ վարձկանի իցեն
ի տան հօր իմոյ հացալից¹⁾, և ես աստ սովամահ
կորնչիմ: Յարուցեալ զնացից²⁾ առ հայր իմ, և
ասացից ցնա: Հայր, մեղայ յերկինս և առաջի քո,
և ոչ ևս եմ արժանի կոչել որդի³⁾ քո, արա զիս
իբրև զմի ի վարձկանաց քոց: Եւ յարուցեալ եկն
առ հայր իւր: Եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես
զնա հայրն և զթացաւ, յարեաւ և ընթացաւ ընդ
առաջ, անկաւ զպարանոցաւն նորա և համբուրեաց
զնա: Ասէ ցնա որդին: Հա՛յը, մեղայ յերկինս և
առաջի քո, ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո:
Ասէ հայրն ցծառայսն իւր. վաղվաղակի հանէք
զպատմուճանն առաջին և ազուցէք նմա, և տուք
զմատանին ի ձեռն նորա և կօշիկս յոտս նորա: և
ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք և ու-
րափ լիցուք: զի այս որդի իմ մեռեալ էր և ե-
կեաց, կորուսեալ էր և զտաւ:

Ղաւկ. ԺԵ. 11—24

1) Հացալից ածականը հեռացած է իւր վարձկանի գոյակա-
նէն:

2) Անցեալ դերբայներն ընդհանրապէս կը կապուին իրենց-
մէ վերջը եկող դիմաւոր բային հետ իրբե բնութեան խնդիր:

3) Այս խօսքին մէջ կոչել (կոչուիլ) կրաւորական բայի
լուելեայն իմացուած տէրբայիին ստորոգելին է ուղի բառը:
Բատ այսում. Ոչ եւս եմ արձանի զի կոչեցայց (ես) ուղի ես: Տես
քիչ մը վարն ալ:

ԻԳ
ԶՂՋՈՒՄՆ ԱՌ ԱԱՏՈՒԱԾ

Զիր, ուստիւ
Ցարդ, մնաւ հիւաւ
Տարագիր, հեռու հացած

Շատ է, բառական է
Երեսք, ներկայութեան
Գանակոծ առնել, ձեծել

Հա՛յր, ես որդի քոյին եմ այն՝

Որ ըզենորհաց եոց վատնեալ ձիր¹⁾
Եւ ընդ ուղին գրնալով լայն²⁾
Կեցի ի Քէն ցարդ Տարագիր³⁾։
Այլ զգաստացեալ արդ վերըստին՝
Դառնամ առ քեզ Հայրըլդ⁴⁾ պըթած,
Ընկալ զիս մի՛ օնդ⁵⁾ որդիս քոյին,
Այլ իբր ըզմի ի վարձկանաց։
Զեմ արժանի քոց գըգուանաց։

Հա՛ր զիս, արա զիս գանակոծ։
Շատ է զի մի՛ ի սպառ ի բաց
Զիս մերժեսցես յերեսաց քոց։

1) Այսպէս կարդա՛. Որ վատնեալ զձիր ընորհաց եոց։ Հոս յատ-կացեալին վրայ նախդիրը չէ կրկնուած։ (Հմմտ. 21 էջ 1 կան.)։

2) Ընդ նախադրութիւնը երբեմն անորոշ հայցականով բանի մը մէջեն անցնիլ կը նշանակէ և աշխարհաբարի մէջ բացառականով կը թարգմանուի. Օր. գնալ ընդ լայն ուղին, (լայն նամբէն երթալ), Մտանել ընդ դրունս, (դռներէն մտնել)։

3) Տարագիր (կամ Տարագրեալ) ի թէն։

4) Հոս դ գիրը կոչականի նշան ըլլալէ աւելի դու դերա-նունի արժէքով կ'իմացուի. Առ քեզ որ Հայր ես . . .

5) Կարդա՛ մի՛ ընդ ուղիս . . . Տաղաչափական սղում մը, զոր սւսուցիչը կրնայ բացատրել։

ԻԴ
ՍՈՄԱՐԱՅԻՆ

Վէրսի վերայ դնել, վերա-
Դէպլինել, ուստահել / սրել
Ի վաղիւ անդր, հերթեւալ
Արկանել, լցնել [էրը]

Դրաստ, բեւ կը անառան
Պանդոկի, ւոյ, = պանդոկ
Ծախել, ծուխ ընել
Հատուցանել, լհարել

Այր մի իջանէր յերուսաղեմէ յերիքով, եւ
անկաւ ի ձեռս աւագակաց, որք մերկացին զնա,
Եւ վէրս ի վերայ¹⁾ եղին, թողին կիսամահ եւ
գնացին։ Դէպ եղեւ քահանայի միոչ իջանել²⁾
ընդ նոյն ճանապարհ, և տեսեալ զնա զանց արար։
Նոյնպէս և զետացի մի եկեալ ընդ նոյն սեղի³⁾,
ետես և զանց արար։ Սամարացի ոմն ճանապար-
հորդեալ՝ եկն ընդ նոյն (ճանապարհ կամ տեղի)
առ նովաւ⁴⁾, և տեսեալ զնա՝ դթացաւ, և մա-
տուցեալ պատեաց զվէրս նորա՝ արկեալ ի վերայ
ձէթ և զինի, և եղեալ ի վերայ զրաստու իւրոյ՝
ած զնա ի պանդոկի մի⁵⁾, և դարմանեաց զնա։

1) Նախադրութիւններէն ոմանք՝ եթէ ինդիր չունենա՞ն մակրայ են։

2) Փոխանակ ըսելու՝ Դէպ եղեւ զի քահանայ մի իջանից։ (Հմմտ. 16 էջ 2 կանոն)։

3) Տես 38 էջ 2 կանոն։

4) Առ նախադրութիւնը գործիականով նովը կը նշանակէ։

5) Բառեր կան որոնց ուղղականը ի ո՛վ ալ կը վերջաւորուի։
Օր. պանդոկ կամ պանդոկի, պատասխան կամ պատասխանի,
ծօն կամ ծօնի (նուելը), լորամարդ կամ լորամարդի, ևայլն,
Ռւստի պէտք չէ շփոթիլ՝ շարժում ցուցնող բայի քո՛վ ի ո՛վ
վերջահոլով տրական տեսնել կարծելով։

Եւ ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի, հանեալ
ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ.
Դարման տար դմա, և զոր ինչ ծախեցես ի դա
ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ:
Ղուկ. Փ. 30—36



ԻԵ

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՄԻ

Յայլակերպս լինել, կերպա-	թափիչ, լու լուսաշող
Առնել, չինել [ըանաժո՞ր ըլլաւ]	Ուրեք, ուղարկու
Ռարբի, Հարդարեաւ	Այսր, անդր, ասուն, անդին

Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր¹⁾ Յիսուս
զՊետրոս և զՅակովոս և զՅովհաննէս, և հանէ ըզ-
նոսա ի լեառն մի բարձր առանձինն. և յայլա-
կերպս եղեւ առաջի նոցա. և ձորձք նորա եղեն
փայլուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի
ոչ կարեն այնպէս²⁾ սպիտակացուցանել: Եւ երե-
ւեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, և խօսէին
ընդ Յիսուսի: Պատասխանի ետ Պետրոս և ասէ
յՅիսուս. Ռարբի, բարւոք է մեզ աստ լինել, եւ ա-
րացուի Երիս սաղաւարս՝ մի քեզ, մի Մովսիսի, եւ

1) Ընդ իւր (լիրեն հետ). Տես 19 էջ 1 կանոն:

2) Թարգմանել՝ Անոր Լաթերը շատ փայլուն կերպով ճեր-
մլկցան, անանկ որ երկրի թափիչները չեն կընար այնպէս
ճերմկցնել:

մի Եղիայի¹⁾: Քանզի ոչ զիտէր զի՞նչ խօսէր, զի
զարհուրեալ էին: Եւ եղեւ ամպ մի հովանի ի վե-
րայ նոցա. ձայն եղեւ յամպոյ անտի²⁾ և ասէ. Դա
է որդի իմ սիրելի, դմա լուարուք: Եւ յանկար-
ծակի հայեցեալ այսր անդր²⁾, ոչ ևս զոք ուրեք
տեսին բայց միայն զՅիսուս³⁾ ընդ իւրեանս:

Մարկ. Թ. 1—7



ԻԶ

ՈՒՐԱՋԽՈՒԹԻՒՆ

ԸՆԴ ԴԱՐՁ ՄԵՂԱԿՈՐԻ

Խնդալ, առախանալ
Պիտոյ է, ուերտ է

Ածել աւել, առւել
Լուցանել, Հարել

Ո՞վ ոք իցէ ի ձէնչ մարդ որոյ իցէ հարիւր
ոչիսար⁴⁾. և կորուսանիցէ զմի ի նոցանէ, ո՞չ թո-
ղուցու զիննսուն և զինն յանապատի, և երթայցէ

1) Արացուի Երիս սաղաւարս (երեք վրան կամ խրճիթ շի-
նենք) մի քեզ, մի Մովսիսի, ևայլն՝ (հատ մը քեզի, հատ մը
Մովսէսին, ևայլն): Այս խօսքին մէջ զեղչում մը կայ. փո-
խանակ ըսելու մի քեզ արացուի, մի Մովսիսի արացուի, ևայլն:
Մի ածականը լուելեայն իմացուող տաղաւար գոյականին տեղ
դրուած ըլլալով՝ սեռի խնդիր է:

2) Կարգա 24 էջ 1 կանոն:

3) Բայց միայն զՅիսուս... լուելեայն իմացուող բայն է տեսին:

4) Տես 33 էջ 2 կանոն.— Տես քիչ վերջը, որոյ իցեն դրամք...

զիես կորուսելոյն¹⁾ մինչև գտանիցէ զնա : Եւ իբ-
րեւ գտանէ՝ դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց խըն-
դալով և երթայ ի տուն, կոչէ զբարեկամս և զդրա-
ցիս և ասէ ցնոսա . Ուրախ եղերուք ընդ իս, զի
գտի զոչխարս իմ զկորուսեալ²⁾ : Ասեմ ձեզ, զի
այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մե-
ղաւորի որ ապաշխարիցէ, քան վասն իննուն եւ
ինն արդարոյ³⁾ որոց չիցէ պիտոյ ապաշխարու-
թիւն : Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամմ տասն,
և եթէ կորուսանիցէ դրամմ մի, ո՞չ լուցանիցէ
ճրագ և ածիցէ աւել ի տան, և ինդրիցէ ստէպ՝
մինչև գտանիցէ : Եւ իբրև գտանէ, կոչէ ըզբա-
րեկամս և զդրացիս, և ասէ . Ուրախ լերուք ընդ
իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի : Այսպէս,
ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշ-
տակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի որ ա-
պաշխարիցէ :

Ղուկ. ԺԵ. 4—10

1) Զիես նախագրութիւնը սեռական խնդիր կ'առնէ : Զիես
կորուսելոյն (կորսուածին ետևէն) :

2) Ինքնին կը հասկցուի որ Զօշխարս եղակի բառին ս գիրը
յօգնակի նշան չէ : Երբեմն՝ ինչպէս աշխարհաբարի անանկ
աւ գրաբարի մէջ ս գիմորոշ յօդը իմի տեղ կրնայ գործած-
ուիլ : Հոս ս գիրը իրոք այս ցուցական ածականին տեղ աւ
կրնայ առնուիլ : — «կորուսեալ» ածականին վրայ աւ դրուած
զ նախդիրը յատկապէս զայն շեշտելու կը ծառայէ :

3) Թէկ երկու երեխ չորեկն վեր բոլոր թուական որոշեալ
ածականներուն հետ գործածուած գոյականները թէ՛ եղակի
և թէ՛ յագնակի կրնան դրուիլ, բայց հոս աւելի լաւ է կար-
դաւ արդարոց՝ որուն յարաբերականն աւ յոդնակի դրուած է :

ԻԵ

ՎԱԽՃԱՆ ԱՄՊԱՐԾՑԱՅՑ

Ուղեկից, ճամբու ընկեր	Ի բուն (մկ.), ամբուղ
Յար, Գյու	Անդուլ, անդուրու
Ժանտ, Քէշ, Հնասակար	Հոսիլ, հոսիլ (հոսիլ)
Հաճեգոհ, հասանց և քոն	Հողմավար, հողմէն շողմա

Երանեալ այր¹⁾ որ ոչ զընաց
ի ճանապարհս ամպարշտաց .
Զեղեւ չարին նա ուղեկից²⁾,
եւ ոչ յաթոռս նստաւ ժանտից :
Այլ ի հրամանս աստուածատուր
Հաճ են և զոհ միտք և կամք իւր .
Եւ ըզգիւեր եւ զսիւն³⁾ ի բուն
Խորհի անդուլ յօրէնս ի նոյն⁴⁾ :
Ոչ այսպէս ո՞չ է ամպարիշտ,
Այլ երերեալ կայ յերկրի միշտ,
Որպէս փոշի որ հողմավար
Այսր անդը հոսեալ հալածի յար :

1) Է բայը զեղչուած է = երանեալ է այր . . .

2) Տես 8 էջ 3 կանոնին մէջ խնդրառու ածականը : — Հոս
չարին բառը տրական խնդիրն է ուղեկից ածականին :

3) Տես 31 էջ 1 կանոնին մէջ ժամանակի տեսլուրին ցու-
ցընող հայցականին քերականական պաշտօնը :

4) Այսինքն ի նոյն օրէնս . (Տես 9 էջ 2 կանոն) :

ԻԸ

ՄԵԽԱՏՈՒՆՆ ԱՆՈՂՈՐԾ

ԲԵՀԵԿ, բարուի ունելու հոռու	Ծագ մատին, հարէ ծայր
Լիզու, լիզ	Պապակիլ, ինու ծարսուիլ
ի հեռաստանէ (մկ.), հեռութեն	Տապ, ուստունիւն (բողէ)
Գոգ, շոջ, քիչի	Անդէն, հոն ուել
Թանալ, նրգչւ	Բարիք, հանդուննիւն

Այր ոմն էր մեծատուն, և ազանէր բեհեգս
և ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առատա-
պէս: Եւ աղքատ ոմն անուն Դազարոս (Դազարոս
անունով աղքատ մը) անկեալ դնէր առ դրան¹⁾
նորա վիրաւորեալ, և ցանկայր լուու զորովայն իւր
ի փշանացն՝ որ անկանէին ի սեղանոյ մեծատանն,
այլ և շունք եւս զային և լիզուին զվէրս նորա:
Եղեւ մեռանիլ աղբատին եւ սանել նրեւսակացն²⁾
զնա ի զոզն Արրահամու, մեռաւ եւ³⁾ մեծատունն
եւ թաղեցաւ, եւ ի դժոխսն ամբարձ զաշս իւր
մինչ ի տանչանսն էր, ետես զԱրրահամ՝ ի հեռաս-
տանէ, և զԴազարոս ի զոզ նորա հանգուցեալ:
Եւ նա աղազակեաց եւ ասէ. Հայր Արրահամ,
ողորմեաց ինձ, և առաքեա զԴազարոս զի թացցէ

1) Առ նախադրութիւնը եղակի վերջահուլով տրականով
հով կը նշանակէ. Որ. առ դրան (զբան քով). առ նմա (անոր
քով, իրը տունը):

2) Տես 16 էջ 2 կանոն նաև 32 էջ օ կանոն ուր ըընդու-
նելութեանը պէտք է կարգալ աներեւոյթին:

3) Հարուստն այ մեռաւ. — Հոս եւ ը իրրեւ մակրայ գոր-
ծածուած է. նմանապէս իսկ շաղկազն ալ մակրայ է երբ
անզամ, նոյն իսկ նշանակութեամբ գործածուի: Որ. Դոյլ իսկ
ոչ ունիս (զոյլ անզամ շունիս):

զծաղ մատին իւրոյ ի ջուր, և զովացուսցէ զլեզու
իմ, զի պապակիմ ի տասլոյ աստիւ եւ ասէ ցնա
Արրահամ. Որդեա'կ, յիշեա զի ընկալար անդէն
զբարիս քո ի կեանսն քում, և Դազարոս նոյնպէս
զշարչարան¹⁾, արդ սա աստ միխթարի, և դու
այդր²⁾ պապակիս: Վուկ. ԺԶ. 19—25

ԻԹ

ԲՆԹՐԻՔ ԲԱՂՏԱՍԱՐԱՅ

Ընթրիս առնել, երեխոյեան	Յօդ, անդահերուն իւղը,
Բուեալ, ձեկուած [հաւոռալ]	Բարախել, շարնել [իւղը
Ընդ զինիս մտանել, քինու-	Բարձրանալ, հարուստալ
մրմ, ուսու [հալ]	Վախճանել, վերչունել

Բաղտասար արքայ արար ընթրիս մեծամե-
ծաց իւրոց հազար առն³⁾: Եւ իբրեւ ընդ զինիս
եմուս, հրամայեաց բերել զսպասս արծաթոյ և
զուկուոյ⁴⁾, զոր եհան նաբուզունուոր հայր նորս⁵⁾

1) Զեղչուած է բայլ՝ որ է բնիալու (ընդունեց):

2) Աս, անդ զազարում ցուցնող մակրայներուն նոյն նը-
շանակող ձեւը կը պակսի զբարարին մէջ, ուստի այս, անդ
ձեւն փոխ կ'առնեուի:

3) Տես 48 էջ 4 կանոն:

4) Սեռ. հոլովով գրուած արծաթոյ և սկիոյ բառերը ածա-
կանի պաշտօն կը կատարեն հոս, և վերջինին վրայ կը կնուած
է զոյականին նախադիրը. Փոխանակ ըսելու և զսպասս ոսկույ:
(Հմամ. 15 էջ 1 կանոն):

5) Բացայատիչ կը կոչուին այն բառերը՝ որ իբրեւ տիտղոս՝
անուն՝ կամ իբրեւ բացաբառութիւն ուրիշ բառի մը քով զը-
րուելով՝ անոր ո՞վ կամ ո՞ն ըլլալը կը նշանակեն: Այդ նո-
րազգողնուոր և նայր նորս (Բաղտասարայ) բառերը իբրեւ
բացայատիչ են և բացայայտեալ:

ի տաճարէն՝ որ յերուսաղէմ։ Բերէին, և ըմպէին նոքօք թագաւորն և մեծամեծք իւր։ Ըմպէին զի՞նի և օրհնէին զաստուածս ոսկեղէնս և զարծարեղէին եւ զպղինձիս եւ զերկարիս¹⁾, և զԱստուածն յաւիտենից ոչ օրհնեցին։ Ի նմին ժամուելին մատունք ձեռին մարդոյ, և զրէին ի վերայբոելոյ որմոյ տաճարի թագաւորին, և թագաւորն տեսանէր զթաթ ձեռինն՝ որ զրէը։ Յայնժամ հատան զոյնք թագաւորին (թագաւորին զոյնը նետեց) և յօդք միջոյ նորա լուծանէին, և ծունկք նորա զմիմեանս բարախէին։ Ասէ Դանիէլ, Արքայ, Աստուած բարձրեալ զմեծութիւն և զթագաւորութիւն և զպատիւ և զփառս ետ Նաբուգոդոնոսորայ հօր քում²⁾, և յորժամ բարձրացաւ սիրտ նորա, անկաւ յաթոռոյ թագաւորութեան իւրոյ, մինչեւ ծանեաւ թէ տիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան։ Եւ դու, որդի նորա Բաղտասար³⁾, ոչ խոնարհեցուցեր զսիրտ քո առաջի Աստուծոյ։ Վասն այսորիլ յերեսաց նորա (անոր կողմէն) առաքեցաւ թաթ ձեռինն, և զզիրդ զայդ

¹⁾ Այս ածականներն իրենց մէջ լուելեայն ունին զաստուածս Դյականը։ (Հմմտ. 29 էջ 3 կանոն)։

²⁾ Բացայատիչ և բացայատեալ ընդհանրապէս նոյն հուզվով կը դրսւին, և կրնան ետեւ առաջ անցնիլ. ուստի նոյն բանն է՝ եթէ ըսենք. հօր քում նաբուգոդոնառաջայ. իսկ եթէ նախդիր ունենան, առաջ դրուողը այսինքն բացայայտեալը կ'առնէ զայն ընդհանրապէս։ Օր. զնաբուգոդոնոսոր հայր բակամ զնայր և նաբուգոդոնոսոր։

³⁾ Տես 5 կանոն առյն զասին մէջ,

զրեաց։ Եւ այս ինչ է զիրդ որ զրեալ է. Մանի, Թէկէղ, Փարէս։ Մանի. չափեաց Աստուած լոգթագաւորութիւն քո և վախճանեաց զնա։ Թէկէղ. կշուցաւ ի կշիռս եւ զտաւ պակասեալ։ Փարէս. բաժանեցաւ թագաւորութիւն քո և տուաւ Մարաց և Պարսից։ Եւ ի նմին զիշերի սպանաւ Բաղտասար արքայ Քաղղէացւոց, եւ Դարեհ արքայ ա՛ո զթագաւորութիւն որ էր ամաց վարսուն եւ երկուց¹⁾։

Դանիիլ Ե.



Լ

ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ ՏԱՎՔԻԹԱՅ

Բնկենուլ, Նետել, Յեւել
Մնալ, ապասել
Առնել ճաշ, սեղան պալ
Մինչչեւ, ուսկաւին ու

Թափել, էնաւ գրինէլ
Այպն առնել, յուս ընել
Զերմաջերմ, ուս ուս
Իրք, բաներ

Ես Տուբիթ²⁾ ողորմութիւնս բազումս արարի եղբարց իմոց՝ որ ընդ իսն էին ի նիսուէ։ Զնաց իմ տայի քաղցելոց, և զձորձ իմ՝ մերկոց։ Եւ զոր (ով որ) տեսանէի ես յազգէն իմմէ թէ մեռեալ

¹⁾ Տարիք ցուցնող բառերը սեաւկան հուսկ բնութեան խնդիր կ'ըլլան։ Հսու ամաց բնութեան խնդիր է եր բային։ Ու եր ամաց վարսուն եւ երկուց (որ վախճան երկու տարու էր)։

²⁾ Տուբիթ բացայատիչ է նախ։ (Տես 45 էջ 5 կանոն)։

էր, և ընկենուին զնա արտաքոյ պարսպին¹⁾, ես
թաղէի: Եւ կամ թէ՝ յորժամ սպանանէր զոք Սե-
նեֆերիմ արժայ²⁾ գողանայի և թաղէի: Եւ ի տօ-
նին մեծի արարին ինձ ճաշ մեծ, և բազմեցայ ու-
տել և ըմպել: Ասեմ ես ցորդին իմ, ե՛րթ ած դու-
քեզ յեղբարցն մերոց աղքատաց՝ զո՞րս և զրտա-
նես, և ես մնամ քեզ: Եկն և ասէ. Հայր, մի ոմն
յազգէս մերմէ, որոյ բափեալ են ոսք նորա³⁾, կայ
ի հրապարակի անդ մեռեալ: Եւ իմ մինչեւ էր նա-
շակեալ⁴⁾ չոգայ առի զնա և բերի ի տուն իմ՝ մինչեւ
եմուտ արեգակն. փորեցի և թաղեցի զնա: Եւ
մերձաւորքն իմ այպն առնէին և ասէին. Արդ ո՞չ
ևս երկնչի (ալ չի⁵⁾ վախնար) մեռանել վասն իրացս
այսոցիկ, զի վասն որոյ հալածեցաւն (ինչ բանի
համար որ հալածուեցաւ), դարձեալ եկեալ թաղէ
զդիակունսն: Ի նմին դիշերի դարձայ՝ իբրև թա-

1) Արտաքոյ նախադրութիւնը սեռական խնդիր կ'առնէ:

2) Արժայ բացայայտիչն է Սենեֆերիմի. — Անգրագառնալ
նախորդ գասի կանոններուն՝ բացայայտիչն և բացայայ-
տալի մասին:

3) Այս խօսքին մէջ նորա աւելադրութիւն է՝ որոյ յարա-
բերական գերանունին հետ կրկնուած իբրեւ թարմատար
կամ աւելորդ բառ. որոյ բափեալ են ոսք նորա, կը թարգ-
մանուի. Որուն ոտքերը փրթած են:

4) Ինչպէս անցեալ գերբայներու՝ նոյնպէս եւ անոնցմով
ձեւացած անցեալ ժամանակներու եղակի դ. դէմքին քով՝
տէրբային սեռական կը դրուի: Ուստի այս խօսքին մէջ
իմ տէրբայի է էր նաշակեալին. = Մինչև ճաշակեալ էի ես:
(Տես Ա. դաս 1 կանոն):

ղեցի, և ննջեցի ես առ որմոյ¹⁾ զաւթին և զերեսս
իմ ոչ ծածկեցի: Ոչ զիտէի թէ ճնճղուկք նստէին
յառաստազս անդ, և աչօք բացօք (բաց աչքերով)
ի վեր հայէի, և ծրտէին ձագքն ջերմաջերմ յաչս
իմ: Եւ երթեալ իմ²⁾ առ բժիշկս, ոչինչ օգնէին ինձ:

Տովմիր Ա. — Բ



ԼԱ

ԱՐՑԱՍՈՒԻՔ ՅԻՍՈՒԾԻ ՄԱՆԿԱՆ

Արփիագեղ,	արեւու պէս քե-	Համակ,	բալուունին
Շիթ,	կանչիւ	լնջին	Վերարփի,
Սերարփի,	աւունին	Արդեօք,	արտաքւ

ԱՐՄԱՍՈՒԷ ՅԻՍՈՒԾ

Մայրենին ի ծոց³⁾.
Մըթագնի զըւարթ
Երեսաց իւրոց
Արփիագեղ լոյս:
Յոլացեալ յերկնէ
Սերարփին հրեշտակ,

1) Պատին քով. (Տես 44 էջ 3 կանոն): Կընանք ըսել նաև՝
առ որմով:

2) Ընդհանրապէս ներգործ. անցեալ գերբայի կամ ընդու-
նելութեան քով տէրբային սեռական կը դրուի. բայց չէզոք
բայերուն քով ալ նոյնը տեղի կ'ունենայ ըստ կանոնի:

3) Ի ծոցն մայրենի (մօրենական ծոցին մէջ):

Ընթացք Ա. 4

Զարտասուաց նորա
Յոսկեղէն բաժակ
Ըգչիքս ամփոփէ¹⁾.
Եւ վերասլացեալ
Նըւիրէ հօր զայն.
Արդ սովլաւ, ասէ,
Լիցի բաւութեան
Մահացուաց յուսալ²⁾
Իսկ Հայրն Երկնարնակ³⁾.
Բաւէր արդեօք դա,
Այլ Որդեակն իմ ինձ
Զարիւն իւր ցանկայ
Նըւիրել համակ :



ԼՓ

ՍՈՂՈՄՈՆ ԽՆԴՐԷ ՅՈՍՏՈՒԾՈՅ ԶԻՄԱՍՑՈՒԹԻՒՆ

Խելամուտ լինել, իեւ հառ- | Փոխանակ զի, որ լնեալ-
Յետ քո, +ու եպեւեւ [շնել] Մեծութիւն, հարուստիւն

Երևեցաւ Տէր Սողոմոնի ի քուն զիշերոյ, և
ասէ. Խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ։ Եւ ասէ Սո-
ղոմոն. Տէ՛ր Աստուած իմ, դու ետուր զծառայ քո

1) Այսպէս կարդա՛. Ամփոփէ զգիքս արտասուաց նորա յոսկե-
ղէն բաժակ կամ յոսկեղէն բաժակի։

2) Այսպէս կարդա՛. Սովաւ լիցի մահացուաց յուսալ բաւութեան
կամ սովլաւ բաւութեան յուսացին մահացու (մահկանացուք)։

3) Զեղչուած է ասէ կամ պատասխանի եւ քայլ։

Փոխանակ Դաւթի հօր իմոյ¹⁾, և ես եմ մանուկ
փոքր։ Տացես ծառայի քում սիրտ լսելոյ և դա-
տելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելա-
մուտ լինել ի մէջ բարւոյ և չարի։ Եւ հաճոյ
թուեցաւ բանն առաջի Տեառն, զի խնդրեաց Սո-
ղոմոն զայն բան։ Եւ ասէ ցնա Տէր. Փոխանակ զի
խնդրեցեր յինէն զբանդ զայդ, և ոչ խնդրեցեր քեզ մե-
ծութիւն, և ոչ խնդրեցեր զանձինս թշնամեաց
քոց. ահա ետու քեզ սիրտ իմաստուն և հանձա-
րեղ. իբրև զքեզ ոչ ոք եղև յառաջ քան զքեզ, և
յետ քո ոչ ոք յարիցէ նմանող քեզ։ Եւ զոր ոչնի
խնդրեցեր ետու ֆեզ՝ զմեծութիւն եւ զիառս³⁾:

Գ. Թագ. Գ. 5—13



1) Փոխանակ Դաւթի հօր իմոյ (իմ Դաւթիթ հօրս տեղ)։ Այս
խօսքին մէջ պէտք է որոշել բացայատիչն ու բացայա-
տեալը, որ միւնայն հոլովով դրուած են։ (46 էջ 2 կանոն)։

2) Նկատի ունենալ 31 էջ 1 կանոնը, ճշդելու համար ա-
տուրս բազումսի քերականական պաշտօնը։

3) Յարաբերականը շատ անգամ յարաբերեալէն առաջ ալ
կրնայ դրուի։ Այս խօսքին մէջ զոր յարաբերական գերա-
նունը իր զմեծութիւն եւ զիառս յարաբերեալներէն առաջ
դրուած է։ Կրնայինք ըսել։ Ետու ֆեզ զմեծութիւն եւ զիառս՝
զոր ոչ խնդրեցեր։ Իսկ եթէ խօսքը ըսչենք սապէս։ “Զայն
զոր ոչ խնդրեցեր ետու քեզ այսինքն զմեծութիւն և զփառո,,,
այն ատեն զիառս եւ զմեծութիւն բառերը բացայատիչ կ'ըւ-
լան զորին։ Բացայատիչ և բացայատիչ իրարու կը կապ-
ուին երբեմն, այսինքն, այս է. իմա, բացատրողական բառերով։

ԼԳ

ԳՈՒԹ ՄԱՅՐԵՆԻ

Յիս (մջ.), կ'աւուն, ինձի հայել
ի հասարակ զիշերի, իւս քի-
Ստնդիաց, կ'աւ ուրած [վարչէն]
Դիեցուցանել, իւս իւրանել

Կտրել յերկուս, երիստի ճեղքէն	Խոռվեցան աղիք նորա,
Առէ՛ք առ իս, ինձի բերէն	[դարձեցան]

Երեւեցան երկու կանայք Սողոմոնի¹⁾, եւ
ասէ մի կինն. Յիս, Տէր իմ, ես և կինս այս էաք
ի միում տան, և ծնայ ի տանն. Եւ եղել յաւուրն
երրորդի ծնաւ և կինս այս, և մեք առանձինն
էաք, և ոչ ոք գոյր ընդ մեզ ի տանն՝ բաց ի մէջն
երկոցունց (մեր երկուքէն զատ). Մեռաւ որդի
սորա ի զիշերի, քանզի ննջեաց ի վերայ նորա,
և յարեաւ ի հասարակ զիշերի, և ա՛ռ զմանուկն
իմ ի զրկաց իմոց, և աղախին քո ի քուն էր, և
ննջեցոյց զնա ի ծոց իւրում²⁾, և զորդին իւր ըզ
մեռեալ ննջեցոյց ի ծոց իմում. Յարեայ ընդ ա-
ռաւօտն դիեցուցանել զորդին իմ, և նա էր մե-

ռեալ. և հայեցայ ընդ նա այգուն, և ահա չէր
որդին իմ՝ զոր ծնայ: Եւ ասէ միւս կինն. Ոչ, այլ
որդի քո մեռեալն, և որդի իմ կենդանին: Ասէ
ցնոսա արքայ. Դու ասես թէ՝ Այս որդի իմ է՝ որ
կենդանիս է, և որդի դորա մեռեալն. և դու ասես.
Ոչ, այլ որդին քո մեռեալն, և որդին իմ կենդա-
նին: Եւ ասէ արքայ. Առէ՛ք առ իս զսուրն: Եւ
բերին զսուրն առաջի արքայի, ասէ արքայ. Կըտ-
րեցէք զմանուկն զսնդիաց զկենդանի³⁾ յերկուս,
և տուք զկէսն նորա դմա, և զկէսն նորա նմա:
Եւ պատասխանի ետ կինն՝ որոյ որդին կենդանին
էր, և ասէ ցարքայ, քանզի խոռվեցան աղիք նո-
րա ի վերայ որդւոյն իւրոյ, և ասէ. Յիս, տէր,
տուք նմա զմանուկն կենդանի, և մահու մի՛ ըս-
պանանէք զնա: Եւ միւսն ասէր. Մի՛ իմ լիցի եւ մի՛
դորա²⁾, կտրեցէք ընդ մէջն (մէջքէն կտրեցէք): Պա-
տասխանի ետ արքայ և ասէ. Տուք դմա զմանուկն
կենդանի, որ ասաց թէ տուք զդա նմա, և մահու
մի՛ սպանանէք զդա, նա է մայր դորայ³⁾:

Գ. Թագ. Գ. 16—28

1) Հսս Սողոմոնի բառը սեռական չէ՝ ուստի և ոչ յատ-
կացուցիչ. Վասն զի կիները Սողոմոնին չեն, այլ երկու կի-
ներ երեւցան Սողոմոնին: Ուստի Սողոմոնի տրական հոլով
բնութեան ինդիր է երեւեցան բային:

2) Փոխանակ ըսելու ի ծոցի իւրում, ի ծոցի իմում: Ընտրե-
լագոյն ձեւն է ըսել ի ծոց իւրում, և այլն. Վասն զի Դ. հոլով-
ման վրայ գացող բառերու իսկ անորոշ հայցականը իսկ
վերջահոլով տրականի տեղ կը գործածուի. Օր. Տէր յեր-
կինս յարու իւրում, և ոչ թէ յարուոյ . . .

1) Սմնդիաց եւ կենդանի ածականները իրենց գոյականին
նախդիրն առած են՝ յետադաս ըլլալով հանդերձ. ինչպէս
քիչ մը վերն ալ զմեռեալ ածականը. (Տես 42 էջ 2 կանոնին
վերջին մասը):

2) Իմ և դորա սեռական բնութեան ինդիր են լիցի էական
բային, թէև երկրորդ լիցի բայը լոելեայն կ'իմացուի: Պէտք
է գիտնալ որ ամէն ատեն էական բայը սեռական ինդիր
առնելով՝ ունենալ չի նշանակեր: (հմմտ. 33 էջ 3 կանոն:

3) Մայրը ստորոտելին է նա ին. (յիշել կանոնը):

ԼԴ

ԱՆԱՆԻԱ ԵՒ ՍԱՓԻՐԱ

<p>Խորել, հէն քոզաւ Հանել զոգի, հոդին քիւլ Դնել ի սրտի, մորտը դնել</p>	<p>Զի՞ է զի, Է՞ւ ի՞ւ ո՞ր, ի՞ն Ահ, վա՞ն Յոտն կալ, սո՞րէ ելլէլ</p>
--	--

Այր ոմն Անանիա անուն հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ¹⁾, վաճառեաց ազարակ, և խորեաց ի գնոց անտի, զիտելով եւ կնոջն²⁾. և եբեր մասն ինչ, եղ առ ոտս առաքելոցն։ Ասէ Պետրոս. Անանիա, ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո ստել ֆեզ Հոգւոյն սրբոյ և խորել³⁾ ի գնոց գեղջն. ո՞չ ապաքէն մինչ կայրն (կեցած ատենը) քո էր⁴⁾, և ի վաճառելն ընդ քո իշխանութեամբ էր⁵⁾, զի՞ է զի եղիր ի սրտի քում զիրս զայս, ոչ ստեցեր մարդկան այլ Աստուծոյ։ Եւ լուեալ Անանիա զբանս զայսոսիկ, անկաւ և եհան զոգի, և եղեւ ահ մեծ ի վերայ ամենեցուն՝ որ լուան զայն։ Յոտն կացին

¹⁾ Բացայայտիչը՝ որ է Սափիրաւ՝ իր կնաւ բացայայտեամբ հոլովով դրուած է։ (Տես 46 էջ 2 կանոն)։

²⁾ Գործիական հոլով աներեւոյթներու քով տէրբային սեռական կը դրուի։ Կրնայինք ըսել. զիտէր եւ կինն։

³⁾ Փոխանակ ըսելու՝ զի ստեցես դու Հոգւոյն սրբոյ եւ խորեցես և այլն։ (Տես 16 էջ 3 կանոն)։

⁴⁾ Տես 53 էջ 2 կանոն։

⁵⁾ Ընդ նախադրութիւնը գործիական խնդիրով տակը կը դրանակէ։

Երիտասարդքն և ամփոփեցին զնա և տարան թաղեցին։ Իբրև ժամք երեք անցին, և կին նորա ոչ զիտէր զինչ եղեալն էր, եմուտ ի ներքս։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. Ասա դու ինձ թէ այնչափ գնոց զգիւղն վաճառեցէ¹⁾։ Եւ նա ասէ. Այո՛, այնչափ²⁾։ Ասէ ցնա Պետրոս. Զի՞ է զի միաբանեցէք փորձել զհոգի Տեառն. Ահա ոսքն՝ որ քաղեցին զայրն քո ի դրան³⁾ (առ դրան)՝ հանցեն և զքեզ։ Եւ անկաւ անդէն առ ոտս նորա և եհան զոգի. Մտին երիտասարդքն, գտին զնա մեռեալ, և հանին թաղեցին զնա առ առն իւրում։

Գործ. Ե. 1—11



ԼԵ

Սէր ՏԱՆ ՏԵԱՌՆ

<p>Խնամարկել, ինամծ առնիւլ Տագնապ, հոդելար+</p>	<p>Յարկ, առան, վրան Արտաքոյ, դուրու</p>
---	---

Սիրտ իմ և հոգի
Ցնծացեն առ քեզ,
Աստուած կենդանի։

¹⁾ Տես 32 էջ 3 կանոն։

²⁾ Պէտք է հասկնալ, Այնչափ զնոց, զեղչման կանոնով։

³⁾ Պէտք է թարգմանել, էրիկդ թաղղներուն սոքերը, դրան մօտ են, և ո՞չ թէ՝ էրիկդ թաղող սոքերը . . .

Փափաքէր անձն իմ
Կեալ ընդ յարկաւ քով,
Արդ ի նմա հանդչիմ:
Երանեալ է այր
Ում⁽¹⁾ զու խնամարկես՝
Որ որբոց ես հայր:
Քե եղիտ զիւր տուն
Տառապեալ ձնձուկ,
Եւ տատրակ զիւր բոյն:
Ի գաւիթըս քո
Լաւ է ինձ մի օր,
Քան բիւրք արտախոյ⁽²⁾:
Բենն է ինձ քերեւ
Քաղցլր լուծ քոյին՝
Քան քէ հաւուց քեւ⁽³⁾:
Աստ վերջինն արև
Յօրն իմ տագնապի
Ծագեսցէ զինեւ:
Այլ երջանիկ եմ,
Զի ընդ յարկաւ քով
Ծածկեսցէ զիս վէմ:

(1) Առ փեխակ որումի. վասնզի ո, որ իբրև յարաբերա-
կոն գերանուն իրարու տեղ կը գործածուին երբեմն:

(2) Բիւրք այսինքն՝ աւուրք բիւրք: = իսկ արտախոյ մակբայ է,
Վասնզի ինդիք չունի: (Տես 39 էլ 1 կանոն):

(3) Թարգմանել. Քաղցը լուծդ աւելի թեթեւ է ինծի հա-
մար՝ քան թաշուններուն համար իրենց թել:

ԼԶ

Եղիմ եկ ՈՂՋԱԿԵԶ իկր

Կաղալ յերկուս հետս, եր- [կու հողմն կաշաւ Կարդալ, ոքնութեան իանցւլ, Հեղուլ, Ռաժեւ [Պաշտիլ Ողջակեզ, աճողջ այրուած Յօշել, կոսր կոսր ընեւ [Չոն	Շերտ, ձեղուած քայր Դիղանել, ունել, բարդել Երեքնել, երեւ անդամ ըսել, Գարշելիք, կուս + [ընեւ, Են. Մերձենալ յընդերեկս, չ- [քիսուան հագենաւ
---	--

Մերձեցոյց Եղիա զամենայն ժողովուրդն եւ
ասէ ցնոսա. մինչև ցե⁽¹⁾ըր կաղայք յերկուս հետս.
Եթէ Տէր է Աստուած⁽¹⁾, երթայք զհետ նորա:
Ես մնացեալ եմ մարգարէ Տեառն միայն. և մար-
գարէք Բահաղու՝ արք չորեքհարիւր և յիսուն:
Տացեն մեզ երկուս եզինս, և ընտրեսցեն իւրեանց
զմին, և յօշեսցեն և դիցեն իվերայ փայտից, և հուր
մի դիցեն, և ես արարից (պիտի պատրաստեմ)
զմիւս եզնն և եղից ի վերայ փայտից, և հուր ոչ
մատուցից: Եւ կարդասնիք զանուն աստուծոյն
ձերոյ, և ես կոչեցից զանուն տեառն Աստուծոյ
իմոյ, և Աստուած որ լուիցէ հրով նա է Աստուած:
Եւ առին (մարգարէքն Բահաղու) զզուարակն, և
արարին, և կարդացին զանուն Բահաղու յայզուէ

(1) Կը թարգմանուի. Եթէ Տէրը Աստուած է: Բառ այս
սբոշել ստորագելին:

մինչև ցհասարակ օր, և ասէին. Լուր մեզ, Բահադր, լուր մեզ։ Եւ ոչ գոյր բարբառ, և ոչ ունկընդրութիւն։

Եւ այպահնեաց ի միջօրէին զնոսա Եղիա և ա-
սէ. Մեծաձայն կարդացէք, զի Աստուած է. թե-
րեւս զբօսանք ինչ իցեն նմա¹⁾, կամ թէ ի քուն
իցէ և յառնիցէ։ Եւ իբրև մերձեցաւ յընդե-
րեկմն, խօսեցաւ Եղիա ընդ մարդարէս գարշել-
եացն եւ ասէ. Ի բաց կացէք. արդ ես արարից
զողջակէզն իմ։ Եւ ի բաց կացին և զնացին։ Եւ
առ Եղիա երկոտասան քար և շինեաց զքարինսն
յանուն Տեառն. Եւ եղէզ զշերտսն ի վերայ սե-
ղանոյն՝ զոր արար. և յօշեաց զողջակէզն և եղէզ
ի վերայ շերտիցն։ Եւ ասէ. Առէ՛ք ինձ չորս սա-
փորս ջրոյ և հեղէք ի վերայ ողջակիզիդ և ի վե-
րայ շերտիցդ։ Եւ ասէ. Կրկնեցէք. և կրկնեցին։
Եւ ասէ. Երեքկնեցէք և երեքկնեցին։ Գնայր
չուրն շուրջ զսեղանովն. և աղաղակեաց Եղիա յեր-
կինս և ասէ. Լուր ինձ, Տէր, լուր ինձ հրով, և
ծանիցէ ժողովուրդս թէ դու ես Տէր Աստուած։
Եւ անկաւ հուր յերկնից և եկեր զողջակէզմն եւ
զշերտսն։ Իբրեւ Ետես ամենալի ժողովուրդն,

¹⁾ Եսկան բայի բնութեան ինդիքը փախանակ ռեռակա-
նի որպահանով ու կը գրուի չսս անդամ: (Համեմատէ 53
էջ 2 կանօն):

անկան 1) ի վերայ երեսաց իւրեանց, և ասեն. Արդարութեան Տէր՝ նա է Աստուած, Տէր՝ նա է Աստուած։
Գ. Թագ. ԺԸ. 21—39

LH

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ ՆԻՆՈՒՔԱՑԻՈՑ

Ահեակ, Յախ (Յեւտ, Հովհաննէս)	Քաղելողւոց, Հայէին +աշ-
Վիճակ արկանել, Գիշահ	[ա-էլլ]
Վիշապ ձռւկն, Խեր Յո-կը	Ոչ ճանաչել զաջ և զահ-
Ի վաղիւանդր, հերեւեաւութը	[եակ, ա-էխում-ին ըլլու

Եղեւ բան ծեառն առ Յովիսան և ասէ . Արի
և զնա ի Նինուէ , և քարոզեաչիր անդ , զի ել ա-
ղաղակ չարութեան նոցա առ իս : Յարեաւ Յով-
նան փախչել յերեսաց ծեառն . Էջ ի Յոպպէ , եզիտ
նաւ՝ որ երթայր ի Թարսիս , և եմուտ ի նա , և
Տէր յարոյց հողմ . Եղեւ մըրիկ մեծ , և նաւն ի
վտանգի կայր ի խորտակել : Երկեան նաւավարքն
Երկիւլ մեծ²⁾ , և ասեն իւրաքանչիւր³⁾ ցընկեր

1) ԵՐԲ ՄԵՇՐԱՋԻՆ ԿՊԱԿԻ Բառ ՏԸ ԸԼԱՄ ԻՆԿ ԻՄԱՍՏԸ ՀՎԴ-
ՆԱԿԻ, Բայց թէ՛ եղակի և թէ յ-գնակի կրնայ գըստէւ, ինչ-
պէս հոս կը տեսնուի: (Տես ՏՏ էջ 1 կանոն):

2) Ներդաշտական և չէղոք բայերը չառ անգամ այցա-
կան հուսված կառնեն իրենց արմատը կամ արմատին ճա-
րառը. բայց գործիական հուսվի զեր կը կառարէ ոչ այ-
ցականը.—Եւկեան Եւկիւզ Անձ կը թարգմանուի (Անձ վախով
վախոցան): Հայ Եւկիւզը Այսպէս ճառավեան խնդիր է:

3) Խւանանիւրը իրեկ գոյական և իրեկ յօդնակի գործածութեալ բայն ալ յօդնակի էը գրուի: Գեղ է գիտաւ որ խւանանիւրը իրեկ սեռական և որովակ ալ էը գործածուի, առանց իր ձեւ գորիեւը, այսինքն՝ առանց իւրաքանչիւրու, իւրաքանչիւրու ձեւերծ բնուսներու:


իւր . Եկայք արկցուք վիճակս և գիտասցուք վասն ո՞յր են չարիքս այս : Արկին վիճակս, և ել վիճակն Յովիսանու : Առին զՅովսան և ընկեցին ի ծովի, և գաղարեաց ծովի ի խոռովութենէ իւրմէ : Հըրաման ետ Տէր կիտին մեծի կանել զՅովսան, և էր Յովսան ի փոր կիտին զերիս տիւս եւ զերիս զիշերս¹⁾: Յաղօթս եկաց Յովսան ի փորոյ կիտին, և հրամայեցաւ ի Տետոնէ վիշտպ ձկանն, եւ եթուք զնա ի ցամաք : Յարեաւ Յովսան և զնաց ի Նինուէ, քարոզեաց և ասէ . Այլ ևս Երեմ աւուրժ²⁾, և Նինուէ կործանեսցիւ : Հաւասացին արք Նինուէ-ացիք յԱստուած . զգեցան քուրձ, և դարձան յիւրաքանչիւր նաևապարհաց իւրեանց³⁾ չարաց : Ետես Աստուած և զղջացաւ ի վերայ չարեացն՝ զոր խօսեցաւ առնել նոցա և ոչ արար : Եւ ասէ Յովսան . Ո՞վ տէր, զիտէի թէ դու ողորմած ես եւ զիթած, երկայնամիտ եւ բազումողորմ, եւ զղջանաս ի վերայ չարեաց : Ել ի քաղաքէ անտի եւ նստաւ յանդիման քաղաքին : Եւ հրաման ետ Աստուած դգմենւոյն, և ել ի վերայ զլիսոյն Յովսանու՝ լինել նմա հովանի, և ուրախ եղեւ

1) Տես 31 էջ 1 կանոն . 43 էջ 3 կանոն :

2) Զօրութեամբ կ'իմացուի են կամ անցցեն բայլը :

3) Հոս իւրամանչիւրը իրբեւ ստացական ածական գործածուած է, և իրեն վերաբերող գոյականը յոգնակի բլլալով՝ վերանունն ալ ետեւ յոգնակի է զրուած — իւրեանց : Կըրնայինք ըսել նաև, «և գարծան իւրամանչիւր ի ճանապարհաց իւրեանց չարաց» : (Հմմտ . 3 կանոնը առյն դասին մէջ) :

Յովսան ի վերայ դգմենւոյն : Եւ հրաման ետ Աստուած որդանն՝ առաւօտուն ի վաղիւ անդը . Եհար Յովսանին և ցամաքեցաւ : Անկաւ արեն զգլիսովս զդդմենին և քամաքեցաւ : Անկաւ արեն զգլիսովս է ինձ մեռանել քան զայս կեանս իմ : Եւ ասէ Տէր . Դու խնայեցեր ի դգմենին՝ յոր ոչ եղեր աշխատ (որուն համար նեղութիւն մը չկրեցիր). Ես ո՞չ խրնայեցից ի Նինուէ, յորում բնակեալ են աւելի քան զերկոտասան բիւր մարդիկ՝ որ ոչ ծանեան զայ և զահեակ իւրեանց : Ի գրոյ Յովսանու



ԼԸ

Ա.ՌԵԴԾՈՒԱԾ

Ընթանալ, +ալւ, Հալւ
Սնողող, Նմրջուած

Առասպել, հանելու-է
Գիտակ, Գիրցու

Առանց քայլելոյ
Ընթացաւ ընդ ծով¹⁾,
Եւ չունէր նաւակ :
Անողող ի ջրոյ²⁾

1) Տես 39 էջ 2 կանոն :

2) Ածականներն այլ եւ այլ հոլովով խնդիր կ'առնեն :
(Տես 8 էջ 3 կանոն):

Թաղեցաւ ընդ ջրով
ի ծովուն յատակ։
Զուրկ էր նա յօդոյ¹⁾
Մեռեալ ոչ գոլով՝
Եւ ընչեր յսակ²⁾։
Ո՞վ իցէ այս մարդ³⁾,
Ասա դու ինձ արդ,
Եւ առասպելիս
Իմ զիտակ լիսիս։



ԼՅ

ԴԱԼԻԹ ԵՒ ԳՈՂԻԱԹ.

Ճակատել, շարուիւ (զօրքեւ)	Այլազգի, սրարուէտէ (Փղըշ- Հեղեղատ, յոր [րու])
Ճակատ, շար+ (զօրքերու)	Գիա՞րդ, ի՞նչուն [տացի]
Մախաղ, առողբակ (հովիւի)	Գեղարդն, դան, նիշակ
Պարս, պարսառին	Ջգել (զձեռն), (յեւ+ը) եր- Պարս, պարսառին
	Սսպար, վահոն [իշնցնել]

1) Զուրկ ածականը՝ որ հոս ստորոգելի է՝ իր խնդիրը բա-
ցառական հոլովով կ'առնէ։

2) Ծնչեր յսակ (ազատ շունչ կ'առնէր)։ Յսակ բառը որ ա-
ծական մըն է, հոս իրը մակրայ գործածուած է։ Վասն զի
ածականներէն ոմանք իրեւ մակրայ երբեմն կը գործածուին։

3) Ո՞վ բառը ստորոգելի է մարդին։ Պէտք է գիտնալ որ
խօսքի մը մէջ անծանօթ բառ մը գտնելու համար գործա-
ծուած հարցական բառերը (ո՞վ, զի՞նչ, ևայլն) այդ անծա-
նօթ բառին պաշտօնը կ'ունենան։

Ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց ի
պատերազմ (պատերազմի համար), և Սաւուղ և
արք Իսրայելի ճակատեցան ի պատերազմ ընդդէմ
այլազգեացն։ Եւ ել այր զօրաւոր ի ճակատէ այ-
լազգեացն՝ Գողիաթ անուն նորա։ Եկն եկաց,
ձայն ետ ի ճակատն Իսրայելի և ասէ ցնոսա։ Ըն-
դէր ելանէք ճակատել ի պատերազմ ընդդէմ մեր։
Ընտրեցէք դուք ձեզ այր մի, և ես և նա մենա-
մարտեցուի¹⁾ երկոքեան։ Եթէ կարասցէ հարկա-
նել զիս, եղիցուք մեք ձեզ ի ծառայս²⁾։ ապա
թէ ես յաղթեցից, եղիջիք դուք մեզ ի ծառայս։
Իբրև լուաւ Սաւուղ եւ ամենայն իւրայէլ³⁾ ըզ-
բանս այլազգւոյն, զանի հարան⁴⁾ և երկեան
յոյժ։ Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Ծառայ քո եր-
թիցէ և մարտիցէ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ⁵⁾։

1) Եթէ խօսքի մը մէջ տէրբայիները տարրեր դէմքերով
ըլլան, բայց յոդնակի կը դրուի ու նախապատի դէմքի տէր-
բայիին հետ կը համաձայնի։ Բայտ այսմ՝ ես եւ նա մենամարտեցուի
խօսքին մէջ երկու տարրեր դէմքի տէրբայիներ գտնուելով
մենամարտեցուի բայց յոդնակի դրուած է՝ ես գերանուն տէր-
բայիին դէմքին համաձայն։ Պէտք է գիտնալ որ առաջին
դէմքը որ է ես նախապատիւ է երկորդ դէմքէն՝ որ է ԴՈՒ,
և երկորդն ալ նախապատիւ է երրորդ դէմքէն՝ որ է ՆԱ։

2) Երբ գոյական բառ մը ստորոգելի է, իով անորոշ հայցա-
կան կը դրուի սովորաբար, և թիւով կը համաձայնի իր են-
թակային։ Օր. Դուք եղիջիք ինձ յուստերս և ի գուստերս
(դուք ինձի մանչ ու աղջիկ զաւակներ պիտի լլլաք)։

3) Զեղչեալ է բայց լուաւ կամ լուան (բոլոր իսրայէլ՝
այսինքն իսրայէլացիք լսեցին...) (հմմտ. 25 էջ 1 կանոն)։

4) Հարկանել բայց զ նախդիրով վերջահոլով տրական բր-
նութեան ինդիր կ'առնէ։ Օր. Հարկանել զքարի (քարի զար-
նել), ևայլն։

5) Ընդ նախազրութիւնը կրկնուած է թէ գոյականին և
թէ ածականին վրայ, (փոխանակ ըսելու։ Ընդ այլազգւոյն
այնմիկ (այն Փղշտացիին հետ)։

Տէր Աստուած որ ապրեցոյց զիս ի ձեռաց առիւ
ծուն և ի ձեռաց արջոյն՝ ապրեցուացէ զիս ի ձե-
ռաց այլազգւոյն այնորիկ։ Ասէ Սաւուղ։ Երթ,
և Տէր եղիցի ընդ քեզ։ Եւ առ զցուան իւր ի ձե-
ռին իւրում, և ընտրեաց իւր հինգ քարինս ողորկս
ի հեղեղատէն և եղ զնոսա ի հովուական մախա-
ղին, և զպարսն ի ձեռին իւրում, և մերձեցաւ
առ այրն այլազգի։ Եւ զնայր և զայր այլազգին
և մերձենայր առ Դաւիթ։ Իրրե հայեցաւ և ետես
զԴաւիթ՝ արհամարհեաց զնա, զի էր պատանեակ
խարտեաշ և աչօք զեղեցիկ, և ասէ. Զիա՛րդ, չո՞ւն
եմ ես, զի ցպով և քարամբք զաս ի վերայ իմ։ Եկ
առ իս, և տաց զմարմին քո թուչոց երկնից և զա-
զանաց երկրի։ Եւ ասէ Դաւիթ ցայլազգին. Դու զաս
ի վերայ իմ սրով և զեղարդեամբ և ասպարաւ, ես
զամ ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց։
Եւ աճապարեաց, ձգեաց զձեռն իւր ի մախաղն և
առ անտի քար մի, եւ պարսաքարեաց եւ եհար
զձակատ այլազգւոյն. և եմուտ քարն ընկ սաղա-
ւարտն¹⁾ ի ձակատն, և անկաւ ի վերայ երեսաց
իւրոց յերկիր։ Ըսթացաւ Դաւիթ, առ ըզսու-
սեր նորա և եհատ զզովի նորին²⁾։ Իրրեւ տե-
սին այլազգիքն թէ մեռաւ զօրաւորն նոցա, փախ-
եան. և արք Խորայելի յարձակեցան զհետ նոցա
և կոխեցին զբանակս նոցա։ : Ա. Թագ. Ժէ.

¹⁾ Տես 38 էջ 2 կանոն։

²⁾ Նու գերանունը եթէ կրկնել պէտք ըլլայ, նոյնը կը
դրձածուի անոր անզ սպարաբր։

Ժ

ԴԱՒԻԹ ԵՒ ԱԲԻՍՈՂԱՄ

Երիվար, Յի	Պարտիլ, յանբառէլ
Պատուիրակ, Դ-Դ-Ք-Հ-Հ-Հ-Հ	Հանդէս առնել զօրուն
Եղջեր (ած.), Երջերեց, Եշ- [Ա-Ե-Ց Հ-Հ-Հ-Հ]	Նըրը հ-ի-Ե-Լ, աչէ անընեւ թաւ, սպերը շար
Հետիոտս (մկ.), Ռ-Ռ-Ն	Բոկ, բ-ո-Է-Է

Արար Արիսողոմ կառս և երիվարս, և ա-
ռաքեաց պատուիրակս յամենայն ցեղս¹⁾ Խորա-
յելի, և ասէ. Ի լսել ձեր²⁾ զձայն եղջեր փո-
ղոյ, ասասչիք եթէ թազաւորեաց Արիսողոմ։
Եւ եղեւ ժողովուրդ բազում երեալ (զացած
եղաւ, զնաց) ընդ Արիսողոմայ։ Ասէ Դաւիթ ցա-
մենայն ծառայս իւր. Արիք և փախիցուք։ Ել
արքայ և ամենայն տուն նորա հետիոտս։ Ելա-
նէր ընդ զառ ի վերն Զիթենեաց, ելանէր եւ
լայր, և ինքն երթայր բոկ։ Եւ Արիսողոմ և ա-
մենայն Խորայէլ մտին յերուսաղէմ։ Եւ Դաւիթ
եհաս ի բանակսն, և հանդէս արար զօրուն՝ որ
ընդ նմա, և կացոյց ի վերայ նոցա հազարա-
պետս և հարիւրապետս. պատուէր ետ արքայ
և ասէ. Խնայեսչիք ի պատանեակ իմ Արիսո-
ղոմ³⁾։ Եզկ կոփւ յանտառին եփրեմայ. և պար-

¹⁾ Կընանք ըսել նու ամենայն ցեղ։ (Հմմ. 12 էջ 1
կանոն. նու 18 էջ 4 կանոն)։

²⁾ Հմմ. 18 էջ 2 կանոն։

³⁾ Տես 46 էջ 2 կանոն. նու 51 էջ 1 կանոն։

տեցաւ անդ զօրն իսրայելի առաջի ծառայիցն Դաւթի : Դիպեցաւ Արխողոմ առաջի ծառայիցն Դաւթի , և էր հեծեալ ի ջորտով իւրում . եմուտ ջորին ընդ թաւ կաղնեաւ մեծաւ . պատեցաւ զլուխ նորա ընդ կաղնեաւն , և կախեցաւ ընդ երկինս եւ ընդ երկիր¹⁾ , և ջորին անց ի ներքոյ նորա (անոր տակէն) : Եւ ետես այր մի և պասմեաց Յովաբայ : Առ Յովաբ երիս նետս և եհար զնոսա ի սրտի Արխողոմայ , և ընկէց զնա ի վիճ մեծ յանտառին . և եհաս Քուսի և ասէ ցարքայ . Աւետիք Տեառն իմոյ արքայի²⁾ , զի արար Տէր իրաւունս : Ասէ արքայ . Եթէ ողջո՞յն իցէ մանկանն իմոյ³⁾ Արխողոմայ : Եւ ասէ Քուսի . Եղիշին իրրե զմանուկն թշնամիք տեառն իմոյ արքայի : Խոռվեցաւ արքայ և ելաց , և այսպէս ասէր ի լալ իւրում⁴⁾ . Որդեա'կ իմ Արխողոմ , Արխողոմ որդեա'կ իմ , ո՛ տայր զմահ իմ փոխանակ քո . ես փոխանակ քո , Արխողոմ որդեակ իմ , որդեա'կ իմ Արխողոմ :

Բ. Թագ . ԺԵ—ԺԸ

1) Ընդ նախադրութիւնը եւ շաղկապով կապուած երկու անորոշ հայցականներու առջե կրկնուելով կը նշանակէ (երկու բանին) մէջեղը :

2) Տես 51 էջ 1 կանոն :

3) Եթէ ողջո՞յն իցէ մանկանն իմոյ Արխողոմայ : Այս խօսքին մէջ մ անկանն արական րնութեան խնդիր է իցէ բային . պէտք է թարգմանել . Առո՞ղջ է Արխողոմ զաւակս , կամ հնչակս է , աղէ՞կ է :

4) Ի լալ իւրում . այս խօսքին մէջ իրրե ստացական ածական զործածուող իւրումը իրրե զերանուն պէտք է ճանչնալ = իւր իւր (նորա) : Օր . ի գալ իմում = ի գալ իմ . ի գատել լում = ի գատել լո , և այլն :

ԽԱ

ՅՈՎԱԲԻ ԵՒ ԵՂԻՄՈՐԻ ՆՈՐԱ

Խորհուրդ ի մէջ առնուլ ,
Զրոյց , լուր [Խորհուրդ ընել
Զգել , վեր +աշէլ
Սուգ ունել , սուգ բանել

Գտանել շնորհս , ուրեմն աւտա
Կացուցանել , հարաբել
Բնկենուլ , յէել ներել
Անդ , սէպը մէկ ուր

Իսրայէլ (Յակոբ) սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն զորդիս իւր : Եւ նախանձեցան ընդ նման¹⁾ Եղիշարքն նորա : Եւ զնացին արածել զիսաշինս հօրն իւրեանց : Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ . Երթ , տես Եթէ ո՞ղջ իցեն Եղիշարքն քո և խաշինք , և բեր ինձ զրոյց : Տեսին զնա Եղիշարքն յառաջազոյն ի հեռաստանէ , և խորհուրդ վատ ի մէջ առին՝ սպանանել զնա : Եւ ասեն իւրախանչիւր ցԵղիշայր իւր²⁾ , Եկայք սպանցուք զնա , և ընկեցուք ի մի ի զբոց աստի , և ասաւցուք՝ Եթէ զազան չար Եկեր զնա : Եւ իրրեւ եկն Յովսէփ , մերկացին զպատմուձանն նորա ծաղկեայ ի նմանէ , և առին ընկեցին զնա ի զուր

1) Կիրք ցուցնող չէզոք բայերն . ինչպէս են նախանձիլ , զարմանալ , զայրանալ , և այլն , իրենց բնութեան խնդիրները սովորաբար ընդ նախադիրով կառնան :

2) Տես 59 էջ 3 կանոն :

մի, և նստան ուտել գհացն։ Եւ անցանէին արք Մադիանացիք վաճառականք։ Ասէ Յուղա ցեղը բարսն իւր։ Զի՞նչ օդուտ է եթէ սպանանիցեմք զեղբայրն մեր։ Եկայք վաճառեսցուք զնա իս մայելացւոց։ Եւ լուան նմա եղբարքն իւր, ձղեցին հանին զՅովսէփի ի գըոյ անտի, և վահառէցին իսմայելացւոց քսան դահեկանի¹⁾։ Եւ առեալ զպատմուճանն Յովսեփայ, զենին ուլ այծեաց և թաթառեցին զպատմուճանն յարեանն, և առաքեցին զայն առ հայրն իւրեանց և ասեն, Զայդ գտաք, եթէ որդւո՞յ քո իցէ²⁾։ Եւ ծանեաւ զնա և ասէ։ Պատմուճանս որդւոյ իմոյ է. գաղան չար եկեր զնա։ Պատառեաց զհանգերձս իւր և սուգ ունէր ի վերայ որդւոյն իւրոյ։ Իսկ Մադիանացիք վաճառեցին զՅովսէփ յԵղիպտոս՝ Պետափրեայ դահնապետի Փարաւոնի³⁾։ Եւ էր Տէր ընդ Յովսեփայ. և եղիտ շնորհս առաջի տեառն իւրոյ, և կացոյց զնա ի վերայ տան իւրոյ եւ զամենայն ինչ ետ ի ձեռս Յովսեփայ։ Եւ եղեւ օրհնութիւն Տեառն ի վերայ ամենայն ընչից նորա ի տան և յանդի։

Ծննդ. Լէ—ԼԹ

1) Տես 32 էջ 3 կանոն։

2) Տես 53 էջ 2 կանոն։

3) Տես 46 էջ 2 կանոն։

ԽԲ

ԵՐԳ

Ի ԾՆՈՒՆԴ ՓՐԿՉԻՆ

ՎՐՈՅՐ ԵՒ ԱՌԱՆ ՀՈՎԻԻՔ Ի ԲԵԹՂԵՀԵՄ

Նորանշան, շարժանալի	Ներկուռ, բէտուն, վարժ
Վարսամ, գէստո՞ր ասոր	Օձասպան, օձը (սապանան)
Օ՞ն առնուլ, +աջալէրուէլ	Յայց գալ, այցէլ [աղաննող]
Երկնահանգէտ, երինչինան	Հարկանել նուագ, երէել
Մանկացեալ, իբրւ անուէ	Աղքատին, իեղն [իործէտուլ]
Ածել զմտաւ, մածել [ձնած]	Աւետարանել, աւետել

ՎՐՈՅՐ

Գիտիցե՞ս, Առան,
Զի ծնաւ մեզ արքայ,
Լոյս նորանշան
Զիւրե ցոլանայ։
Վարսամ ի յերկնէ
Զեդեալն ի մըսրի

Աւետարանէ
Փրկիչ աշխարհի¹⁾։
Արքայք գերապանձ
Առ նա խոնարհին,
Եւ զօրք ի բարձանց
Նուիրաբերք նմին²⁾։
Օ՞ն առեալ եւ մեր³⁾

1) Հոս վրկիչ բառը ստորոգելին է զեդեալնին, վասն զի ներգործական բայի մը սեռի խնդիրն աւ իր ստորոգելին կ'ունենայ անորոշ հայցական հոլովով։

2) Թարգմանէ. Եւ հրեշտակներ երկինքէն նուէրներ կը բերեն անոր։ — Նմին գործածուած է նմափ տեղ։

3) Անցեալ դերբայներու քով տէրբային սեռական հոլով կը դրուի. Կընանք ըսել նաեւ. Օ՞ն առցուք եւ մեք եւ մառւցուք, եւայլն։ (Տես 17 էջ 2 կանոն)։

Նոցին արդ ըգհետ,
Մատուցում նրւեր
Յայրն երկնանգէս¹⁾:

ԱԺԱՆ

Ըգդոյն իոկ և իմ
Ածեալ բզմբառ²⁾ ,
Այլ յոյժ վարանիս
Եթէ զի՞նչ բընաւ՝
Հովիւմ չխռոր³⁾
Տանել կարիցեմք
Առ որ թագաւորք
Ի յայց գան վըսեմք:

ՎՐՈՅՑ

Մի՛ ինչ վարանիր .

Ոչ զանձո ի հովուաց
Խընդրեսցէ ի ձիր⁴⁾
Մանկացեալն Աստուած .

Այլ մեր աղքատինք
Այս լիցին նըւէրք .
Առնում ես սըրինգ ,
Դու ներկուս ի յերգ՝
Երգետ զյաղթանակ
Գառինն օձասպան ,
Մինչ ես բընըւագ
Հարից հովուական ,
Եւ քան զամենայն
Նըւէր մեծարգոյ՝
Լիցի Մանկանն այն
Երգըս մեր հանոյ⁵⁾:



Ա Զ Դ

Նախընթաց հատուածներու ներքեւ Քերա-
կանական (համաձայնական) ա՛յնչափ կանոն
միայն հարկ համարեցինք աւանդել , որչափ կա-
րենու էր ուստիողի մը եւ միանգամայն կա-
րելի սորովիլ Ա. Տարւոյ ընթացքին :

Հետագայ հատուածներուն մէջ , ինչպէս կը
տեսնուի , բաւականացած ենք միայն սուրա-
գծելով այն բառերը կամ խօսերը , որոնց կա-
նոնները անծանօթ չեն աշակերտին եւ կրնան
պահանջուիլ :

Դիտել կուտանք թէ՝ անօգուտ չ'ըլլար ան-
ուուտ՝ եթէ ուսուցիչը արձակի վերածել տայ հոս
ամփոփուած չափաբերեալ առակեները :

Դասագրէիս վերջը դրած ենք նաեւ ՅԱ-
ԻԵԼՈՒԱԾ մը Բարդումներու եւ Աժամցումնե-
րու , որոնց կ'արծէ անդրադառնալ ամէն ան-
գամ որ պէսք ըլլայ :

1) Յայրն երկնանգէս , դէպի այն երկնանման այրը :

2) Տես քիչ առաջ սեռական տէրբայիի կանոնը :

3) Փախանակ ըսելու . Մեք հովիւքս չքաւորք :

4) Ի ձիր . բնութեան խնդիր ըլլալէ աւելի՝ ստորոշելի է .

Կը թարգմանուի իրեւ ձիր (ընծայ) (հմմտ. 63 էջ 2 կանոն):

5) Ստորոգելի և ոչ ածական :

Ա

ԾԵՐ ՈՄՆ ԵՒ ՄԱՀ

Զահի հարկանել, շաբան-
Պարտասիլ, յունիւ [ըէլ
Զճանապարհայն, ճաճքառ
Հարկիլ, սովորուիլ [կըս]

Դնել յերկիր, գերինը բաւ
Յանդիման, (մկ.) ՛տիսցը
Թշուառական, նշառա-
Հէք, դժբախ

Ի միում աւուրց ԾԵՐ ոմն հատեալ փայտ
յանտառէ և բարձեալ յուս իւր բերէր ի տուն.
այլ պարտասեալ զճանապարհայն՝ հարկեցաւ դը-
նել յերկիր զբեռն իւր, և սկսաւ յօգնութիւն
կարդալ զՄահ։ Եւ ահա յանդիման եկն ել ե-
րեցաւ Մահ, և եհարց ցնա՝ եթէ առ ի՞նչ կո-
չէր զնա։ Յայնժամ զահի հարեալ՝ պատասխանի
ետ նմա ԾԵՐՆ և ասէ։ «Զի տայցես յուս ըզ-
բեռն իմ»։

Ցուցանէ առակս զի ամենայն մարդ սիրէ
զկեանս, թէպէտե հէք իցէ և թշուառական։



Բ

ՆԱՍՐԵՑՑԻՆ ԵՒ ՊԱՐՏԱՏԵՐՆ

Պատառատուն, պարուած
Պարտեօք (պարտիք),
[դարուած]

Յամօթ լինել, աման-
Աղագաւ, (նիս.) հա-
[մա]

Լաւ է զգենուլ աղքատ քան զոլ պարտապան։

Խրատեալ յիւրոց բարեկամաց նասրէտտին,
Զի չէր վայել ըրջել նմա
Պատառատուն ըզգեստուք,
«Բարւոք խրատէք» ասաց, և ել ի շուկայն՝
Առնուլ իւր ձորձը վայելուչը պարտեօք։
Յետ ոչ բազում աւուրց մինչ կայր ի ժողովի,
Գայ պահանջել դերձակն ըզգինս ըզգեստուն։
Յայնժամ յամօթ լեալ ծերունին՝
«Ո՞չ, ասէ, այսր աղագաւ
Պատառատուն ձորձս ըզգենուլ յանձն առնուի
Քան թէ լինել պարտապան»։



Գ

Ա Յ Գ Ի

Պարզել ոգւոց, հոդին ուուլը	Պատառել յակօսս, աման-
Խարխարել, ունիսուզը ը-	Տալ իմանալ, հայցնէն։
Ողջոյն, ամբողջ լնել (հուլ)	Ի միտ առնուլ, հայնաւ

Ի պարզել ոգւոցն ասէր հայրն ցերեսին
որդիս իւր. «Որդեա՛կը իմ, չունիմ այլ ինչ թո-
ղուլ ձեզ բայց միայն զիւզս զայս, և զայզին
որ շուրջ զնովաւ, և անդ կայ զանձ ծածկեալ։

74

Սկիզբն արասջիք վարելոյ զերկիրն և դաջիք ըղ-
գանձն զայն»։

Յետ մահուան հօրն, որդիք նորա փութա-
ցան յառաջ քան զամենայն խարխարել զայզին
ողջոյն, այլ չգտին անդ ոսկի կամ արծաթ։ Եւ զի
չէր նոցա երթիք պատառեալ յակոսս զայզին՝
որպէս արարինն, ի նմին ամի երեր առատ ող-
կոյզս խաղողոյ։

Յախժամ ի միտ առին՝ թէ զի՞նչ հայր իւր-
եանց տայր նոցա իմանալ գանձիւն ծածկելով։

Դ

ԵՍՈՎԳՈՍ ԵՒ ԱՏԱՀԱԿ

Դանկ, ուսուկ

Փարթամ, հարաւոր

Պատուհաս, ուսուկ

Արէժ տալ, ուսուկ իւն

Յաջողութիւն զբազումս ի վտանգ արկանէ։

Ոֆն ըստահակ եհար քարամբ զեսովպոս։
Իսկ նա՝ «կեցցե՛ս» ասէ, տըւեալ նըմա դանկ,
եւ յաւելու. «Աւելի ինչ ոչ ունիմ»,
Բայց ուսուցից ուստի ֆեղ մարթ է առնուլ.
Ահա հըզօր ոք և փարթամ հասեալ զայ,
Ըզնա նոյնպէս հա՛ր քարիւ,
Եւ զարժանին ընդունիցիս փոխարէն»։
Հաւանեցաւ նա և արար ըստ խրատուն,
Սակայն ածեալ ի պատուհաս՝
Խիստ տանջանօք ետ վըրէժ։

Ե


ԳԱՅԼ ԵՒ ԿՈՒՈՒԿԻՆ

Միկիւ, մէջ յունէւ
Մուծանել, յոցնէւ
Երկայնաձիգ, երիայն

Ուլն, ան, վէւ
Զայս օրինակ, այս կերպուն
Ակնարկել, նայէւ, ուշուն
Երկայնաձիգ

Մխեալ կայր ոսկը ի կոկորդ Գայլոյ՝ որ
վարձս խոստացաւ կոնկան, եթէ հանիցէ զոսկըն
յորկորոյն։ Երկայնաձիգ ուլամբն յաջողեաց կը-
ուընկան խլել զայն ի բաց, և խնդրեաց ի նմանէ ըզ-
պայմանեալ վարձսն։ Նախ ծիծաղեցաւ Գայլ, և
ապա կրճեալ զատամունս իւր ասէ. «Նաև իսկ
համարեսնիր քեզ վլարձ զի ողջանդամ զերծու-
ցեր յորկորոյ և յատամանց Գայլոյ զգլուխ քու-
և առանց իրիք վնասու»։

Ակնարկէ առակս յարս նենգաւորս՝ որք յետ
միանզամ զերծանելոյ ի վտանգից՝ զայս օրինակ
յայտ առնեն զշնորհակալութիւն առ բարերարս
իւրեանց։



Զ

ԱՐՁ ՍՈՎԵԱԼ

Զկայ առնուլ, իւնէւ

Մխրձել, իւնէւ (ըսուկ մէջ)

Հմբուխնել, ուսուկ բերնէ

Կռուել, էսիւնէ ինուն

Ճարակ, ուսուկ

Հաս և խած լինել, լունէւ

Մայրիք, ուսուկ

Ընդոստնուլ, յսուկ

Արջ ի մայրիս եթէ չզտցէ իւր ճարակ,
ի ծովափն ուրեմն գիմեալ ի ժայռուտ
եւ զկայ առեալ ի վիմի՝
Ժակաւ ըզսրունսըն մըխըրձէ անդր ի հուն.
եւ ի գալ խեչափառից կըուուել յոտիցն ի մուշակ՝
Բնդոստուցեալ ի ցամաք՝
Զաւարառեալ ժրժմակսն ի բաց թօթափէ,
եւ ըմբոշինէ եղեալ նոցին հաս և խած.
Այսպէս բաղցոյ և զանմըտին սրելով զուշ.



Է

ԱՂԲԵՐԱԿԻՆ

Տօթակէզ, Դուռէն Ա: Ռու	Յեղյեղել, Գւշ Խընել (Դուռ Հը)
Առուիւ, Հւշւ Ջ-րէ Դէ-	Յոգւոց հանել, Հ-ս-ս-վ-լ
Ժանտ, Էլու, Շ-ս-ս-է-ա-ր	Առնուլ յարբութիւն, Է-ւ-լ
Խօթութիւն, Հ-ս-ս-ն-դ-ս-ն-է-ն	Վարսագեղ, Ք-ե-ւ-ց-ի Շ-ս-շ-ը-ն-է-

Ի միում ի տօթակէզ աւուց ամարայնոյ
Ճիշէր Զարեհ ընդ դաշտորայս։ Այտք նորա կար-
մըրացեալ էին, և քիրտն առուիւ հոսէր ի ճա-
կատուէն։ Մանկին հէք, կիսամահ ի ծարաւոյ,
եհաս յանկարծ յաղբերակն մի՝ որ բխէր ի ներ-
քոյ ժայռի միով, ընդ հովանեաւ վարսագեղ
կաղնւոյ։

Յայնժամ Զարեհ զահավէժ խոնարհեցաւ
ի ջուր անդր՝ որ ցուրտ էր իրրե զսառն և էարբ
անտի։ Այլ ի հասանելն ի տուն ծնողաց իւրոց՝
կալաւ զնա ջերմն սաստիկ։

Յոգւոց հանեալ ի մահիճս ցաւոց իւրոց՝ հա-
ռաչէր և ասէր. «Եւ ո՞ հաւատայր եթէ զուցէ
թոյն ժանիս յակն աղբերն այնորիկ»։

Ի լուր բանից նորա (ի լսել զբանս նորա),
ասէ ցնա հայրն. «Ո՞չ եթէ աղբերակն այն եղե
պատճառք խօթութեան քում, այլ զի անզզոյշ
զտար դու։ Պարտ էր քեզ յուշ ածել զոր յա-
նախն յեղյեղէի՝ եթէ չէ բարուք ի ջեռնուլ մար-
մնոյ ցուրտ ինչ առնուլ յարբութիւն»։



Ը

ԽՈՉ ԵՒ ՔԱՂԴԵԱՑ

Քաղդեայ է-մ քաւդեայ,	Ակահ, ուսվակ
Արփ, մ-ր-լ [մ-ր-լ-բ-ր-լ-ի]	Ի ճահ (մկ.), յարժար
Ի խոյզ է-մ ի խնդիր լինել,	Անճաշակ, համը շառնող
Բուտ, ճ-ր-տ-ի, է-ր է-ն-դ-ր-է-լ	Յար, Բլշ
Երկրարիր, հու բ-ր-ու	Երկրաքարչ, ավարհառէր

Խոզի, որ զնաց յուսումն առ ոտըս քաղդեայց՝
Գիտել զարփից երջան և զոլ աստղաբաշխ,
Հրամայեցաւ դիտել զաստեղըս երկնից։
Եւ ի չկարելն հայել ի վեր ընդ երկին,

Զի ցոռւկ և թ երկրաբիր
Տըւաւ նըմա ի խոյզ բըսոյ,
Պատգամ նըմա ետ վարժապետըն քաղղեայ,
«Երկրաւորին լինելով յար ի խնդիր,
Երկնաւորաց վասն այնորիկ չես ակահ»:
Ի ճահ առակս այս ա'յնոցիկ պատահէ,
Որք երկրաքարշ կենօք իւրեանց
Կան ուրացեալք յերկնայնոց:



Թ

ՇՈՒՆ, ԱՔԱՂԱՂ ԵՒ ԱՂՈՒՄ

Դաշն կռել, իսուսում ինչել	Գիրկս արկանել (ումեք),
Յուղի անկանել, համբայ եւլել	Զրձել, բշտրել [էրկել (Եկը)
Զհասարակ գիշերաւ, իւս	Ատամնացի (մկ.), ակույս
Ցեղակարծ, յանկարծ [էրկելն	Արմն, ին, արմառ
Ի կիր արկանել, էրդածել	Գուն գործել, ջանաւ

Շուն և Աքաղաղ դաշն բարեկամութեան
ընդ միմեանս կռեալ՝ անկան յուղի: Իբրև ի
վերայ եհաս գիշեր, երկոքեան ի քուն մը-
տին: Հանգեաւ Աքաղաղ ի վերայ միոյ ի ծառոց
և Շուն առ արմին նորա: Ի խօսել հաւուն
զհասարակ գիշերաւ, որպէս սովորն էր, լուաւ
Աղուէս զձայն նորա, և դիմեաց յայն կողմն. և
ի ներքոյ ծառոյն կացեալ՝ աղաչէր զնա իջա-

նել ի վայր, և յաւելոյր եթէ կարի ցանկալի էր
նմա զիրկս արկանել կենդանւոյ՝ որոյ յոյժ
քաղցը էր ձայն երգոցն: Պատասխանի ետ և
ասէ ցնա Աքաղաղ. Զարթո՛ նախ զդոնապանն՝ որ
ննջէ առ ստորոտով ծառոյն, զի կարացից իջա-
նել, եթէ բանայցէ ինձ: Եւ մինչդեռ գուն գոր-
ծէր Աղուէս արտաքս զբարապանն կոչել, խոյա-
ցաւ Շուն յեղակարծ ի վերայ նորա, և ձրձեալ
ատամնացի սատակեաց զնա:

Ցուցանէ առակս զի արք զգուշաւորք ի կիր
արկանեն բանս նարտարս՝ առ ի զինել ընդդէմ
թշնամեաց զբարեկամս իւրեանց:



Ժ

ՆԱՍՐԵՑՑԻՆ ԵՒ ԿՈՉՆԱԿԱԾՆՔ

Ճոխութիւն, հարսաւունիւն	Համադամ, ընդէր կերպեաւ
Առաջիկայ, ներկայ	Պաշտիլ, հրամաւիւն
Այլուր, ուրէլ ուել	Ելեելս առնել զիւրերօք,
Ի ճաշակ, ուրեւու համար	Զի, նէ լերաւու ներ հրցէլ
Արկանել զիւրել, հագէլս	Ի սպաս, ծառայեւու համար

Զի ճոխութիւն քան ըզհանճար մեծարի՝
Վկայէ այսմիկ առաջիկայս քեզ առակ:

Չոքաւ երբեմըն նասրէտտին

Հրաւիրանաւ ի ճաշ ընդ այլ կոչնականս,
եւ զի չէր ձոխ հանգոյն այլոց ըզզեցեալ,
Ոչ ոք լզնա պատուասիրեալ մեծարէր,
Ոչ ոք նըմին մատուցանէր ինչ ի ճաշակ,
Իսկ միւսանգամ այլուր ի ճաշ հրաւիրեալ,
Հանդեմս ի փոխ առեալ սամոյց մեծազին՝
Էարկ զիւրե, և զնաց անդըր բազմել:
Պըսակէին բաժակք, պատէր համադամ,
Եւ ելեկլը զիրերօք մինչ առնէին կոչնականք
Ի սպաս նորա և ի պատիւ երեսացն,
Ինքն առժամայն ըզձորձս յառաջ մատուցեալ,
Շիերայք, ասէ, ձորձք իմ, սամոյր իմ, դու կերտ
Յայտ իմն այսպէս արարեալ,
Թէ ո՞չ վասն իւր մեծապատիւ մեծարէր՝
Այլ վասն ընչից, ձոխ ի ձեռյն կարծեցեալ:

ԺԱ

ԹՌՉՈՒՆՆ ԿԱՐՄՐԱԼԱՆՔ

Ծնչել, իւչ:
Անդ, ընդոյ, նու-
կենակից, չնիւ, ու-նի:

Խնդալ, ու-նիւ-նու:
Յածել, ու-սոց-նել
Յօդել բարբառ, իւ-նել

«Թը՛կ, թը՛կ, թը՛կ» ձայնէր կտցաւն իւ-
րով թոշուն մի կարմրալանչ՝ կացեալ առ պա-
տուհանաւ հողագործի ուրումն, որպէս թէ ա-
սիցէ. «Ցի՞ս, տէր, բա՛ց ինձ, զի անկանին տա-
րափք ձեանց, չնչէ հողմն հիւսիսի, և ես սո-
վամահ կորնչիմ»:

Դրացեալ ի նա առնն, երաց զպատուհան
իւր, և թոշուն եմուտ ընդ այն ի ներքս, եւ
սկսաւ ժողովել զիւրան հացի անկեալս ի սե-
ղանոյ. Եւ յետ սուղ ժամանակի ընդելացաւ
մանկանցն որ ի տան անդ, մինչեւ զալ նմա եւ
ի ձեռանէ նոցա առնուլ զունդն՝ զոր մատու-
ցանէին նմա:

Այլ ի լուծանել ձեանց, եհաս զարուն, եւ
ծաղկեցան պարտէզք առ հասարակ: Ցայնժամ
երաց հողագործն զպատուհան իւր, և հիւրն այն
փոքրիկ թռեաւ ի մերձակայ անտառ ուրեք, եւ
ուրախութիւն մեծ եղեւ ընտանեացն, զի բեր-
յրէին ի լուր զուարթարար երգոց նորա:

Այլ ի զալ ձեռայնոյ եկն դարձեալ թոշունն՝
նդ իւր առեալ բերելով զկենակից իւր: Եր-
կոքին սոքա մեծաւ իմն վատահութեամբ մտին
ի խրճիթն յայն, և այսր անդը յածէին զաշ-
կունս իւրեանց առանց խրտչելոյ: Խնդացին յոյժ
մանկունքն եւ ասէին. «Թոշունքս այսոքիկ
թոշին մեզ ընդ առաջ՝ որպէս թէ ունիցին ինչ
ասել մեզ»:

Պատասխանի եռ հայրն և ասէ ցորդիս իւր.
Եթէ մարք էր նոցա յօդել բարբառ, ասէին
ցմեզ. «Ի բարեսիրութենէ ծնանի վստահութիւն».

ԺԲ

ԱՂՈՒԷ՛Մ ԵՒ ԱՐԱԴԻԼ

Տուժել, չունելու պահանջ
Աւշի, ահ, վե լիւն
Ասի, վաստին, էս դու-
Հոյժ, ըստ իստ նե

Իմէջ մատուցանել, գլուխ
Ցյազ, պահ իւրական լիւն
Սովալլուկ, անդինեն
Հաւ, բաշա լուրդուն

Խրատէ առակս ումեք երբեք մի՛ վնասել,
Իսկ որ վնասէն՝ արգարապէս տուժեսցի:

Աղուխու ասի ի ճաշ նախ նրաւիրեալ զԱրագիլ,
Պատրաստելով ի պնակի լոյժ կերակրիկ,
Զոր ճաշակել երբեք նրմա չէր նրնար:
Հրաւէր ապա արար և ինքն Արագիլ,
Եւ մատուցեալ լի՛ փշրանօք չի՛ ի մեջ,
Կըտուց ի ներքս արկանէ ինքըն ցըյազ,
Սովալլուկ ըզձաշակից իւր թողեալ:
Եւ մինչ ի զուր լիզոյր սա զուլն անօթոյն,
Աւանդի եթէ զայս բան խօսեցաւ հաւն.
«Համբերութեամբ պարտի կըրել
Որ ինչ այլում ոք արար»:

ԺԳ

Ե՛Ն ԵՒ ՊԱՐՏԻՉՊԱՆ

Հարկանել սպաս ծառա- յութեան, շուշուլ Ասի, վաստակել, անդուն Սուռն, Յեւ+ [հետուուր Աշխատ առնել, յունեցնել	Դուրզն, զան, բրուտէ ան- եալախորդ, իւչէ հաւըն- Բուռն, Յեւ+ [հետուուր Ցաւէ (զմզրկ. բայ), շուն- Աշխատ առնել, յունեցնել
---	---

Եւ որ սպաս ծառայութեան հարկանէր առ
պարտիզպանի ումեմն, ձաշակելով դոյզն ինչ և
վաստակելով յոյժ, աղացեաց զԱրամազի տալ
նմա զերծանել ի ձեռաց նորա, և վաճառել այ-
լում ումեք տեառն:

Լուաւ Արամազդ աղերսանաց նորա, և վա-
ճառեցաւ նա բրտի ումեմն. այլ անդ չարաշար
քան յառաջն ընկձէր ի վաստակոց ընդ ծանրու-
թեամբ բեռանց, դարձուցանելով զդուրզն անօ-
թոց կաւեղինաց: Ապա անդրէն խնդրեաց իւր
այլ տէր, և վաճառեցաւ ումեմն խաղախորդի:
Անկեալ ի բուռն տեառն յուեզունի բան զմիւսն,
և տեսեալ որ ինչ անցք անցանէին, հառաչէր և
ասէր. «Վա՛յ, վա՛յ, լաւ էր ինձ կալ մնալ ընդ
իշխանութեամբ առաջնոց տերանց իմոց, զի սա,
որպէս տեսանեմս, զմորթ իմ ևս աշխատ արաս-
ցէ յետ մահուան իմոյ»:

Ակնարկէ առակս ի սպասաւորս՝ ուռց ցաւէ
ընդ կարուս առաջին տեարց իւրեանց, մանա-
ւանդ եթէ առնուցուն զփորձ յետնոցն:

ԺԴ

ԳՈՐԾ ԵՒ ԱՐՁԱՌ

Նախանձ բերել, Հ-Ե-Ն-Յ-Ե-Լ Խորշումեալ, Բ-Շ-Շ-Շ-Շ-Ե-Լ Այտուցանել, Շ-Շ-Ե-Ն-Ե-Լ	Դիաթաւալ անկանել, Գ- Խանդալ, Հ-Ե-Ն-Յ-Ե-Լ [Ն-Շ-Ե-Ն-Ե-Լ] Գուն գործել, Ց-Ք-Շ-Ե-Լ
---	---

Նախանձ բերեալ ընդ մեծատան՝
Մատնի աղքատն ի կորուստ :

Գուրտով ըզկով տեսեալ ուրեք ի դաշտի,
Եւ խանդացեալ ընդ մեծութիւն մարմնոյ նորա,
Այտոյց ըզմորթըն խորշումեալ
Եւ հարցանէր ցորդիս իւր,
Եթէ Է՞ր հասեալ ի շափ արջառոյն :
Ասեն. «Ոչ»: Եւ ուռուցեալ սաստկագոյն,
Եհարց դարձեալ՝ Ո՞ սոււարագոյն էր յերկուց .
Նոքա ետուն պատասխանի թէ «Արջառ»:
Զայրացաւ յոյժ և մինչ զո՞ւն
Գործէր ուժգին ևս ուռնուլ,
Դիաթաւալ անկաւ յերկիր պայթուցեալ :



ԺԵ

ՀԱՍԿԻՔ

Յոյլ, Հ-Յ-Լ Զկծեցուցանել, Շ-Ե-Պ-Ե-Լ-Ե-Լ Յոխորտ, Ք-Շ-Շ-Ե-Լ [Ց-Ե-Շ-Ե-Լ]	Առակ արկանել, Շ-Ե-Ն-Ե-Լ Մնամէջ, Գ-Վ-Շ-Շ-Շ-Շ-Ե-Լ Վաստակասէր, Շ-Ե-Շ-Ե-Ն-Ե-Լ
---	---

Առն միոց էին երկու որդիիք: Մին ի նոցանէ
յոյլ էր և սնափառ, միւսն վաստակասէր և հեզ:
Եւ մինչ անդրանիկն ամբարտաւան զկծեցուցա-
նէր յոխորտ բանիւք զսիրտ կրտսեր եղբօրն,
լուաւ զայն հայր նոցա և արկ առակ մի այսպէս:
«Ի ժամանակի յորում հնձողք պատրաստէին
զմանզաղս ի հունձս, մի ի հասկացն ամ-
բարձեալ զզուկս իւր ի վեր՝ սնափառութեամբ
իւրէ ծաղր առնէր զայլս՝ որոց զլուկսք խոնար-
հեալ կային յերկիր: Յայնժամ ոմն ի նոցանէ
խօսեցաւ և ասէ.

«Թէ էր նո զըլուխ ատոք ի ցորեան՝
Ոչ այնքան ի վեր ամբառնայիր զայն»:

Ի սնամէջ խելապատակս լայնանիստ բնակէ հը-
պարտութիւն :



ԺԶ

ՆՐԱԾՈՅ ՊՏԱԱԲԵՐՔ ԵՒ ԱԻՂԵԽԱՐ

Տալ ի ճաշակ, ուստից հե-
Ֆրախտ, դուռեւ թագ ուն
Արուզ, շր, մաղամա-
ի նանիր, դուռը ուն

Դայեկել, մասնէ և դու-
Զամբել, ուն (իւրաքանչ)
Կշտամբել, յանդիմանել
Յար (մկ.), մը

Ի գրախաւ ուրեք ի ձմերայնի
Մըտանէ այր ուղեւոր
Քաղել պրտուղ ի ծառոց .
Եւ ոչ տերեւ յայնժամ զրտեալ ի նոսա ,
Թրենամանէր ամուլս արուզն ըզիսուին :
Առ որ մի ոմն ի նոցանէ պատասխանի ետ մեղմով .
«Մի՛ տըրտմիր, այր դու, և մի՛
Զմեզ ի նանիր բամբասեր .
Եթէ չիցէ մեզ զօրանալ ի ձմերայնի հանգստեամբ,
Չկարեմք ծաղկել զարնայնի ,
Եւ ոչ ըզմիրզս յամարայնի դայեկել՝
Առ ի տալ յաչնայնի զայնոսիկ ի ճաշակ՝
Ընդէ՞ր ոչ եկիր յայնժամ վայելել ,
Յորժամ մարդ եւ անասուն
Պրտղովք մերովք կերակրէր :
Թէ դու պատրաստ ի ճաշակել իցես միշտ ,
Բայց ոչ և մեք՝ յար ի ջամբել :
Սովին առակաւ յանդիմանի հիւր՝
Որ պահանջէ ճաշ ի տարաժամու :

ԺԷ

ԱՆՉՐԵՒ ՓՐԻՌԻԹԵԱՆ

Թափ անցանել, թափացել	Ասել ընդ ինքն, ինչնիքն ըեւ
Անհարթութիւն, ինչնիքն	Զի անմտացայ, ինչ ունիւ
Հանել հուր, իւսի ունիւ (իւն)	Թրմիլ, թրմիլ (անթիւն ըստ
Մարտկիկուշտանել, իւն	Վերնախնամք Տեսչութիւն,
Մնալ, ոդունէ թուսիւնի	Զգել, զգել (նսեւինահոնթիւն)
Զբաւիլ ի կենաց, հռակւ	Հուղկահար, ունակ

Վաճառական ոմն դառնայր յուղւոյ հեծ-
եալ ի ձի, և ունէր ընդ իւր քսակ լի արծաթով :
Իին անձրեւք և ողողեցին զնա՝ թափ անցեալ
ընդ մարմին նորա : Ակսաւ նա տրնիզել զՏեառնիէ ,
զի անհարթութիւնք օդոց խափան լինէին ուղե-
որութեան իւրում :

Եւ իրրեւ եմուտ յանտառ ուրեք, ետես հուղ-
կահար մի որ կայր առ եզերը ճանապարհին : Խոր-
հեցաւ այրն աւազակ ձգել զհրազէն իւր, այլ
զի թրմեալ էր վառօդն յանձրեւաց՝ չկարաց հա-
նել հուր, և վաճառականն մտրակ ի կուշտ ա-
րարեալ ձիոյն՝ զերծաւ փախստեամբ :

Եւ ի կալն յապահովի ասէր ընդ ինքն .
«Ո՞հ, զի անմտացայ յոյժ, զի ոչ զիտացի հան-
դուրձել տեղալոյ անձրեւաց : Եթէ երաշտ էին

ողք եւ պայծառ, արդ եւս զրաւեալ էի ի կենաց, և կին իմ և որդիք ընդունայն մնալոց էին դարձին իմում։ Անձրեւաւն որ ծանր թուեցաւ ինձ՝ վերնախնամ Տեսչութիւնն ետ ինձ պահապանել զկեանս իմ և զզոյս միանգամայն։



ԺԸ

ԳԵՂՉՈՒԿ ԸՆԴ ԸՆԿՈՒԶԵՆԵԱԻ

Բարձրածաղկ, ճիշտութեաց:	Ի բարձու, բացաւ ուն:
Ճահաւորիլ, յարմաքիւ	Ուր, պաշտե-
Ի միտս գալ, եւս քըս քու	Գլխովին, բարեւին:



Իմաստութեամբ եւ խորհրդով
Արար բնութիւն զամենայն։

Ընդ հովանեաւ ընկուզենոյ
Ընկողմանեալ շինական,
Եւ զբարձրածաղկ ծառոյն ըզմիրգսըն դիտելով
Փոքրութեամբ ի ծիլ նրբենի
Անդ առ արմին նորա աճէր ուռուցիկ.
«Քանի, ասէ, սա առաւել ճահաւորէր ի ծառին,

եւ փոխանակ դըղմոյ՝ ընկոյզն ի ծըղին։
Այլ մինչդեռ բանքըն դեռ կային ի բերան,
Մի յընկուզաց անտի անկաւ յընկողմնելոյն ի
ճակաս . . .
Յայնժամ ի միտս եկեալ՝ «Նընո՛րնք, ասէ, խնա-
մոց Արարչին,

Որ ի բարձու անդ եղ ըզմիրգըն մանրիկ.
Զի եթէ զմիւսն էր անդ եղեալ Աստուծոյ,
Արդ զաշկատ իմ յանկանելըն չախջախէր պղլ-
խովին։



ԺԹ

ԲԵԿՈՐՆ ՓԱՅՑԻ

Արկանել յարեւէ և յընչից,	Բուռն հարկանել զհետոց,
Ճեղանեւ և խուռեւ	Ճեղան եռեւ երիւա-
Ուշ ի կուրծս անկանել,	Յակն անկանել, աչին ունիւ
Ճնարք, ճիշտ լըս հոռեւ	Չուառական, ունիւ
Ցերիկէ, ունիւ ուսնէ	Ցուրաստ կալ, ուրանւ



Ի միում ի ձմեռնային սաստկաշունչ աւուրց
ընդ առաւօտն ուղեւոր ոմն դառնայր ի բնակու-
թիւն իւր՝ բարձեալ բերելով գումար մեծ ար-

Ժամանուի անդ ըմբռնեցաւ յաւաղակէ ումեմէ՝ որ արկ զնա յարեւէ և յընչից։

Մի ոմն ի պահապահնաց անտառին մինչդեռ շուրջ զբնայր ընդ այն, նշմարեաց նիշս արեան յեզեր ուղւոյն և բուռն հարեալ զհետոցն սկսաւ ընթանալ մինչև եզիտ զմարմին չուտուական ու դեւորին։ Ի ամին պիշերի Ատենակալն մերձակայ քաղաքին եկն ի Տեղի անդր յահիւք վառելովք, և յակն անկաւ նմա ի տեսարանի անդ եղերանն ըեկոր մի փայտի, որ թուէր իշեալ յոստախիտ գաւազանէ։ Էտո զայն և պահեաց ըգդուշութեամք։

Ի վայրի անդք ի մասնել իւլում յատեան խորիութեան, ետեւ յանկեան ուրեք որահին ըզգաւազան անզապահին, և մատուցեալ ի զնին՝ ժանեաւ զի պակասէր ի նա չիդ փայտի նման նմին՝ զոր բնքն յերիկէ զտեալ էր առընթեր դիական ուղեւորին։

Հարդմանէ ու ի կուրծս անկաւ նմա՝ եթէ անհպապահին զածեալ իցէ զեղեռնն զայն, եւ վաղգաղակի հրաման ետ ունել զնա ի դիպահու։

Մարդասպանն նախ յուրաստ եկաց ամենեւին, ոյլ իրրեւ ցուցաւ նմա ըեկորն փայտի՝ որ ի մահ զայր իւրում գաւազանին, հատան գոյնք երեսաց նորա, և խոստովան եղե զյանցոնան։ Դատապարտեցաւ անդէն ի մահ առաջի ամբոխի

բազմութեանն, որ հիացեալ զարմանային եթէ զիա՛րդ Նախախնամութիւն ի կիր արկանէ նարս դուզնաքեայս, առ ի յայտնել զծածուկ գործս չարութեան։



հ

ՀԱՅՐ ԵՒ ԱՐԴԻ

Հետեւակ, ուսում ուսուց	Զի՞նչ եւ սանել էր, ու Բա
Անցաւոր, ուսուց	Խնուլ, ուսուց [Հնու
Նուս, իւսուց (իւսուց, իւսուց)	Պարսուագէս, ուսուց ու
Ողնաբեկիւ, ուսուց ուսուց	Կազմ, ուսուց [Կ
Սաղսանել, ուսուց ուսուց	Անփոյթ սանել, ուսուց ու

Ուղևորէր հանդերձ որդւովքն պատանեաւ
Նաորէտախն,
Ինքն հետեւակ՝ յէւ ըզմանովկն հեծուցեալ։
Անցաւորաց ոմանց տեսալ զայն, սուն։
«Ցեսէ՛ք զորդի սասիսկ զի զնայ
Հեծեալ սոսյդ հաստկաւ,
Հետեւակել նօրըն տալով ծերունոյ։
Յայնժամ իշեալ մանկան, ըզհայրն հեծուցանէ
ի պրաստում,

Անցանեն այլք, անգութ ըզհայրըն կոչեն,
Զի զնայր հեծեալ
Եւ զհէք մանուկն աշխատ առնէր ի տօթի : —
Մերն ըզմտաւ ած եւ զորդին
Առնուլ ըզհետ իւր ի նոււ .
Եւս առաւել յայնժամ ի զրաստն ողորմեալ՝
«Ողնաբեկի արդ, ասեն, ա՛րք անողորմք, հէքն
յաւանակ» :

Զի՞նչ ևս առնել էր ներոյն
Առ ի խընուլ զիասաւակաց ըզբերան :
Ի՞նին յերկիր, զնային հետի երկոքեան,
Բզզրաստ ըզհետ իւրեանց անբեռն ածելով .
Եւ ոչ այնու պարսաւադէտք լրոեցին,
Դարձեալ անմիտը կոչելով ըզնոսա,
Զի զրաստ ունայի զէօն ընդ իւրեանս ածէին,
Ինքեանք վաստակեալք ի ճանապարհէն :

Այսպէս ուսոյց ներն ըզռամկին
Անփոյթ առնել դասաւան .
Զի պարսաւ կա՛զմ է և պատրաստ
Ի ստգըտանել զամենայն զործըս մարդկան .



ԻԱ

ԿԱՏՈՒ ԵՒ ՄԿՈՒՆՔ

Բնաւք, առնուլ Զերծ կալ, առաջ հաւ Թինքն ձգել, էւեւ ուշել	Նիւթել, ուսուցուել իւրէն Բեւեռեալ, բամաւաց Մարթ է, չըեւէ է
---	--

Բազմութիւն յոյժ էր Մկանց ի տան ուրեք,
զոր զիտացեալ կատուի՝ եհաս անդը, եւ ըմ-
բռնեալ զնոսա մի ըստ միոջէ՝ խեղդամահ ըս-
պանանէր : Տեսեալ Մկանց զի օր ըստ օրէ պա-
կասէր թիւ նոցա, ասեն ցմիմեանս . «Մի՛ եւս
իջուք աստի ի վայր, զի մի՛ մեզ ամենեցուն
հասցէ կորնչել . զիտեմք զի չէ՛ մարթ կատուի
ելանել մինչեւ ցայսը, և մեք զերծ կացցուք ի
վտանգից» : Եւ զի ոչ եւս իշանէին Մկունք, խոր-
հեցաւ կատու ձգել զնոսա յինքն՝ խորաման-
կութեամբն զոր նիւթեաց : Ել յօղամանեակ մի
երկաթի՝ որ ըեւեռեալ կայր ի ձեղուան անդ,
և կախեալ զայնմանէ՝ պատճառէր զանձն մեռ-
եալ : Բայց միոյ ի Մկանց անտի հանեալ ըզ-
զլուխ իւր արտաքս ըստ ծակն և հայեցեալ ի նա,
ասէ ցնա . «Բարեկա՛մ, եթէ եղիցիս իսկ պարկ
ալեր, ոչ մերձեցայց առ քեզ» :

Խրատեա՛ց այսու առակաւ՝ զի արք իմաս-
տունք, եթէ միանգամ առնուցուն զփորձ չարու-
թեան մարդկան, ոչ ևս այնուհետեւ անկանին
յորոգայթս նոցա :

ԻՐ ԳԱՐՄԵՂԱՒԱՅ

Բայց . Առներ	Արուեստակեր. որդինով
Պահ. Գումբ ԱՌԱՀ	Հայդ. Վեր. (ԱՌԿ)
Կայ ի պահ. զանգանդիմ	Մրցուց. Վեր.
Եփուոք. եղու. (ԱՆԿ)	Դրահ. բաշխանդիմ
Եւեր. Գոյշ	Մամակերտ. Խանչ. Յանձնա

Թէ բանիօն է առանել պատակար
Սզնել միտեաց և միարած ի միասին վաստակել,
Առաջիկայ օրինակաւըս ցուցից :

Հայեաց ի պար մեղուաց սփռեալ ի ծաղկունս,
Ո՞ւ ի նարզան, ո՞ւ ի ծոթոր, ո՞ւ ի վարդ.
Բարձեալ բերեն նոյզ ընդ երեկո ամոյց ի պահ
Խորըսիրն :

Արուեստակեն այլք ըզբըին մոմակերտ .
Եռուրի զարքայիւ այլք կան նոկեն թիկնապահի:
Կէսը ըզմանկարն՝ ըզլոյս զբոհն՝ դայեկեն,
Զեկաւուաց ըզբենն առնուն այլք ի բաց .
Եռայ վաստակեն ի փեթակին՝
Եւ ձմեւայնոյ վասն ամբարի պաշար մեծ .
Այսպէս մըրգուզն այն թըռչնիկ
Որ միայնակ՝ անձեռնուան է ի զորձ՝
Ո՞ւ զիւրն եւեթ լընու ըզպէս
Ի միասին վաստակելով ընդ ընկերոն,
Այլ և բազմաց պատրաստէ
Մեզը ի ձաշակ, բոյժ ի լոյս :

ԻՐ ՎԱՐԴԵՆԻ

Հարեալ. վարդակ, ըստ	Հանապազորդ (ած.), ուն-
Վարդակ, ունակն	ջեր. ուն. / Նորեալ
Բարդր, ինչ (Ըստ?)	Ի մասս լինել, լոր լունել

Կիոյ ուրումն աղբատի էր գուտստ մի՛ որ
անկեաց տունկ մի՛ մատաղ վարդենւոյ յանօթ
խեցեղէն, եւ եղ առաջի պատուհանի խցկանն
յորում բնակեր :

Եին աւուրի զարնայնոյ, եւ տունկն լի էր
բուրդիւք վարդից . Ի չեր ժամանակս թողոյր աղ-
ջիկն զվարդենին արտաքոյ պատուհանին, և ընդ
երեկո, իրրեւ արեւն ի մուտս լինէր, առնոյր
զայն ի ներքո :

Դէպ եղե զի ի ցուց երեկոյի միում մոռա-
ցու զնել զառւնկն ի պահեստի, և իրրեւ ել ընդ
տուաւոն՝ ետես զվարդենին ցամաքեալ՝ հար-
եալ յեղեմանէ . Հայեցեալ ի տունկն՝ լայր եւ
տուէր արտամութեամբ . «Անմտութիւն իմ միայն եղծ
ուն զարդիւնս այնշափ վաստակոց իմոց» : Յայն-
ժամ եւ պատասխանի մայրն եւ առէ . «Դոյզն
այդ պատահար՝ ընկ որ տըսմեալ ես և լոս՝ զայս
ինչ ուսուսցէ քեզ, դուստր իմ, զի զոր ինչ եղ-
եամն արար վարդենւոյդ որ ի ծաղկի էր, ըզ-
նոյն արասցէ անմեղութեան եւ ապականութիւն
բարուց . Արդ՝ մի՛ երրեք մոռանար, զի առ ի
պահելոյ զանձն ոուրը ի վաստակար ախտից՝
պէտք են փութոյ ինսմոց և հանապազորդ ըզ-
գուշութեան » :

ԻԴ

ՆԱՄՐԵՑՑԻՆ Ի ՀԱՐՍԱԿԻՑ

Առ ափ, վեհաշուն համբ	Զմրիլ, Բրել
Խուսն, բաշութիւն	Անապակ, շուշ քրէ
Մթափել, Էկտը էրւ դ-ւ	Ի վարանս լինել, էր-նիլ

Ի հարսանիս հրրաւիրեալ նասրէտտին՝

Ամբոխ բազում կոչնականաց ետես անդ .
Եւ առ անին գուցէ ի խոսն անդ կորիցէ ,
Զանգիկ յոտինն ի գարշապար եղ նըշան :
Արկան աթոռք , ըսկիզրն եղեն խնձոյից .
Պրսակեցան բաժակք , արրին արրեցան .
Եւ Մերունին իսկ զըմրեցաւ ի զինւոյն . . .
Յայնժամ մի ոմն յոտանէ նորա զզանգիկըն լուծեալ ,
Կապեաց յոտին այլու ուրու զայն մեղմիկ .
Եւ ի սթափել բազմականին յանապակէ և ի քնոյ՝
Ըզնըշանակ ձայնըն լրւաւ
Մերունին իւտ առընթէր ,
Եւ ի վարանս եղեալ՝ ընդ ինքն հարցանէր .
«Դա աւագիկ ես եմ , այլ ես ո՛ իցեմ» :

Այսպէս նա ցնորըս պատճառէր
Արրեցելոց առ ի խրատ :

—————

ԻԵ

ՊԱՇՈՒՆԵԱՑ ԱՆԿԵԱԼ ՅԻՇԽԱՆՈՒԹԵՆՔ

Ցասնուլ , բ-ը-ի-ն-ո-ւ	Քաջ զիտել , ը- է-ի-ն-ւ
Յանդորրու , է-է-շ-շ-ի-ն-ո-ւ	Յանձն լինել , շ-ն-յ-ն-ո-ւ
Բարձ , ո-ո-ի-ն-ո-ւ , ո-ո-ի-ն-ո-ւ [4Ե]	Պատճառք , ո-ո-ի-ն-

Թագաւոր ոմն ցասուցեալ ընդ զլխաւորն
իպաշտօնէից իւրոց՝ ընկենոյր զնա յիշանու-
թենէն . և զայլ ոք փոխանակ նորա կացուցա-
նէր . Սակայն ընորհս իմն առնելոյ վասն՝ թո-
ղոյր նմա ընտրել տեղի մի ուր ընակիցէ յան-
դորրու հանդերձ ընտանեօքն , և զամենայն ըս-
տացուածս ևս չնորհէր նմա : Բայց պաշտօնեայն
ասէ ցթագաւորն . «Զի՞ պիտոյ իցեն ինձ այսու-
հետեւ ինչքս զոր կամի արքայ չնորհել , միայն
աղաչեմ զի տացի ինձ հրաման ընակել՝ յիշա-
նութեան արքայի իմոյ՝ յանչէն վայրի ուրեմ :
Հաճոյ թուեցաւ թագաւորին յղել արս ի խնդիր
վայրաց , այլ որք առամեցանն՝ եկեալ պատմեցին
եթէ չիք յամենայն իշխանութեան արքայի զիւլ
կամ աւան և կամ վայր ինչ ընակութեան՝ որ ա-
մայի իցէ և անմշակ : Եւ ասէ պաշտօնեայն ցըթա-
գաւորն . Քաջ իսկ զիտէի , արքայ , թէ չիք ընաւ
վայր անչէն և ամայի յամենայն երկրին զոր
զարել յանձն եղեալ էր ինձ . և ի խնդիր ի-
լնրացք Ա. 7

մում տեղի ինչ այնպիսի՝ իմ խորհուրդ այս էր,
ոու պատճռոս զի անձամբ հասու լիցիս՝ եթէ
զի որդ էն և ծաղկաւէ գարձուցանեմ այսրէն
զերկիրս ի ձեռս քու Յայս բան՝ յուզեցան զութք
արքային, և վերստին կացոյց զպաշտօնեայն իւր
յառաջին բարձին.

ԻԶ

ԵՂՋԵՐՈՒԻ ԱԽ ԱՂՋԵՐ

Զկայ առնուլ, վայնէւ
Անդոսնել, որհուարդէւ
Ահարեկ, ուրուտէ
Փախուստառնուլ, փախէն
Բարակ, որով ըստ

Ի զերե հանել, դուռոց
Կոզր, գիշ վանի
Կառչիլ, գումաւ ինուլ
Դժնեայ, շու գիշ
Յօչիլ, վար վար աւու

Ար արհամարհ ինչ քեզ թըւի և անարդ,
Օքսակար խան զոր զովեսդ է յաճախ,
Վկայէ այսմիկ առաջիկայս քեզ առակ.

Եղջերուի զկայ առեալ յըմպելն առ աղրեր,
Եւ ի յալիս անդ զպատկեր իւր տեսեալ,
Մինչ ընդ եղջերսն ըսքանչանայր և զովէր,
Ըզուրուանացն անզոսնելով նըրբութիւն,
Ի ձայնէ որսորդաց յանկարծակի ահարեկ՝

Փախուստ ընդ զաշտն առեալ թեթև ընթացիւք,
Ըզբարակացն եհան ըզնիզն ի դերեւ.
Այս ի լինելըն միջամուխ ի մայրիս՝
Կառեան եղջերք իւր արգելեալ ի կողերս,
Դւ ի դժնեայ չանց խածատեալ յօշեցաւ.
Աւանդեն ի ժամ մահուն ասացեալ զայս.

«Վայ ինձ հիմ հիմիս, այժմիկ լինիմ խելամուտ,
Զի զորս անարգս համարէի՝
Ինձ պիտանիք եղեն յոյժ,
Եւ որ թոււին զովելիք
Զիս ի կորուստ մատնեցին».

ԻԵ

ԷՇՔ ՍԱԼԻՈՒԴԱՑ

Երեսկան, գիշուցի	Թարընկէց, ուր ւը նեռելու
Պատասխանի առնել, պա-	Մատակ, եւ լու ուր ուր
Բացագոյն, կուս [ուսկուսէլ]	Ծտապաւ, որու ուլուլ

Արք երեք յուղի անկեալ ի միասին երթա-
յին ի զիւղ ուրեք վասն զործոյ իրին: Տեսանեն
զձանապարհայն շինական մի որ զիմեալ զայր
առ նոսա շտապաւ, եւ յերեսացն տեսլենէ թը-
ւէր տիմարազոյն խան զամենայն մարդիկ: Ա-
սեն արքն երեքին ցմիմեանս, «Եկայք ծաղր
արասցուք զդա»: Եւ հեռացեալ կան ի վերայ
արասցուք զդա».

հանապարհին բացազոյն ի միմեանց իբրեւ բարենկեց մի: Երբեւ մերձեցաւ շինականն առ առաջինն՝ լուսաւ ի նմանէ զայս բան. «Ո՛ղջ լեր,
հայր Արքահամ»: և տինականին ընկալեալ զողջոյն նորա՝ ասաց նմա ողջ լինել: Երկրորդն ի նոցանէ՝ որ կայր սակաւ ինչ հեռազոյն անտի՝
ասաց ցշինականն. «Ո՛ղջ լեր, հայր Խսահակ»:
և նա զնոյն պատասխանի արար նմա: Ապա յառաջ մատուցեալ ետես զերրորդն՝ որ ասաց ցնա.
«Ո՛ղջ լեր, հայր Յակոբ»: Յայնժամ ի միտ առեալ տինականին՝ եթէ արքն այնոքիկ կատակէին
ընդ նմա՝ զայրացաւ և ասէ. «Խարիք, տեարք,
չեմ ես Արքահամ, ո՛չ Խսահակ և ո՛չ Յակոբ, այլ
Սաւուղ եմ՝ որդին Կիսեայ, և ելեալ եմ խընդրել զիս հօր իմոյ զկորուսեալս. այլ բա՛րէ, մերքն մատակք էին, իսկ զորս եսն զտի՝ արուք են:



ԻԸ

ԿՈՒԻ ՄԿԱՆՑ ԵՒ ԱՔՍԻՑ

Խաժամուժ,	մինլուր ժողու-	Կապելայ, գինեդուն
Վէպ,	պատճառած+	[Հոռոր]
Ի պարտութիւն մատնիլ,		Հապշտապ, արտէ արտէ
Անձաւ,	+արայր	[յաղնոսէլ]
Տալ ճակատ,	իւսուէլ	Անկանել, աղասոյանիլ
Աքիս,	իւնդանէ ճը (իւլինճէ+)	Սաղար, զօրավար
Լայնատարր,	ընդարձակ	Աւագանի, ուերանեան ճը մէ-
		Ազն, ինք, աշէ [Ճերը]

Ի պարտութիւն մատնեալ Մըկանց
Ի տալ ճակատ ընդ Աքսից,
— Որոց վէպք ի կապելայս նըկարին — ,
Մինչ դառնային ի փախուստ,
Հազիւ անկեալ ի նուրբ ի ծակս հապըշտապ՝
Զերծան ուրեմն ի մահուանէ մազապուր:
Բայց սաղարք նոցա՝
Որ կրէին եղջերս ի զլուխըս իւրեանց,
Նըշանաւորս ի ճակատուն երեւել՝
Զի զհետ իւրեանց ա՛յլ զօրականըն զայցէ,
Կառեան ի զրունս անդ եւ զերի ի թշնամեաց
վարեցան.
Զորըս զենեալ յաղթականին՝ սովեալ ժանեօք
ա՛ռ ընկլոյզ
Ի լայնատարր որովայնին ի յանձաւ:

Յորժամ արկածք չարեաց զազինըս շուրջ
պատեալ պաշարեն,
Վըտանզի աւագանին. իսկ խաժամուժըն դիւրաւ
Պատըսպարեալ գտանէ անձին ապաստան:



ԻՇ

Կ Ա Դ Ի Ն

Խորհուրդ առնուլ, ի՞ր հուրդ
Որեար (յոգ.), մարտիկ [ընել | Զէնընկէց լինել, շինչը զար
Ազգի ազգի, ուեսակ ուեսակ | Պաշտել, հրաժնել [դնել
Յարդիւնս ածել, իբադել | Վասնէր (իբրև դոյ.), ուոր-
Չեռս արկանել, յերբակալել | է զի, երբեք [հառ
Ի դիպահոջ, բանով մէջ | Զդողանի հարկանել, ուու-
Մնարք, էլիւան իւզը [դըլու

Կոմմն Հենրիկոս էր այր արդար եւ անաշառ: Այլ որչափ սիրելի էր նա բարեաց՝ այնչափ և ատելի էր ժանտ որերոյ: Ստահակք յոզունք՝ զորս ի դիպահոջ ունէր վասն չար զործոց իւրեանց՝ խորհուրդ առեալ՝ վարձս խոստացան միում յընկերաց իւրեանց զի ի վաղիւ անդը ի դիշերի սպանանիցէ զնա:

Ի նմին աւուր եղօրորդիք կոմմին յայց եկին առ նա: Հաճ եւ գոհ ընդ տեսիլ սիրուն մանկանցն, պաշտեաց անդէն նոցա՝ տանձ և խնձոր և ողկոյզս խաղողոյ, կաղին և միրզս ազգի ազգիս: Իբրեւ մեկնեցան նոքա, չոքաւ եւ կոմմն ի քուն մտանել՝ յանձն եղեալ ի պաշտպանութիւն Տեառն և ննջեաց:

Ի մէջ գիշերի մարդասպանն որ զաղտագողի մտեալ էր յապարանսն, եկն ի սենեակ անդը

և լուսով ճրագի՝ մերձեցաւ ի մահիճս կոմմին, ունելով յաջում դաշոյն մի սայրասուր:

Այլ յեղակարծում լսելի եղեւ ճայթիւն մեծածայն, և կոմմն ընդուստ ի քնոյ յարուցեալ ետես զչարագործն, և ի քթթել ական էառ ըզհրագէնն որ կախեալ կայր զսնարից մահճացն: Զդողանի հարաւ աւազակն, և զէնընկէց լեալ խնդրէր ի նմանէ չնորհել զկեանսն:

Յայնժամ կոմմին կոչեալ զսպասաւորս ի ձայն զանգակի, հրաման ետ նոցա՝ ձեռս արկանել յայրն, և նոքա կալեալ կապեցին զնա: Կամեցեալ ապա զիտել զվասնէրն աղմկին, որ զարթոյց ի քնոյ զկոմմն, տեսին զի մի ի մանկանցն արկեալ էր ի վերայ յատակի սենեկին կեղեւս կաղնոյ՝ զոր չարագործին արկեալ էր ընդ ոտիւք իւրովք ի գնալն: «Բարերար Տէր, գոչեաց յայնժամ կոմմն, վերնախնամ տեսչութեամբ քով կեղեւ ինչ կաղնոյ փրկեաց զանձն իմ ի մահուանէ և զյանցաւորն մատնեաց ի ձեռս արդարութեան»:

Այսպէս պատճառք դուզնաքեայք է զի իրս մեծամեծս ածեն յարդիւնս:



Լ

ԿԱՐՈՒԻԱՆ ԵՒ ԴԵՐՁԱԿ

Աւուրիպարէն, օքուան հուշը
Հարկանել զպէտս, դեռու
Նսէն, բոխու լիւծակը հուսէն
Դուռն, (Բարձրութայն) Դուռն

Մատաղիւր, յաժուրիւր
Ակնկալ, յանցուր, ողուր
Երկրորդ (արքայի), գոխ
Հոլովիւր, բանաւը լորուր

Ի մերձենալ բարեկամիդ՝ ըզզոյչ լեր
Մի՛ զիա առ քեզ համարել նոյն,
Զի փառք զբարըս փոխեն.

Կարուակ ոմն որ հազիւ
Նահէր զաւուրըն պարէն՝
Սիրով ումեմըն Դերձակի էր բարեկամ սիրեցեալ.
Միմեանց ըզպէտս հարկանէին մըտաղիւր.
Սա ըզնորին ըստ պիտոյից ըզիանդերձ,
Նա ըզսորին կարկատելով ըզկօշիկ:
Անուոյ բախտին հոլովելոյ ակրնկալի՝
— Որպէս յաճախ այս պատահէ ի վոսփոր —
Դաշն ընդ միմեանս եղին յիշել միշտ զիրեարս,
Եւ ինչան դաշինն Եւ նոյն էս ասել:
Զուարթ ի Կարուակն հայեցաւ բախտ,
Եկաց երկրորդ արքայի,
Եւ ի բազում պաշտօնէից շուրջ պատեալ՝
Բազմէր փառօք ի զահոյս:
Ել յետ աւուրց Դերձակն ի Դուռն
Առ ի լինիւր խնդակից,

Եւ մատուցեալ առ նա՝ Եւ նոյն էս ասէ:
Իսկ բարեկամըն նորա
Փոխեալ ըզբարսն ընդ նըսեհին՝
Պատասխանի ետ և ասէ.
Դա բեղետ նոյն իցես, Եւ վեհ ամուսն նոյն:



ԼԱ

Դ Բ Օ Շ

Ախտ,

Անուրջք,

Կարի իմն,

Համակ (մկ.),

Ողջանալ,

Յուշ առնել,

Այսգունակ,

Համարիւ,

Դերձակ ոմն անկեալ յախտ մահացու՝ տեսանէ զարմանալի ինչ յանուրչս: Թուէր իմն կալ նմա ի վերջնում ատենի դատաստանին, և հրեշտակն մահու կայր և պարզէր առաջի նորա դրօշ մի լայնատարած՝ կազմեալ ի կոտորոց ազգի ազգի կերպասուցն՝ զոր նորա խորեալ էր ընդ ժամանակս ժամանակս յիւրոց անտի յանախորդաց: Ի նմին ժամու մինչ մերձենայր հրեշտակն առ նա եւ կամէր զնա արկանել ի հուր զեհենին՝ երկիւլ անհնատին երկեաւ այրն... և յարեաւ ընդուստ ի քնոյն, ի քիրտն ցուրտ թաթաւեալ համակ:

Զայս երազ համարեալ նորա ազդ իմն յառածուածակոյս կողմանէ լեռլ՝ ուխտս եղ ոչ եւս զողանալ, եթէ ապաքինեցի ի հիւանդութենէն։ Յետ ոչ բազում աւուրց արդարե ովջացաւ Դերձակն ի ցաւոց անտի. և զի չէր վատահ յանձն իւր, պատուէր տայ միում ի գործաւորաց իւրոց՝ Յուշ առնել նմա զդրօչն զայն՝ յո՛րում ժամու եւ դէպ լիցի նմա հատանել հանդերձ ինչ։ Առ ժամանակ մի հաւասարիմ եկաց Դերձակն յուխտին. սակայն յաւուր միում ի հատանել իւրում հանդերձ մի ի կերպասէ մեծագնոյ՝ փորձեալ ի սատանայէ զողանայ դարձեալ մասն ինչ ի կտաւոյն։ Ի զուր ազդ առնէ նմա այրն յուշարար՝ ածել զմտաւ զդրօչն. իսկ Դերձակն ասէ. «Կարի իմն ձանձրացուցանես զլսելիս իմ դրօշիւդ, այր դու, զի ի դրօւ անդ՝ զոր տեսի ես յերազի՝ չզոյր կերպաս այսգունակ»։



ԼԲ

ՆԱՍՐԵՑՑԻՆ ԵՒ ԶՈՇԱՔԱՂՆ

Յանօթ առնուլ, ի՞ն առնուլ	Յայսմ նուագի, այս անդա՞ց
Զօշաքաղ, ադահ	Հատուցանել զպարտ մահ-
Յետ աւուրց ինչ, առնէ ճը	կանացուի, մեռնիւ
Տենչ, իսկած լոր եռտը	կորիւն, Յադ
Ճնկնել, Ճնիւ (անասսաններու)	Նշաւակել, իսյուառակել



Ի գըրացւոյ իւրմէ երբեմըն նասրէտտին
Յանօթ առնուլ կաթսայ մի՝
Ետ յետ աւուրց ինչ անդրէն
Միւս այլ աման փոքրիկ ընդ մեծ անօթոյն,
Երբ այն թէ ձագ էր ըզբոցովըն ցընկնեալ,
Երբ այն թէ ո՛չ կամէր զայլոյ ինչ խորել։
— Ըղձաղըն զայն էառ դրացին խնդութեամբ։
Աւուրք անցին, և միւսանդամ խնդրեաց Ծերն,
Եւ մըտադիւր զանօթըն զայն ետ դրացին,
Զի ծնանիցի միւս ալ թերեւըս կորիւն։
Այլ նասրէտտին յայսմ նուագի
Դրացւոյ իւրում երկայնաւուրըս մաղթեաց,
Որպէս թէ զպարտ մահկանացուի էր հատուցեալ
նէֆ սանին,
Եւ ի բառնալ նորին բողոք՝ թէ ի՞բըր սան մեռնէր,
Պատասխանի ետ խորագէտ Ծերունին։
«Եթէ ծնանի սան, և ընդէ՞ր
Զիցէ նըմա մեռանել»։
Նըշաւակեաց այսպէս նա զկո՛յը տենչ շահու։

ԼԳ

ՎԱՐՍԱՎԻՐԱՅՔ

Ի կիր արկանել, գործա-	Նշանագիր, գիր
Վիրալ, ստիւլ լծել	Հեղձնուլ, իւրուել
Վարսավիրայ, ստիւլ	Բուռն հարկանել, բռնել
Տաստակ, ստիրակ	Ծամք, ճաղ
Փոքրել, իտել (մաղերը)	Գիսակ, ճաղէ գունջ

հերս պիտակս, հսարեցաւ այսպիսի ինչ՝ զի առցէ զառաջս վճարուն եղելոյ նմա: Տայր և սա նը-կարել նոյնպէս ի տաստակի զԱրփսողոմ կախ-եալ ի հերացն զժառոյ, և ի ներքոյ զրէր զայս օրինակ. «Իցի՛ և պիտակ էին հերքն»:



ԼԴ

ԴԱՍՏԻԱՐԱԿ ԵՒ ՄԱՆԿՑԻ

Վարսավիրայ ոմն, որոյ գործ էր վիրալ ըզ-մօրուս և փոքրել զհերս, առ ի յաւելուլ զթիւ յաճախորդաց իւրոց՝ ետ նկարել ի տախտակի այսպիսի ինչ. — Այր ոմն անկեալ ի ծով և մերձ ի հեղձնուլ . . . այլ ոք զթացեալ ի նա զայր ի լիւղ՝ փրկել զնա ի մահուանէ . . . բուռն հարկանէր զիերաց նորա, եւ զի կեղծ էին ծամքն՝ գիսակքն եւեթ մնային ի ձեռին . . . ընկղմեալն կորնչէր ծովամոյն: Ի ներքոյ պատկերիս այսորիկ էր զրեալ մեծամեծ նշանազրօք. «Վայ, որոց պիտակ են հերք» . սովին յայտ իմն արարեալ եթէ սուտ վարսք մշասակարք են:

Այլ ոմն վարսավիրայ, որոյ արուեստ էր յօրինել վարսս պիտակս, իբրեւ տեսանէր զի բազումք՝ հրապուրեալ յօրինակէ անտի արուեստակցին իւրոյ՝ հրաժարէին ի կիր արկանելոց

Համբակ, սշիւրո
Կարթ, (չէնիւլ)
Պարան, շառան
Պարաւանդ, կաղ
Օր մի յաւուրց, օքն մէկը

Կենդանութիւն, Ուշու-
թիւն (իւր ըւնայ)
Ծանծաղ, երեսիւնէ, ու իւ-
Անժամ, առշաժամ [բունէ]
Իդէպ ժամու, յարժար սունչն

Վերակացուի պարտ է ըզզոյշ լինել միւտ
Ի հրահանգել ըզմանկունս,
Զի անխոհեմ խրատու իւրով
Օր մի յաւուրց արկանէ զանձն ի վըտանգ:

Ոմն յանըզզոյշ վարժապետաց պատուէր ես
Ի փըռնզալ իւրում ծափել մանկլրտոյ:
Աւուրք անցին, և անկաւ դոյն ի ջրհոր.

Վարժապետին կարթիւք աշխատ եղեալ յոյժ,
Ապա պարան ըստուար առ ինքն ետ բերել.
Եւ շուրջ ածեալ զանթովքըն զայն պարաւանդ,
Ասաց՝ ըզզոյշ իջուցանել զինքն ի դուք,
Զի զդոյլն ի վեր ածցէ անտի զպըլընձի:
Այլ ի փոնգալ իւրում ի յէջս անդ յանկարծ,
Թողեալ նոցա վաղվաղակի ըզպարանն՝
Անմիտ ծափիւք կենդանութիւն զոչէին:
Ի ծանծաղ ջուրց անտի առեալ
Վարժապետին ըզզուխն ի վեր՝
Ասէ անժամ հնազանդելոցն համբակաց.
«Ի դէպ ժամու, ո՛ յոյժ հնազանդ որդեակը իմ,
Կենդանութիւն ինձ մաղթէֆ»:

ԻԵ

ՍԼՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

Դարձ առնել, դառնաւ
Լոկ, սոսէ, պարու
Տալ զանձն փոխանակ (ու-
րուք), (մէկու ճշ) աւուը մէռնիւ
Վազել, շատիւլ
Պարապ, ստեն, մէջոց

Գրկախառն, ուրար գրիւն
Արտասուակցորդ, մէրեւ
Ժամանել, հասնէլ [լոյն
Յարտասուս հարկանիլ, լու
Ամբոխ, իրարանցուս
Հաղորդ լինել, մասնակցիլ

Իբրև Դամոն եւ Փիւթիաս բարեկամք մի-
մեանց դարձ առնէին ի Սիրակուսա, դէպ եղեւ
Դիոնիսեայ բռնաւորի ամբաստանութեամբ լոկով

դատապարտել զՓիւթիաս ի մահ: Խսկ մահա-
պարտն ինդրեաց պարապ, մինչեւ երթեալ ի
քաղաք մի՛ որ մերձ էր անդր՝ հրաման տայցէ
վասն իրաց իւրոց կարեորաց. եւ խոստացեալ
դառնալ ըստ ժամադրութեանն՝ մեկնեցաւ, քող-
եալ երաշխաւոր զԴամոն ի վտանգ մահու:

Յերկարացան իրք Փիւթիասայ, և ժամա-
նեաց օրհաս սպանութեանն: Ամբոխն խոնեալ,
կէսք պարսաւէին զԴամոն և կէսք աւաղէին զնա.
Խսկ նա խաղաղութեամբ երթայր ի մահ, վսահ
ի դարձ բարեկամին իւրոյ, յօժարագոյն եւս ի
տալ զանձն փոխանակ նորա:

Եւ իբրև եկն եհաս ժամն դառնութեան,
ահա ամբոխ աղաղակի ազդ առնէր զզալուստ
Փիւթիասայ: Դիմեաց սլացաւ նա ի տեղի պա-
տուհասին, մինչ շողայր սուսեր զզիսով բարե-
կամին, և զրկախառն արտասուակցորդք վիճէին
ընդ միմեանս, յափշտակելով իմն յիրերաց զբախս
Մեռանելոյ ընդ սիրելոյն: Ընդ որ տեսողացն
ամենեցուն յարտասուս հարեալ, և նոյն ինքն
բռնաւորն վազեալ յաթոռոյն՝ ինդրեաց չքնաղ
բարեկամութեան նոցա լինել հաղորդ:

Յուշ լիցի քեզ, որդեակ, բանն զոր ասաց
Տէրն մեր. «Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ու-
նի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկա-
մաց իւրոց»:



ԼԶ

ՆԱՍՐԵՑՑԻՆ ԵՒ ՆԱԽԱՎԱՐ

Պարզել առագաստ, —
[—դուր բանել
Սակ արկանել, ի՞ն իրեւ
կտաւ, իբր՝ մուտքու

Յայտ առնել, յարանել
երկ, դորձ, աշխարհան
Դէմդնել, ուշացիլ (երթա-
Յարաժամ, Գյու [լու])

Յաւուր միում դէ՛պ եղեւ
Նասրէտինալ նաւարկել,
Եւ էարկ հինգ դահեկանաց
Սակ ընդ տաճիկ նաւաստոյն:
Նա աջողակ հողմոյ պարզեալ զառագաստ,
Հասոյց ըզնիւրն ի դէմ եղեալ վայրն առանց թի
վարելոյ.
Եւ ի ինդրել ըզսակ վարձուն ի նմանէ,
«Հողմն ի կտաւին, ասէ, շընչեաց,
Եւ զնաւն ալիք մղեցին.
Թէ դու և ես նաւարկեցաք հաւասար,
Զի՞ դու յինէն խնդրես վարձ»:
Յայտ առակաւս այսուիկ արար Ծերունին,
Թէ իբր անվարձ քողու ուամիկն յարաժամ զերկ
հանճարոյ:



ԼԷ

ՕՐԻՆԱԿ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Ծեպել փութալ, ահութեւ ի գուճս անկանել, ծունէի Հանդէս, դուն, ըստ [դուն: Յարտասուս հարկանել, լու ի սպառ, մնալ վերը	Անսալ, ժոխի ընէ ի մի վայր, գէ ուն Յարտասուս հարկանել, լու Ապահարկ, ուսուեւ ունու
--	---

Նինականք երեք Սուետացիք ետուն զար-
մանալի ինչ օրինակ հայրենասիրութեան: Իբրև
եհաս յականջս նոցա համբաւ պարտութեան ար-
քային իւրեանց (Կարոլոսի ԺԲ. ի) և մեծի կարո-
տութեանն յորում գտանէր նա՝ ժողովեալ զա-
մենայն ինչս իւրեանց զոր ունէին՝ չոքան վա-
ճառել ի միում ի մօտաւոր քաղաքաց անտի. և
միոյն ի նոցանէ առեալ զգինս վաճառին և հեծ-
եալ ի ձի ձեպէր փութայր հասանել ի բանակ
անդր Սուետաց: «Ո՞ւր իցէ արքայ», զոչեաց
նա ի հեռուստ առ պահապանսն, «մուծէք զիս
առ նա, ունիմ ինչ ասել ցնա»: Մի ուն ի պա-
տօնակալացն անսացեալ նմա՝ էած զնա առաջի
արքային: Եւ իբրև եմուտ շինականն առ թա-
գաւորն՝ անդէն ի գուճս անկեալ եհան ի ծոցոյ
իւրմէ քսակս երկուս ոսկւոյ, մատոյց արքային
և պատմեաց եթէ զիա՛րդ բերեալ էր նորա ի մի
վայր զգումարն զայն հանդերձ երկոքումբք ըն-
կերօքն իւրովք: Ասի եթէ յարտասուս հարաւ
ընթացք Ա. 8

քազաւորն ընդ պատմութիւն առնեն՝ ասելով.
 «Ոչ ոք յազատաց իմոց եցոյց այսպիսի ինչ հանդէս հաւատարմութեան»։ Եւ խոստացաւ շինաւկանին ամբառնալ զնա յաստիճան աղնուականութեան ի հատուցումն եւ ի վարձ հայրենապիրութեան նորա։ Այլ ի չառնուլ նորա յանձն, և յընտրելն մանաւանդ կալ յիւրում աստիճանին ընդ վաղեմի բարեկամս իւր, ետ թաղաւորն զրել հրովարտակ մի՞ որով ի սպառ ապահարկ կացուցանէր զպատուական շինականն և զերկոսին ընկերս նորա, և ի նշան չնորհակալութեան խլեալ թելս ինչ ի մօրուացն՝ եղ ընդ մոմով կնքոյն՝ որով զհրովարտակն կնքէր։



ՀԸ

ՍԻՐԱՄԱՐԴԻ ԱՌ ՀԵՐԱ.

Զայնարկել, Յայն հանել
 Երփներանգ, Քոյնդոյն
 Ականակուռ, Քոհարներով Նոր-
 Բակ, Հրջնակ [Դարսած
 Էր, (սեռ. Զինչէ), Էնչո-
 Բնաւք, Ակնել

Զի՞ պիտոյ է լոնձ, Էնձէ Էնձ	Տուտն, Պուլ [պետք է
Եղջերուկ, ԱԵ- ադուս Ֆ	Գուժկան, Քոյժ ոռուող [(ողի)]
Յոյս պատրեալ, Յուսականու	Հերա, Տայր Դիշունէ Իւ [Ակն-

Սիրամարգի բողոք բարձեալ առ Հերա,
 Թէ Է՞ր ինքեան չէ չնորհեալ
 Ըզսոխակին դայլայլիկ,
 Որով նա յունկն ամենեցուն է սքանչելի,

Իսկ ինքն հաղիւ ձայնարկեալ՝
 Լինի բնաւից ծաղրելի։
 Առ ի սփոփել ըզնա ասաց Դիցուհին։
 ՃՍակայն զեղով գու յաղթես,
 Յաղթես քոյին մեծութեամբ։
 Գոյն ի յուլան քում զըմբըսոյ նըշողէ,
 Եւ երփներանդ փայլմամբ փեարոց
 Զականակուռ ըզբակ արտան քո պարզես։ —
 «Զի՞ բնաւ պիտոյ է ինձ անխօս կերպարան,
 Ուր ի ստորկ կամ ձայնիւ։
 Յաւել յայնժամ Դիցուհին։
 Ճկամօք բախտին այդպէս բաժին ձեզ տրւան,
 Քեզ գեղ, արծուոյ՝ զօրութիւն,
 Գուշակութիւն՝ ագռաւու,
 Սոխակի՝ երգ, հըմայք զուժկանք՝ եղջերկի.
 Եւ ընդ իւր ձիրս իւրաքանչիւրն է միշտ գոհ։
 Մի՞ ցանկանար այնըմ՝ որ չիցէ քեզ տրւեալ,
 Զի՞ պատրեալ յոյս քո դարձցի ի տրտունջ։



ՅԱԽԵԼՈՒԱԾ

ԲԱՐԴՈՒՄՆԵՐ ԵՒ ԱԾԱՆՅՈՒՄՆԵՐ



ԲԱՌԵՐՈՒ ԲԱՐԴՈՒՄՆԵՐ

1. Հայերէն լեզուի բառերն իրենց կազմութեան նայելով՝ պարզ կամ արմատ և բարդ կը կոչուին :

Պարզ կամ արմատ են առ հասարակ այն բառերն՝ որոնք չեն միացած ո և է բառի կամ մասնիկի մը հետ, ինչպէս. հաց, ջուր, օդ, հող, լոյս. իսկ բարդ են՝ որոնց վրայ աւելցած է ուրիշ բառ մը, ինչպէս. հացարար, մահաբեր, եղբայրասպան, կարճամիտ, ևայլն :

2. Բարդութեան մէջ՝ գոյականներու չափ գեր կը կատարեն ածական բառերը. իսկ ասոնցմէ դուրս ուրիշներն ալ պիտի տեսնենք յետոյ (հատուած 12) :

3. Բառերու բարդութեան ատեն՝ սովորաբար իբրև յօդակապ կը գործածուին առ և երբեմն ե կամ է գիրերը :

4. Բարդումի ընդհանուր կանոնն է առ կապել երկու բառերը, ըստ այսմ՝ եթէ մարդ և սէր բառերը բարդուին՝ կ'ըլլայ մարդասէր, սով և մահ, սովամահ, ևայլն :

5. Առաջին բառը կը պահէ իր հոլովական փոփոխումը այսպէս. ատեան եւ դպիր = ատենադպիր. զիր և զէս = զրագէտ. պատիւ և սէր = պատուասէր. պտուղ և բեր = պտղաբեր :

6. Երբեմն ալ այդ փոփոխումը տեղի չունեար եւ յօդակապն ալ զանց կ'ըլլուի, զոր օր. վրէժինդիր, զէնընկէց, օրհաս, ևայլն բառերուն մէջ :

7. Միևնոյն բառն ինքն իրմով կը բարդուի առանց առ յօդակապի, զոր օրինակ. Պէսպէս, բեկրեկ, ծործոր, վաղվաղ, և այս տեսակ բարդութեան մէջ երբեմն զիրին մէկը զանց կ'ըլլուի, ինչպէս. փոփոխ (= փոխփոխ), հեղեղ (հեղինեղ), կամ մեղմացում մը կը կրէ, ինչպէս. բարբառ (= բառբառ), կարկառել (= կառկառել), ևայլն :

8. Ինքն իրմով բարդուող բառ ալ կայ որ այօդակապը կ'առնէ, զոր օր. չարաչար, մեծամեծ, գունդագունդ, ևայլն :

9. Եթէ առվ կապուած բարդ բառերուն վըրայ ուրիշ մասնիկ ալ աւելցուի, սովորաբար առ կը զեղչուի կարճութեան համար, և վերջին բառը իր հոլովական փոփոխումը կը կրէ, եթէ պէտք կայ, ըստ այսմ Աստուածապաշտ բառը ածանցուելով կ'ըլլայ աստուածապաշտութիւն. մեծավայելուց, մեծվայելչութիւն. երկայնամիտ, երկայնմտութիւն, ևայլն :

10. Բարդութեան առեն բառերուն այսկապէ եի կամ էի կը փոխուի ընդհանրապէս, եթէ առաջին վանկը բազմագանկ ըլլալով՝ ի վերջաւորի այսպէս են. բարեկամ, գերեզարձ զինէար կամ զինէար, ծիրանեզգեաց կամ ծիրանազգեաց, ևայլն բառերը:

11. Եթէ նախադաս բառը ձայնաւորով վերջանայ եւ երկրորդն ալ ձայնաւորով սկսի, այօդակապը զանց կ'ըլլուի, զոր օր. ձիարշաւ, միեղջերու. նոյնը կը պատահի նաև երբ առաջին բառը բաղաձայնով վերջանայ եւ երկրորդը ձայնաւորով սկսի, ինչպէս. բանտարգել, մարդատեաց, ծովեզը, կենցաղօգուտ, ևայլն:

12. Մինչև հոս բարդութիւններն ուղղական հոլովով տեսանք, բայց պէտք է զիտնալ որ նոյն օրէնքին համաձայն սեռական ու հայցական հոլովներով ալ կը կազմուին անոնք, ինչպէս.

Սեռ. — Հօրաքոյր, կանանցարարոյ, անուանակիր, տաներէց, չարեացապարտ, ևայլն. Հայց. — Բանսարկու, կենսատու, օրէնսդիր, ևայլն:

13. Բաւ համարելով պարզ անուններով կազմուած բարդումները, քանի մը օրինակներով ալ տեսնենք հիմա բայարմատներէ, անցեալ դերայներէ, դերանուններէ, նախդիրներէ, մակրայներէ ձհացած բարդումները:

Բայարմատներէ. — դիւրիմաց, երկարակեաց, հրայրեաց, գէնընկէց, հեշտընկալ, ևայլն:

Անցեալ չերբայիներէ. — օիչելապառ, մեռելապիպ, ամէնօրհնեալ:

Դերանումներէ. — ինինարոյս, նայապէս, նոյնաշանչ, իւրաստեղծ:

Նախդիրներէ. — ցայզ, ցերեկ, ընդարձակ, սուաւել, զարդ, յօրինել, ևայլն:

Մակրայիներէ. — հանապազառուտ, միւսարուխ, դինարոյս, դժուարածին, ևայլն:

14. Բարդումի մէջ եթէ երկրորդ բառը բայրմատի զօրութիւն ունենայ, իր բային համեմատ՝ ներգործականի, կրաւորականի և չէզոքի միաբ կուտայ, ինչպէս. Տիրածին (զծէրն ծրնանող), կուսածին (ի կուսէն ծնեալ), մահացունչ (զման չնչող), խանձարրապատ (ի խանձարուրս պատեալ), դժուարալոյժ (դժուարալուծելի), ևայլն:

15. Գոյական գոյականի հետ բարդուած ատեն շատ անզամ իրարու յատկացուցիչ և յատկացեալ կ'ըլլան, զոր օր. Աստուածորդի (որդի Աստուծոյ), խոզերամ (երամ խոզից), զարեհատ (հատ զարւոյ), իսկ ընդհանրապէս երբ ածական մը գոյականի հետ բարդուի՝ բառը զրեթէ միշտ ածական կ'ըլլայ, զոր օր. Դառնաղէտ, քաղցրաբան, ևայլն:

16. Գոյական գոյականի հետ բարդուած ատեն՝ եթէ երկրորդը բայածականի միտք ունենայ՝ բառն ածական կ'ըլլայ, ինչպէս. արծաթասէր, մատենազիր, մսակեր, ևայլն:

17. Անեղական անունները իրենց ուղղականէն բարդուած ատեն եզակի կը զրուին թէ՛ առաջ և թէ ետքը, զոր օր. փառասէր, հրաշագործ, մեղապարտ, յօժարակամ, կորովամիտ, հրահոսան :

18. Երբ փոխանակ երկու բառէ ըլլալու՞ երեք կամ չորս բառերով ըլլայ բարդութիւնը՝ այն ատեն բառը կը կոչուի Յարաբարդ, ինչպէս . Միաբանասէր, ամանորաբեր : Այդ յարաբարդութիւնը հրաշալի արդիւնք կուտայ, մանաւանդ մեր արդի լեզուին մէջ՝ եթէ միավանկ բառերու շարքով մը ձևանայ, ինչպէս է լուսավիմագրութիւն զիտական բառն ու նմանները :



Բ

ԲԱՌԵՐՈՒԻ ԱԾԱՆՑՈՒՄՆԵՐ

19. Ածանցիկ են այն բառերն՝ որ թէ՛ պարզ ըլլան և թէ՛ բարդ, իրենց սկիզբը կամ վերջը եւ կամ երկու ծայրերուն վրայ միանգամայն մասնիկ մը կ'ունենան : Այդ մասնիկները՝ թէպէտե առանձնապէս չեն գործածուիր, բայց գոյականներու սկիզբը կամ վերջը դրուելով՝ անոնց նշանակութիւնը կամ իմաստը կը փոխեն, զոր օր. գեղ, սգեղ, գեղեցիկ . մեղք, անմեղ, մեղաւոր. կար, սկար, սկարութիւն, ևայլն :

20. Բառերու սկիզբը առանց յօդակապի կցուող սովորական մասնիկներն են, ան, ս, չ, որ կը կոչուին ժխտական մասնիկներ, որովհետեւ բառին նշանակութիւնը հակառակին կը շրջեն . ասոնցմէ ս մասնիկը բաղաձայնով սկսուած զոյական բառերու կը կցուի . և զանոնք ընդհանրապէս ածականի կը փոխարկէ . ինչպէս՝ սձև, սմոյն, սգէտ, ևայլն : Իսկ ան եւ չ ժխտական մասնիկները թէ՛ գոյական եւ թէ՛ ածական բառերու վրայ կը դրուին, զոր օր. խոհեմ, անխոհեմ . արի, անարի. ամօթ, անամօթ. չնորհ, անշորհ . Աստուած, չաստուած . հաւատալի, չհաւատալի . աջողութիւն, չաջողութիւն :

21. Այս ժխտական մասնիկներէն կը համարուին նաև ապ և դժ, որ նոյնպէս բառերու ըսկիզբը կը կցուին, զոր օր. ապերախտ, ապօրէն, դժգոհ, դժգոյն կամ սժգոյն :

22. Բազմաթիւ են այն մասնիկներ՝ որոնք անուններու վերջը դրուելով անոնց նշանակութիւնը կ'եղանակաւորեն եւ ածանցիկ բառեր կ'ընեն զանոնք : Եւ ասոնք են ստէպ գործածականները . ական, ային, աւոր, եղէն, արան, ոյթ, իւն (և երկուքը մէկ՝ ութիւն) :

23. Ինչպէս բարդումներու մէջ տեսանք (հատուած 12), ածանցիկներն ալ հետևեալ հոլովներով կընան ձևացուիլ :

17. Անեղական անունները իրենց ուղղականէն բարդուած ատեն եղակի կը զրուին թէ՛ առաջ և թէ ետքը, զոր օր. փառասէր, հրաշագործ, մեղապարտ, յօժարակամ, կորովամիտ, հրահոսան:

18. Երբ փոխանակ երկու բառէ ըլլալու՝ երեք կամ չորս բառերով ըլլայ բարդութիւնը՝ այն ատեն բառը կը կոչուի Յարաբարդ, ինչպէս. Միաբանասէր, ամանորաբեր: Այդ յարաբարդութիւնը հրաշալի արդիւնք կուտայ, մանաւանդ մեր արդի լեզուին մէջ՝ եթէ միավանկ բառերու շարքով մը ձեանայ, ինչպէս է լուսավիմագրութիւն դիտական բառն ու նմանները:



Բ

ԲԱՌԵՐՈՒ ԱԾԱՆՑՈՒՄՆԵՐ

19. Ածանցիկ են այն բառերն՝ որ թէ՛ պարզ ըլլան և թէ՛ բարդ, իրենց սկիզբը կամ վերջը եւ կամ երկու ծայրերուն վրայ միանգամայն մասնիկ մը կ'ունենան: Այդ մասնիկները՝ թէպէտե առանձնապէս չեն դործածուիր, բայց գոյականներու սկիզբը կամ վերջը դրուելով՝ անոնց նշանակութիւնը կամ իմաստը կը փոխեն, զոր օր. գեղ, սգեղ, գեղեցիկ. մեղք, անմեղ, մեղաւոր. կար, սկար, սկարութիւն, ևայլն:

20. Բառերու սկիզբը առանց յօդակապի կցուող սովորական մասնիկներն են, ան, ս, չ, որ կը կոչուին ժխտական մասնիկներ, որովհետեւ բառին նշանակութիւնը հակառակին կը շրջեն. ասոնցմէ ս մասնիկը բաղաձայնով սկսուած գոյական բառերու կը կցուի. և զանոնք ընդհանրապէս ածականի կը փոխարկէ. ինչպէս՝ ՏՃԱ, ՏՄՊՅՆ, ՏԳԷՄ, ևայլն: Իսկ ան եւ չ ժխտական մասնիկները թէ՛ գոյական եւ թէ՛ ածական բառերու վրայ կը դրուին, զոր օր. ԽՈՒԵՄ, անխոհեմ. արի, անարի. ամօթ, անամօթ. ՀՆՈՐԻ, անշնորհ. Աստուած, չաստուած. հաւատալի, հաւատալի. աջողութիւն, չաջողութիւն:

21. Այս ժխտական մասնիկներէն կը համարուին նաև ապ և դժ, որ նոյնպէս բառերու ըսկիզբը կը կցուին, զոր օր. ապերախտ, ապօրէն, դժգոհ, դժգոյն կամ սժգոյն:

22. Բազմաթիւ են այն մասնիկներ՝ որոնք անուններու վերջը դրուելով անոնց նշանակութիւնը կ'եղանակաւորեն եւ ածանցիկ բառեր կ'ընեն զանոնք: Եւ ասոնք են ստէպ գործածականները. ական, ային, աւոր, եղէն, արան, ոյթ, իւն (և երկուքը մէկ՝ ութիւն):

23. Ինչպէս բարդումներու մէջ տեսանք (հատուած 12), ածանցիկներն ալ հետևեալ հոլովներով կընան ձեացուիլ:

Ուղղ. — մայրենի, արիութիւն, ձմեռնային :
Սեռ. — ֆեռական, ուսմաւոր, գեղջուկ, քաղմանական :

Տրա. — ինձէն, ֆեզէն, մեզէն, ձեզէն :
Գործ. — արամբի, կանամբի, իւրովի, զլխովին :
Հայց. — կենսական :

24. Ածանցական մասնիկ կը համարուին նաև եմ, անեմ, ամ, անամ, իմ, անիմ, եւ ում, նում, (= չիմ եւ նչիմ), բայերու լծորդութեան վերջաւորութիւնները :

25. Կան բառեր ալ՝ որ կրկնակի ածանցուած ըլլալով՝ կ'ըսուին կրկնածանց, ինչպէս. վրէս, վրիպակ, վրիպականութիւն. մահ, մահական, մահանացու, ևայլն :

26. Տեսնենք հիմա ածանցական մասնիկներու կատարած զլխաւոր դերերը հայերէնի մէջ :

Ա. Ական եւ այն վերաբերութիւն մը կը ցուցնեն, ինչպէս. քաղաքական, քրիստոնէական, լեռնային, ծովային, երկնային, ևայլն :

Բ. Արան, անոց, ոց, տեղ կամ ընդունարան կը նըշանակեն, ինչպէս. վարժարան, դիտարան, որբանոց, դպրոց, ևայլն :

Գ. Առոր, կամ ոռոր՝ ունեցող կամ վրան կրող կը նշանակէ, ինչպէս. թաղոստ, սգոստ, զինոստ կամ զինոսոր :

Դ. Եղին, որով բանի մը ինչ նիւթէ ըլլալը կ'իմացուի, զոր օր. փայտելէն, լուսելէն, հողելէն, ոսկելէն, ևայլն :

Ե. Եայ, որ բանի մը ինչէ տինուած կամ բանուած ըլլալը կը ցուցնէ, ինչպէս. ծաղկեայ, մարգարտեայ: Երբեմն կը ցուցնէ նաև բանի մը ո՛րչափ ժամանակուան ըլլալը, ինչպէս. չորեքօրեայ, հինօրեայ, և երբեմն ալ ունեցող նշանակութիւնը կուտայ, զոր օր. բազմաչեայ:

Զ. Եան՝ որ կը նշանակէ սերունդ կամ ծագում, ինչպէս. Ասքանազեան, Խարայելեան: Նաեւ ունեցող նըշանակութիւնը կուտայ. վեցթևեան, գունեան:

Է. Եւ որ կը ցուցնէ առատութիւն, լաւ կամ գովական իմաստով ընդհանրապէս, ինչպէս. հանճարեւ, ընչեւ, համեւ:

Ը. Ուր որ առատութիւն կը նշանակէ գէշ կամ պարսաւական իմաստով ընդհանրապէս, ինչպէս. տըղմոսոր, քարոսոր, աւազոսոր, եւայլն:

Թ. Ուր մասնիկն ալ որ ունակութիւն կամ ախս կը ցուցնէ, զոր օր. քոսոր, բորոսոր, նախանձոր, երկուոր, ուորին նման կը գործածուի պարսաւական իմաստով:

Ժ. Ենչ՝ որ ընդհանրապէս եթէ պտուղ ցուցնող բառին վերջը գրուի՝ անոր ծառը կը նշանակէ, իսկ եթէ կենդանեաց անուններու վրայ գրուի՝ անոնց մուրը կամ միսը կը նշանակէ, ինչպէս. խնձոր, խնձորենի. թութ, թթենի. — առիւծ, առիւծենի (առիւծի մորթ). ուլ, ուլենի (ուլի մորթ). խոզ, խոզենի (խոզի միս): Ծառերու անուններն երբեմն չով ալ կ'ածանցուին ինչպէս. սերկեւիլ, սերկեւլի. կաղին, կաղնի: — Պէտք է գիտնալ նաեւ որ՝ Ենչ, անչ, չ, մասնիկներն ուրիշ բառերու վերջն ալ կցուելով՝ անոնց այլ եւ այլ նըշանակութիւններ կուտան, ինչպէս. երկաթի, արծաթի, ասղանի (դերձան), մատոնի, հայրենի, մայրենի, այրի, կորովի:

ԺԱ. Ի՞ կամ ա՞ մասնիկները նուազութիւն, փոք-
րութիւն եւ կամ փափկութիւն կը ցուցնեն, զոր օր.
հացի, խցի, հայրի, դստրի, նաւակ, գետակ, որդեակ
(իբր՝ որդիակ): Ակը կը գործածուի նաեւ ձեւ կամ
յատկութիւն նշանակող բառերու համար. — բոլորակ, շըր-
ջանակ, արդարակ, քանակ, տեսակ, որակ, եւայլն:

ԺԲ. Որտ՝ որ արհես կամ գործ կը ցուցնէ, ինչ-
պէս. որսորդ, նաւորդ, սայլորդ:

ԺԳ. Ցէ՝ որ կը ցուցնէ թէ մէկը ո՞ր երկրեն կամ
հայրենիքն է, ինչպէս. Երուսաղեմացի, Երեւանցի,
Եւրոպացի:


ԺԴ. Ցու՝ որ պատճենի կամ վիճակի մը սահման-
ուած անձը կը ցուցնէ, զոր օրինակ քահանայացու,
հարսնացու, տիրացու:

ԺԵ. Ուն՝ որ պարզապէս ունեցող կը նշանակէ,
ինչպէս. շարժուն, թռչուն, սողուն:

ԺԶ. Աւետ՝ որ առատութիւն կը նշանակէ, զոր օր.
ծաղկաւէր, խոտաւէր, օդաւէր:

ԺԷ. Առ՝ որ մարմնին մէկ մասին կամ անդամին
կտրած ըլլալը կը ցուցնէ, ինչպէս. լեզուար, ականջար,
թլուար (*):

27. Կան տակաւին այլ և այլ մասնիկներ, ինչպէս.
Էւ կամ ու, ուն կամ իւն, քին կամ քոյն, ոյց, ուսած, ած,
ուրդ, արդ, եւայլն, որոնց կարեւորութիւնը եւ նըշա-
նակութիւնը ընթերցումով կրնայ սորվիլ աշակերտը:



(*) Այս վերջի ուն, աւէս, աս մասնիկներէն առաջինը
ունել բային արմատը կը համարուի, իսկ աւէսը նոյն է յաւէս
բային հետ, և ատը հատանելէն կուգայ. ուստի և իբենցմով
շինուած բառերը կարելի է բարդ նկատել քան ածանցիկ:

ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒԻ

ԶԵԿՈՅՑ

	ՀԶ
Թղենին անպտուղ	5
Նախանձ տան Տեառն	6
Առաջինն ի պատուիրանս	7
Առ տիս մանկսւթեան (Քերբուած)	9
Պատանին պատուիրանապահ	10
Փարիսեցին և մաքսաւոր	11
Երկու լումայք կնոջն այրւոյ	12
Գոհութիւն ի վերջ տարւոյ (Քերբուած)	14
Բժշկել ի Շաբաթու	15
Կուսանքն իմաստունք և յիմարք	17
Մի՛ բարձընտիր լինել ի կոչունս	19
Վասն ընտրելոյ զպայման կենաց (Քերբուած)	20
Տալ զկայսերն կայսեր	22
Զուրն կենդանի	23
Հրաւէր հարսանեաց	25
Աղօթք Տէրունական (Քերբուած)	27
Մեծատունն յուսացեալ յինչս իւր	28
Տրտունջք մշակացն	30
Մերմանացանն	32
Աղօթք երեկոյի (Քերբուած)	34
Մշակք այգւոյն	34
Անառակ որդին	36
Զղջումն առ Աստուած (Քերբուած)	38
Սամարացին	39
Այլակերպութիւն	40
Ուրախութիւն ընդ դարձ մեղաւորի	41

Վախճան ամպարշտաց (fերբուած)	43
Մեծատունն անողորմ	44
Հնթրիք Բաղտասարայ	45
Ողորմածութիւն Տովբիթայ	47
Արտասուք Յիսուսի մանկանն (fերբուած)	49
Սողոմոն Խնդրէ յԱստուծոյ զիմաստութիւն	50
Գութ մայրենի	52
Անանիա եւ Սափիրա	54
Սէր տան Տեառն (fերբուած)	55
Եղիա և ողջակէզ իւր	57
Ապաշխարութիւն Նինուէացւոց	59
Առեղծուած (fերբուած)	61
Դաւիթ և Գոլիաթ	62
Դաւիթ և Աբիսողոմ	65
Յովսէփ և եղբարք նորա	67
Երգ ի Ծնունդ Փրկչին (fերբուած)	69
ԱԶԴ	71
Մեր ոմն և մահ	72
Նասրէտտին և պարտատէրն (fերբուած)	72
Այգի	73
Եսովպոս և ստահակ (fերբուած)	74
Գայլ և Կոռւնկ	75
Արջ սովեալ (fերբուած)	75
Աղքերակն	76
Խոզ և Քաղղեայ (fերբուած)	77
Շուն, Աքաղաղ և Աղուէս	78
Նասրէտտին և կոչնականք (fերբուած)	79
Թռչունն կարմրալանջ	80
Աղուէս և Արագիլ (fերբուած)	82
Էշ և պարտիզան	83
Գորտ և Արջառ (fերբուած)	84

Հասկը	127
Մառք պտղաբերք և ուղեւոր (fերբուած)	85
Անձրեւ փրկութեան	86
Գեղջուկն ընդ ընկուզենեաւ (fերբուած)	87
Բեկորն փայտի	88
Հայր և որդի (fերբուած)	89
Կատու և մկունք	91
Պար մեղուաց (fերբուած)	93
Վարդենի	94
Նասրէտտին ի հարսանիս (fերբուած)	95
Պաշտօնեայ անկեալ յիշանութենէ	96
Եղջերու առ աղբեր (fերբուած)	97
Էշք Սաւուղայ	98
Կոիւ մկանց և աքսից (fերբուած)	99
Կաղին	100
Կարուակ և գերձակ (fերբուած)	102
Դրօշ	104
Նասրէտտին և զօշաքաղն (fերբուած)	105
Վարսավիրայք	106
Դաստիարակ և մանկտի (fերբուած)	108
Սէր բարեկամութեան	109
Նասրէտտին և նաւավար (fերբուած)	110
Օրինակ հայրենասիրութեան	112
Սիրամարդ առ Հերա (fերբուած)	113
ՑԱՒԵԼՈՒԱԾ	114
Ա. Բառերու բարդումներ	116
Բ. Բառերու ածանցումներ	120
Ցանկ նիւթերու	125





ԹՎԱՅՆԱԳՄԱՆ համար